ՌԻՉԱՐԴ
ՎՈՒՐՄԲՐԱՆԴ

ՄԱՐՔՍԸ ԵՎ ՍԱՏԱՆԱՆ

ՌԻՉԱՐԴ
ՎՈՒՐՄԲՐԱՆԴ

48 C
612

ՌԻՉԱՐԴ ՎՈՒՐՄԲՐԱՆԴ

ՄԱՐՔՍԸ ԵՎ ՍԱՏԱՆԱՆ

WÜRTT. LANDESBIBLIOTHEK STUTTGART

Միջազգային Քրիստոնէական Միութիւն
Հրատարակչութեան Մասնաճիւղ
B.P. 721, 8280 Kreuzlingen, Suisse

Նախնական հրատարակչութեան խորագիր
Մարքս եւ Սատանան by Crossway Books

Հրատարակուած Ա.Մ.Ն. 1986

Հայկական հրատարակչութեան բոլոր իրաւունքները
կը պատկանին LITERA PRINT AG, CH-8280 KREUZLINGEN
Copyright - 1993, Première Edition 1993

Թարգմանող – Մ.Ջ.

Արտադրիչ - Stephanus Druck, D-7772 Uhldingen

Բոլոր իրաւունքները :

Այս գործը կարելի չէ վերատպել կամ փոխանցել
նոյնիսկ մասամբ որեւէ ձեւի տակ կամ որեւէ միջոցով '.
մեքենական կամ ելեկտրոնիք, արձանագրել կամ պահել
առանց հրատարակիչի գրաւոր արտօնութեան :

48C/612

Ռիչարդ Վուրմբրանդ

Մարքսը և սատանան

Բովանդակություն

Առաջաբան 5
Հավատափոխություն 7
Ընդդեմ բոլոր աստվածների 18
Խարխլված հավատ 41
Ջափազանց ուշ է 46
Նողկալի նմանակում 65
Հոգևոր պայքար 75
Մարքսը, Դարվինը և հեղափոխությունը 91
Լույսի հրեշտակները 95
Մի՞թե ամեն ինչ թույլատրելի է 99
Լենինի չիրիմը 101
Ո՞ւմ ենք ուզում ծառայել 105
Մա՞րքսը, թե՞ Քրիստոսը 111
Հավելված. Կարո՞ղ է լինել քրիստոնեական կոմունիզմ
«Քրիստոնեական» մարքսիստական աստվածաբանություն 111

Առաջաբան

Այս գրքույկն ընդգրկում է մի քանի տեսակետներ մարքսիզմի և սատանայապաշտության հնարավոր աղերսների մասին:

Դեռ ոչ ոք համարձակություն չէր ունեցել արծարծելու այս թեման: Ահա թե ինչու ես զգույշ, նույնիսկ երկյուղածությամբ էի մոտենում փաստերին: Սակայն, ժամանակի ընթացքում, թղթապանակներումս ավելի ու ավելի շատ ապացույցներ և այնպիսի փաստարկներ կուտակվեցին, որ, հուսով եմ, ընթերցողին կստիպեն զգուշանալ կոմունիզմին ներհատուկ հոգևոր վտանգից:

Այսօր մարքսիզմն իշխում է մարդկության մեկ երրորդին:* Եթե հնարավոր լիներ ցույց տալ, որ այս շարժման հեղինակներն ու պրոպագանդիստներն իրականում սատանայի գաղտնի երկրպագուներն էին ու կանխամտածված ձևով ի կատար էին ածում նրա ծրագրերը, այդ դեպքում երևույթների նման գիտակցումն ու ըմբռնումը չէ՞ր մղի արդյոք կոնկրետ գործողությունների:

Ինձ բոլորովին չի զարմացնում, որ շատերը մերժում են իմ դրույթները, չնայած դրանք հիմնավորված են:

Գիտությունն ու տեխնիկան առաջանում են հսկայի քայլերով, քանզի մենք միշտ պատրաստ ենք դեն շպրտել հնացած սարքերը, որպեսզի ընտրենք ավելի կատարելագործվածները: Ամեն ինչ այլ կերպ է սոցիոլոգիայի կամ դավանանքի ոլորտում: Գաղափարների կյանքը երկար է, և մտածողությունը, ի տարբերություն հաշվիչ մեքենայի թերթիկի, հեշտությամբ չի փոխվում կամ փոխարինվում: Նույնիսկ նոր փաստերը կարող են համոզիչ չթվալ: Որոշ մարդկանց ողջամտության «դռների ծխնիները» ժանգոտված են: Ուստի դրույթս հիմնավորելու և ավելի համոզիչ դարձնելու համար, առաջարկում եմ հավանական ու հնարավոր փաստարկներ և խնդրում եմ դրանք ուսումնասիրել ամենայն ուշադրությամբ:

Կոմունիստներն, անշուշտ, հաշվի են առել այս գրքի հնարավոր հետևանքները, գիրք, որն արդեն թարգմանվել է ռուսերեն, չինարեն, ռումիներեն, գերմաներեն, սլովակերեն և այլ լեզու-

---

* Գրված է 80-ական թվականներին (Ծ. Հրատ.):

ներով: Այն մաքսանենգային ճանապարհով և մեծ քանակությամբ թափանցել է նաև Երկաթե Վարագույրից այն կողմ: Արևվելյան Բեռլինի «Deutsche Lebrezeitung» թերթը «Մարքսին ոչնչացնողը» հոդվածում մեծ խանդավառությամբ գիրքս անվանել է «ամենահամարձակը, ամենամարտականը և ամենաանողոքը՝ Մարքսի դեմ գրված բոլոր աշխատություններից»:

Հնարավո՞ր է արդյոք հեշտությամբ ոչնչացնել Մարքսին: Ո՞րն է արդյոք նրա աքիլլեսյան գարշապարը: Նրա ուսմունքը կվարկաբեկվե՞ր արդյոք, եթե մարդիկ տեղյակ լինեին Մարքսի՝ սատանայության հետ ունեցած կապի մասին: Եվ կա՞ն արդյոք մարդիկ, որոնք մտահոգված են այս խնդրով:

Մարքսիզմը ժամանակակից կյանքի մեծագույն իրողություններից է: Եվ ինչպիսին էլ որ լինի ձեր կարծիքն այս առթիվ, անկախ այն բանից, հավատո՞ւմ եք, թե՞ ոչ սատանայի գոյությանը, ինչպես էլ որ վերաբերվեք սատանայապաշտությանը, որով տարված են հասարակության որոշ ոլորտներ, խնդրում եմ հաշվի առնել, ծանրությեթև անել, գնահատել ձեզ ներկայացվող փաստաթղթերը:

Կարծում, որ դրանք հնարավորություն կտան ձեզ կողմնորոշվելու ի դեմս այն խնդիրների, որոնց գոյության հետ այսօր մարքսիզմն ստիպում է հաշվի նստել մոլորակի յուրաքանչյուր քաղաքացու:

Ռիչարդ Վուրմբրանդ

1
Հավատափոխություն

Մարքսի հոգևոր ստեղծագործությունները

Այսօր մոլորակի բնակչության մեկ երրորդը մարքսիստ է: Մեծ է մարքսիստների թիվը անգամ կապիտալիստական երկրներում: Շատ քրիստոնյաներ, մինչև իսկ եկեղեցու սպասավորներ (նրանցից ոմանք նույնիսկ հոգևոր բարձր կոչում ունեն), հավատացնում են, որ եթե Հիսուսը տվել է դեպի երկինք տանող ուղու բանալին, ապա Մարքսը մատնացույց է արել այս աշխարհի ճնշվածներին, սովյալներին ու աղքատներին օգնության ձեռք մեկնելու ճանապարհը:

Մշտապես ընդգծվել է Մարքսի խորապես մարդկային լինելը: Նրան անվերջ մի միտք էր հետապնդում՝ օգնել շահագործվող զանգվածներին: «Նրանց աղքատության ու թշվառության պատճառը, - գրում էր նա, - կապիտալիզմն է»: Ըստ Մարքսի, եթե այդ փտած սիստեմը կործանվի ու հաստատվի պրոլետարիատի դիկտատուրա, ապա անցումային կարճատև շրջանից հետո պետություն ասվածը կվերանա, և աշխատավորի համար կբացվեն դրախտի դռները: Կոմունիստական հասարակությունում աշխատելու են բոլորը՝ յուրաքանչյուրն ըստ իր ընդունակությունների, հանրությանը պատկանող գործարաններում ու ֆերմաներում: Այնժամ յուրաքանչյուրը կվարձատրվի ըստ պահանջմունքի: Անհատներին չի կառավարի «պետություն» ասվածը, չեն լինի պատերազմներ ու հեղափոխություններ, այլ կիշխեն համընդհանուր ու հարատև եղբայրական փոխհարաբերություններ: Սակայն երջանկության հասնելու երկարատև ճանապարհին, մասսաներին կապիտալիզմի կործանումից բացի նաև այլ բան է հարկավոր: Մարքսը գրում է. «Հավատի՝ մարդկանց այդ անիրական, պատրանքային երջանկության ոչնչացումը անհրաժեշտ է իրական և իսկական երջանկության հասնելու համար: Կեցությունով պայմանավորված պատրանքներից հրաժարվելու կոչը, դա պարզապես կոչ է հրաժարվելու այն կեցությունից, որը սնում է պատրանքներ» (Հեգելի «Իրավունքի փիլիսոփայության քննադատություն» աշխատության համար գրված նախաբանից):

Մարքսը կրոնամերժ էր, քանի որ ըստ նրա, կրոնը խոչընդոտ է հանդիսանում կոմունիստական իդեալի իրականացմանը, որը նրա կարծիքով, մեր կյանքի խնդիրների լուծման միակ ուղին է:

Ահա այսպես են մարքսիստները հիմնավորում իրենց տեսակետները: Հարցին նույն կերպ են մոտենում նաև եկեղեցու որոշ սպասավորներ: Հայր Օստեռեյխերը (Մեծ Բրիտանիա) իր քարոզներից մեկում այսպես էր հավաստիացնում. «Կոմունիզմն, ինչքան էլ որ տարբեր լինեն նրա արտահայտման եղանակները, իր էությամբ շարժում է, որի խնդիրն է ազատագրել մարդուն մարդու շահագործումից: Արդ, սոցիոլոգիայի տեսանկյունից Եկեղեցին մեծ մասամբ եղել և մնում է «շահագործողների շարքում»: Մարքսը, որի աշխատություններում զգացվում է անկեղծ սեր Իսրայելի մարգարեներից սկիզբ առած արդարության ու եղբայրության գաղափարների նկատմամբ, ատում էր կրոնը, քանզի կրոնը նպաստում էր այն առաջնավիճակի (ստատուս քվո) պահպանմանը, որի պայմաններում երեխաներին վերաբերվում էին ստրուկների պես՝ նրանց ստիպելով մահու չափ աշխատել, որպեսզի մյուսները հարստանային: Նույնը կատարվում էր և մեզ մոտ՝ Բրիտանիայում: Հարյուր տարի է անցել այն օրից, երբ արտասանվեցին «Կրոնը հաշիշ է ժողովրդի համար» խոսքերը, և սա անհիմն քննադատություն չէ: Մենք՝ Հիսուսի Առեղծվածային Մարմնի անդամներս, պարտավոր ենք հրապարակայնորեն հայտարարել ու խոստովանել մեր սխալը, պարզորոշ գիտակցելով, որ մենք զգալի պարտք ունենք կոմունիստներին» (Լոնդոն, 1968թ., Ֆոնտանա, Սուրբ Մարիամ Եկեղեցում արտասանած քարոզից):

Մարքսիզմն անվրեպ է նախ և առաջ իր ունեցած հաջողությամբ: Բայց իրականում այդ հաջողությունը որևէ բան նշանակո՞ւմ է:

Կախարդ-հեքիմները նույնպես հաջողություն են ունենում: Հաջողությունը կարող է վավերացնել ինչպես ճիշտը, այնպես էլ սխալը: Ի դեպ, մարդու համար անհաջողությունն անգնահատելի արժեք ունի, քանզի այն ուղի է հարթում մեկ այլ, ավելի խոր ճշմարտության համար: Այդ պատճառով ավելի լավ է մենք զբաղվենք Մարքսի որոշ աշխատությունների վերլուծությամբ, առանց հաշվի առնելու, հաջողություն ունեցե՞լ են դրանք, թե՞ ոչ:

Ո՞վ էր Մարքսը:

Դեռևս վաղ երիտասարդության տարիներին Մարքսը հավատացյալ էր: Նրա ստեղծագործություններից առաջինը կրում է «Հավատացյալի միաբանությունը Քրիստոսի հետ» վերնագիրը: Այստեղ կարելի է կարդալ հետևյալը. «Համակ սեր և սիրով լեցուն մեր սրտերը նվիրենք Հիսուսին ու նաև մեր եղբայրներին, որոնց հետ մենք սերտորեն կապված ենք, և որոնց համար Նա, նվիրաբերելով Իրեն, նահատակվեց» (Marx-Engels, Gesant Ausgabe, I հատ. էջ 172):

Այսպիսով, Մարքսին հայտնի էր այն եղանակը, որով առաջնորդվելու դեպքում, մարդիկ կարող էին եղբայրանալ, այն է՝ քրիստոնեությունը:

Հետո նա շարունակում է. «Միայն Քրիստոսի հանդեպ սերն ու միաբանությունը կարող է մեզ ներքին վեհություն պարգևել: Այն դարմանում է ցավը, զինում է անխախտ հավատքով և մարդասիրության ունակ սրտով՝ զգայուն այն ամենի հանդեպ, ինչ վեհ է ու ազնիվ: Եվ այս ամենին կարելի է հասնել, ոչ թե պատվախնդրությունից կամ փառամոլությունից դրդված, այլ միայն ու միայն Քրիստոսի հանդեպ ունեցած նվիրվածությունից ելնելով»:

Համարյա այդ նույն ժամանակ Մարքսը «Պատանու խոհերը մասնագիտություն ընտրելիս» իր դիսերտացիայում գրում է. «Կրոնը մեզ ուսուցանում է, որ Կատարյալը, որին մենք ուղղում ենք մեր բոլոր ջանքերը, նվիրաբերել է Իրեն՝ հանուն մարդկության: Ո՞վ կհամարձակվի հերքել այս միտքը: Ուրեմն, եթե մենք ընտրել ենք այնպիսի մասնագիտություն, որով կարող ենք առավելագույնս անել հանուն Նրա, ապա երբեք չենք ճզմվի բեռան տակ, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ զոհողությունների մի ամբողջ շարան՝ ի սեր մարդկության»:

Ցպետք է մոռանալ, որ Մարքսը նախապես եղել է համոզված քրիստոնյա: Միջնակարգ դպրոցի ատեստատի «Հոգևոր կրթություն» սյունակի դիմաց տրված է հետևյալ գնահատականը.

«Քրիստոնեական բարոյականության ընկալումն ու հավատի ճանաչողությունն առողջ է, լավ հիմնավորված: Քաջ ծանոթ է նաև կրոնի պատմությանը» (Սոցիալիզմի պատմության և աշխատավորական շարժման նյութեր, 1925թ., գերմաներեն):

Մինչդեռ, նույն ժամանակաշրջանին վերաբերող մի այլ գիտական թեզում, Մարքսը վեց անգամ կրկնում է «ոչնչացնել» բառը, որը քննությանը մասնակցող նրա դասընկերներից և ոչ մեկը չէր օգտագործել:

«Ոչնչացնել» բառը դարձավ նրա մականունը: Ի դեպ, շատ բնական էր այդ բառի օգտագործումը մի մարդու կողմից, որը մարդկությանը «տականք» էր անվանում՝ արտահայտվելով այսպես. «Ոչ ոք ինձ չի այցելում, դա ինձ դուր է գալիս, քանի որ ժամանակակից մարդկությունը կարող է... (անվայել բառ): Այն ընդամենը խաբեբաների հրոսակախումբ է...»:

Մարքսի առաջին աշխատություններն ընդդեմ Աստծո

Ատեստատ ստանալուց քիչ անց ինչ-որ առեղծվածային բան է կատարվում Մարքսի կյանքում: Իսկապես, 1841 թ.-ից դեռ շատ առաջ, մինչև Մովսես Հեսսի ջանքերով սոցիալիստական գաղափարների ջատագով դառնալը, Մարքսն արդեն համոզված ու կրքոտ հակահոգևորական էր:

Ուսանողական տարիներին ծնվում է մեկ ուրիշ Մարքս: Մի պոեմում նա գրում է. «Ուզում եմ վրեժխնդիր լինել նրանից, որն իշխում է մեր գլխավերևում»: Ուրեմն Մարքսը համոզված է, որ «Այնտեղ՝ վերևում, ինչ-որ Մեկը կա և իշխում է» և իր դժգոհությունն է արտահայտում այդ առթիվ: Մինչդեռ այդ ինչ-որ Մեկը որևէ վատություն չի արել նրան:

Մարքսը համեմատաբար բարեկեցիկ ընտանիքից էր սերում: Մանուկ հասակում չի իմացել, թե սովն ինչ բան է և շատ ավելի հաջողակ էր, քան իր համադասարանցիներից շատ-շատերը: Ուրեմն ինչո՞ւ է նրա հոգում ծնվում նման անասելի ատելություն ընդդեմ Աստծո: Անձնական շարժառիթները մեզ ծանոթ չեն: Պետք է, ուրեմն, եզրակացնել, որ այս բառերն արտահայտելիս Մարքսը պարզապես մեկ ուրիշի մունետիկն ու ազդարարն է:

Այն տարիքում, երբ հոգեպես առողջ յուրաքանչյուր երիտասարդ փայփայում է մերձավորին բարեգործություն անելու երազանքը և տարված է սեփական կարիերայի մտահոգությամբ, ի՞նչն է մղում նրան գրելու հետևյալ տողերը «Հուսահատի աղերսալի դիմումը» պոեմում.

Այսպես մի աստված դատարկաձեռն թողեց ինձ
Անեծքների, բախտի չար հարվածների տակ:
Աշխարհները նրա անհետացան մեկեն՝
Անհույս ու անվերադարձ,
Եվ այժմ ինձ ոչինչ չի մնում, վրեժից բացի:

Ամպերից վեր, այնտեղ՝ բարձրում, ես ուզում եմ մի գահ
շինել,
Որն ունենա գմբեթ խրոխտ՝ վիթխարի ու սառնաշունչ,
Եվ պատվանդան՝ սարսափազդու ու սնապաշտ,
Եվ ուր օրհասն ամենամութ իր հաղթության երգը կերգի:

Ով որ փառահեղ այդ գահին նայի աչքերով իր ջինջ,
Մահվան պես համր ու դժգույն, կփախցնի հայացքն իր
շուտով,
Քանզի ճակատագրի մագիլների մեջ թպրտում է նա

Մահկանացուի կույր վիճտությամբ երերուն,
Թող ուրեմն երջանկությունն այդ ունայն
Գերեզմանափորն իր լինի:
(Marx-Engels Gesant Ausgabe, I հատ)

Մարքսը երազում է հիմնահատակ կործանել Աստծո կողմից արարված աշխարհը: Մեկ ուրիշ պոեմում նա այսպես է արտահայտվում:

Հաղթական ու հպարտ կքայլեմ ես այնժամ Աստծո պես
Նրանց թագավորության ավերակների միջով,
Խոսքերն իմ կրակ են ու զարկ,
Լայնալանջ ու հզոր եմ ես Աստծո պես:
(Deutsche Tagesposte, Գերմանիա, դեկ. 31, 1982թ.)

«Ուզեմ եմ մի գահ շինել» տողը և այն խոստովանությունը, թե նա, ով բազմել է վերևում, կարող է միայն տագնապ ու սարսափ ժայթքել, չե՞ն հիշեցնում արդյոք Լյուցիֆերին ու նրա ծրագիրը. «Վեր կելնեմ երկինքը, Աստծո աստղերից բարձր կդնեմ իմ աթոռը» (Եսայի 14.13):

Գուցե պարզ զուգադիպություն է այն, որ Մարքսի ամենամտերիմ ընկերներից մեկը՝ Բակունինը, ժամանակին գրել է. «Մարքսի սիրելիների բանակում տեղ գրավելու պայմանը նրան պաշտելն է: Նրա կողմից հանդուրժվելու համար, ամենաքիչը պետք է վախենալ նրանից: Մարքսին բնորոշ է անսահման հպարտությունը, որը թերևս հասնում է նողկալիության ու խելագարության» (Բակունին, երկեր, III հատոր, Բեռլին 1924թ. էջ 306):

Սատանայապաշտություն և «Օուլանեմ»

Ինչո՞ւ է Մարքսը փափագում նման գահ ունենալ: Պատասխանը կարող ենք գտնել ուսումնառության տարիներին գրված և հասարակությանը քիչ ծանոթ դրամայում: Դրաման կոչվում է «Օուլանեմ»: Վերնագիրը պարզաբանելու համար մի փոքրիկ շեղում կատարենք:

Գոյություն ունի Սատանայի եկեղեցի, որի ծեսերից մեկը սև պատարագն է: Այն մատուցվում է կեսգիշերին, սատանայի սպասավոր քրմի կողմից: Մոմերն աշտանակներին գլխիվայր են ամրացնում: Քուրմը կրում է շքեղ զարդարված շուրջառ, շրջոնք աստառով: Վերցնելով աղոթագիրքը՝ քուրմն սկսում է կարդալ

հակառակ կարգով, վերջից՝ սկիզբ: Աստծո, Հիսուսի, Սուրբ Մարիամի սրբազան անունները կարդացվում են հակառակ կողմից: Խաչելությունը գլխիվայր է ամրացված կամ նետված է գետնին՝ ոտնակոխ արվելու համար: Որևէ կնոջ մերկ մարմինը զոհասեղանի դեր է կատարում: Նվիրաբերվելիք զոհը, որ գողացված է եկեղեցուց, կրում է «Սատանա» մակագրությունը և ծառայում է հաղորդության ծաղրապատկերը ներկայացնելու համար: Սև պատարագի ընթացքում Աստվածաշունչն այրում են: Ներկաները երդվում են գործել կաթոլիկական կատեխիզիսում թվարկված յոթ մահացու մեղքերը: Երդվում են նաև երբեք լավ գործեր չկատարել: Միսակատարությունն ավարտվում է խնջույքով:

Սատանայապաշտությունը երկար պատմություն ունի: Աստվածաշունչը մեզ բացատրություններ է տալիս այս առթիվ: Երկրորդ Օրինաց գրքում (32.17) կարդում ենք, որ հրեաները, մինչև Աստծո անսպառ պահոցներից կստանային իսկական հավատքի լույսը, մոլորության մեջ ընկնելով «զոհ մատուցեցին դևերին, բայց ոչ Աստծուն»: Իսրայելի թագավոր Հերոդեսը ավելի ուշ «բարձրավանդակներում քուրմեր կարգեց իր շինած հորթերի ու դևերի համար» (Բ Մնաց 11.15):

Անհիշելի ժամանակներից մարդիկ հավատացել են սատանայի գոյությանը: Մեղքերն ու չարությունն են նրա թագավորության կնիքը, իսկ մասնատումն ու քայքայիչ ավերածությունը՝ անխուսափելի հետևանքները: Ինչպես անցյալում, այնպես էլ մեր օրերում, չարի նպատակասլաց գործունեությունը, հանձինս կոմունիզմի և նացիզմի, անհնարին կլիներ, առանց այն ուղեցույց ուժի, որ սատանա է կոչվում: Նա է գերագույն միտքը, գաղտնի գործակալը, որ կենտրոնացրել է իր ուժն ու եռանդը՝ մարդկությանը տիրելու ընդարձակ ծրագիրն իրականացնելու համար: «Օուլանեմ» վերնագիրը պատահական չի ընտրված: Սուրբ անվան հակառակ ընթերցմամբ, Օուլանեմը էմանուել անվան գրաշրջությունն է (Հիսուսի ավետարանական անվանումը, որը եբրայերեն նշանակում է «Աստված մեզ հետ է»): Նման շրջված անունները շատ գործուն ու ազդիչ միջոցներ էին համարվում սև մոգության մեջ:

Մենք ի վիճակի կլինենք ընկալելու «Օուլանեմ» դրաման, եթե նախապես ծանոթանանք Մարքսի «Մենեստրել» պոեմում հեղինակի տարօրինակ խոստովանանքի հետ.

Դժոխքի ծանր գոլորշիներից մշուշվել է միտքս,
Հագեցել եմ, լցվել ու խենթանում եմ արդեն,
Թող ուրեմն փոխվեմ ես, ու փոխվի սիրտն իմ:
Նայեցեք այս քրին

Խավարի Արքայազնից եմ ես այն գնել,
Այդ նա է չափ տալիս ու ազդանշան,
Ու նոր թափ առած, խիզախ ու քաջ,
Պարում եմ ես պարը մահվան:
(K. Marx "Spielmann"; Deutsche Tagespost; էջ 57-58)

Սատանայապաշտության ձեռնադրման գերագույն ծեսերի ժամանակ թեկնածուն ստանում է կախարդված թուր, որը նրան մշտական հաջողություն է ապահովելու: Այն գնվում է դաշինքի դիմաց, որն ստորագրվում է թեկնածուի դաստակից վերցված արյամբ: Համաձայն դաշինքի՝ մահվանից հետո վերջինիս հոգին սատանային է պատկանելու:

(Որպեսզի ընթերցողին հասկանալի լինեն այս պոեմներում ամփոփված սարսափելի դիտավորությունները, անտեսելով մեծագույն նողկանքս, պետք է հիշեցնեմ, որ «Սատանայական աստվածաշնչում» խաչելությունն անվանվում է «ծառից կախված նսեմ անզորության խորհրդանիշ», սատանան հորջորջվում է «խավարի հրաշագեղ արքայազն», որը կառավարում է երկիրը: Ի հակադրություն «Բեթղեհեմի հավերժ խայտառակության», «Նզովյալ Նազարեթցու», «անզոր թագավորի», «փախստական ու համր Աստծո», «Վսեմափայլ Սատանային նողկալի ու ատելի հակառակորդի», բանսարկուին այստեղ շնորհվում է «Լույսի Աստված» անվանումը, որի շուրջը «վախից ծնկաչոք կուչ են եկել» իր հրեշտակները, որոնց «ձեռքով քրիստոնյաների նզովյալ ու երերուն հոգիներն ուղարկվում են իրենց ճակատագրի անիծյալ ու վերջնական հանգրվանը»: Ահա մի հատված «Օուլանեմ» -ից.

Եվ նրանք նույնպես Օուլանեմ են, Օուլանեմ:
Անունն այս հնչում է որպես մահվան գույժ,
Որ ծորում է, մարում թշվառ մի հեծեծանքով:
Կանգ առեք: Հիմա հասկացա ես: Այն վեր է հառնում իմ
մտքից անհողդողդ,
Օդի պես թափանցիկ, բայց պինդ ու հաստատուն,
Իսկ և իսկ ոսկորներիս պես:
(Մարքս, Օուլանեմ, գործողություն 1, տեսարան 1, էջ 60):

Արդ, իմացեք, ի զորու եմ թևերիս մեջ առնել
Ձգմել ու ջախջախել ձեզ
(ձեզ՝ մարդկության մարմնավորումը)
Մրրիկի թափով փոթորկուն:
Մինչ մեզ երկուսիս կուլ տալու համար,

Անդունդն է երախն իր բացում խավարչտին,
Կընկղմվեմ, կիջնեմ դուռ հատակը մթին,
Իսկ ես քմծիծաղով կհետևեմ ձեզ,
Ու ձեր ականջին կշշնջամ այսպես.
«Սուզվեմ, եկեմ ինձ հետ, իմ բարեկամ»:

(Նույնը, գործողություն 1, տեսարան 2, էջ 63):

Սուրբ գրքում, որ Մարքսն ուսումնասիրել էր գիմնազիայում ուսանելու տարիներին և բնավ չէր մոռացել հասուն տարիքում, ասված է. «Եվ տեսա մի հրեշտակ է իջնում երկնքից, և բռնեց նա այն վիշապին, այն առաջին օձին, որ է բանսարկուն կամ սատանան և գցեց նրան անդունդի մեջ (abyssos- հունարեն անդունդ է նշանակում, Հայտ 20.1-3):

Ահա սատանայի ու իր հրեշտակների համար նախատեսված այս անդունդն է Մարքսը պատրաստվում գլորել ամբողջ մարդկությանը:

Ո՞ւմ շուրթերով է խոսում Մարքսն այս դրամայում: Այնքան էլ խելամիտ չէ ակնկալել մի երիտասարդ ուսանողից, որ նա իբրև երաշանք փայփայեր խավարի անդունդը գահավիժող մարդկության տեսիլքը, (կամ ավետարանական արտահայտությամբ, «արտաքին խավարը», որը նույն դժոխքն է), այն դեպքում, երբ ինքը չարախնդալով հետևում է նրանց, ում իր ուսմունքն է մղել անհավատության: Աշխարհում ոչ մի տեղ հնարավոր չէ հանդիպել պաշտամունքի հասնող նման իդեալի, բացառությամբ Սատանայի եկեղեցու ձեռնադրման ծեսերի:

Սակայն շուտով վրա է հասնում Օուլանեմի մահը: Ահա նրա վերջին խոսքերը.

Կորած եմ, կորած: Մահվան շեմին եմ արդեն,
Եվ ժամանակի սլաքը կանգնել է առհավետ,
Խարխուլ տնակս փուլ է եկել, քանդվել:

Մոտ է ժամս, և շուտով կառնեմ շունչը հավերժության
Այնժամ ես մարդկության հասցեին
Սարսափելի անեծքներ կտեղամ:

(Գործողություն I, տեսարան 3, էջ 68):

Մարքսը սիրում էր կրկնել Մեֆիստոֆելի հետևյալ խոսքերը «Ֆաուստ»-ից. «Գոյություն ունեցող ամեն բան ենթակա է կործանման»: Ամեն բան, ներառյալ պրոլետարիատն ու պայքարի ելած ընկերները: Մարքսը մեջբերում է այդ խոսքերը «Լուի Բոնապարտի Բրյումերի 18-ը» աշխատությունում: Ստալինը

տառացիորեն ընդունեց այդ պատվիրանը՝ չխնայելով անգամ սեփական ընտանիքը: «Ֆաուստ»-ում սատանային տրվում է «ամեն ինչ հերքող ու ժխտող ոգի» անվանումը, որը ճշտորեն համապատասխանում է Մարքսի մտածողությանը: Նա խոսում է «Գոյություն ունեցող ամեն ինչի անողոք քննադատության», մասնավորապես «Գերմանիայում տիրող իրավիճակի դեմ պայքարելու» և «Անվերապահորեն ամեն ինչի վիճելիության մասին»: Ապա ավելացնում է. «Մամուլի կաևորագույն խնդիրն է հօդս ցնդեցնել գոյություն ունեցող հասարակարգի հիմքերը» (Marx-Engels Werke, I, *էջ 380*, XVII, *էջ 190*, VI, *էջ 234*)*:*

Մարքսն իրեն համարում է «դրական համարվող ամեն ինչի ամենակատաղի թշնամի» (B. Brecht, Works, հ. I, *Ֆրանկֆուրտ, 1979թ., էջ 651*)*:*

Սատանայական աղանդի անդամները մատերիալիստներ չեն: Նրանք հավատում են անդրշիրիմյան կյանքի գոյությանը: Օուլանեմը, որի շուրթերով Մարքսն է խոսում, այն չի ժխտում, ընդհակառակը, հաստատում է նրա գոյությունը, բայց գտնում է, որ այն ծայրահեղ ատելությամբ լեցուն կյանք է:

Այստեղ պատեհ կլինի հիշեցնել, որ դևերի համար անմահություն նշանակում է մշտնջենական տառապանք: Ահա այսպես են չար ոգիները հանդիմանում Հիսուսին. «Ի՞նչ կա մեր և քո միջև, Հիսուս, Որդի Աստծո, մեզ տարաժամ տանջելո՞ւ եկար» (Մատթ 8.29):

Այս հարցը նույն կերպ է ընբռնում նաև Մարքսը.

Օ՜, հավերժություն, մշտնջենական ցավ ու տառապանք,
Վախճան՝ աննկարագրելի, անհամեմատելի ու
Նողկալի անչափ, որ մարդկանց ծաղրելու ես կոչված,
անհեթեթ հորինվածք,
Իսկ մենք, կուրորեն գործի գցված պտուտակներս,
Ստեղծված ենք լինելու ժամանակի ու Տիեզերքի
Անհեթեթ, անիմաստ գրանցողները միայն,
Եվ այստեղ գտնվելու մեկ նպատակ կա միայն,
Այն է՝ կործանում ...

(Մարքս «Օուլանեմ»)

Կամաց-կամաց մեզ համար պարզ է դառնում, թե ինչ է կատարվել երիտասարդ Մարքսի հոգում: Նախապես նա քրիստոնեական համոզմունքներ է ունեցել, սակայն գործնականում չի ապրել իր սկզբունքներին հավատարիմ կյանքով: Հոր հետ ունեցած նամակագրությունն աչքի անցկացնելիս պարզ է դառնում, որ նա հաճույքների և վայելքների համար հսկայական գումար-

ներ է վատնել և այդ, ինչպես նաև այլ պատճառներով անվերջանալի վիճաբանությունների մեջ է եղել ծնողների հետ: Ամենայն հավանականությամբ, այս ժամանակաշրջանում է, որ տեղի է ունեցել նրա որդեգրումը հույժ գաղտնի «Սատանայի եկեղեցուն» ու մասնակցությունը ձեռնադրման արարողություններին: Սատանան, որին նրան երկրպագողները տեսնում են գինարբուքի զգայախաբությունների մեջ, խոսում է նրանց շուրթերով: Նա է նշմարվում խնջույքների, զգայախաբությունների ու պատրանքների շղարշի ներքո: Ահա թե ինչու Մարքսը ոչ այլ ոք է, եթե ոչ սատանայի խոսափողը, մանավանդ, երբ հայտարարում է. «Ուզում եմ վրեժխնդիր լինել նրանից, ով իշխում է վերևում»: Ուշադրությամբ կարդանք «Օուլանեմ»-ի վերջին տողերը.

Եթե հայտնի է զորեղ մի ուժ կործանարար,
Կնետվեմ, կմիանամ նրան խելակորույս,
Քանզի նպատակ ունեմ աշխարհն այս կործանման տանել,
Աշխարհն այս, այո՛, որ պատնեշ է իմ ու անդունդի միջև,
Կփշրեմ ես նրան բյուր մասնիկների ու
Կկործանեմ անեծքներիս զորությամբ անողոք:

Բազուկներիս ուժով կխեղդեմ բիրտ իրողությունը նրա,
Ու գրկիս մեջ անձայն կմեռնի նա
Եվ կգահավիժի համատարած անէության մեջ
Որպես ոչինչ ու անգո:
Ա՛յ, թե որը կլինի կյանքը իսկական:

(Օուլանեմ)

Մարքսի վրա մեծ տպավորություն են թողել մարկիզ դը Սադի հետևյալ խոսքերը.

«Ատում եմ բնությունը, կուզեի հօդս ցնդեցնել այս մոլորակը, դուրս բերել նրան իր ուղեծրից, արգելակել աստղերի շարժումը և շուռ տալ տիեզերքում թափառող մոլորակները բոլոր, քանդել, ավերել այն ամենը, ինչ համահունչ է բնությանը և, ընդհակառակը, նեցուկ լինել այն ամենին, ինչ վնասում է նրան, մի խոսքով, ես ուզում եմ բոլոր գործերով անարգել ու ոտնահարել այն: Գուցե կգա այն օրը, երբ ի զորու կլինենք նվաճել արևը, տիեզերքից պոկել և նրա կրակով երկիրը այրել: Ա՛յ դա ցնցող ոճիր կլիներ»:

Սադը և Մարքսը նույն աշխարհայացքն ունեն: Բարի կամքի տեր, բարեպաշտ ու Աստծուն նվիրված մարդիկ չանում են ծառայել իրենց մերձավորներին, գրելով գրքեր՝ վերջիններիս ճանաչողության սահմաններն ընդլայնելու, բարոյականության մասին պատկերացումները կատարելագործելու, ինչպես նաև նրանց կրոնական զգացմունքները խթանելու կամ, առնվազն, նրանց հաճույքի ու հանգստի զգացում պարգևելու համար: Միայն սատանան է, որ իր ընտրյալ սպասավորների օգնությամբ հնարքներ է բանեցնում մարդկությանը չարիք պատճառելու համար:

Կարծում եմ Մարքսը հանրահռչակ գրողներից միակն է, որ սեփական երկերն անվանել է «աղտեղություն», «զազրելի գրքեր» (Marx - Engels, Werke XXX, էջ 359):

Լիովին կանխամտածված ձևով, համարձակ ու վճռականորեն նա իր ընթերցողներին մատուցում է փչացած սնունդ: Ինչո՞ւ ուրեմն զարմանալ, որ նրա հետևորդներից ոմանք՝ Ռումինիայի և Մոզամբիկի կոմունիստները, ստիպել են բանտարկյալներին ուտել սեփական արտաթորանքն ու խմել մեզը (Paul Goma, Piteshti):

«Օուլանեմ» դրամայում Մարքսը վարվում է ճիշտ և ճիշտ սատանայի պես, այսինքն, անեծքի է արժանացնում համակ մարդկությանը:

Մարդկությանը հայտնի դրամաներից «Օուլանեմը» հիրավի միակն է, ուր գործող անձիք ամբողջապես գիտակցում են իրենց անբարոյական, զազիր էությունը, և, ընդորում, ոչ միայն չեն վախենում այն ցուցադրելուց, այլև հպարտանում են դրանով: Այստեղ սև ու սպիտակ չկա: Չկա Կլավդիոս, Օֆելյա, Յագո, Դեզդեմոնա. ամեն ինչ խավար է ու սև, ամեն ինչի մեջ առկայծում են մեֆիստոֆելյան խառնվածքային գծեր: Գործող անձիք բոլորն էլ սատանայի կամակատարներն են. նզովյալ, անբարոյական ու չվայտ:

2

Ընդդեմ բոլոր աստվածների

Սատանան Մարքսի ընտանիքում

Մարքսը՝ այդ վաղահաս հանճարը, ընդամենը 18 տարեկան էր, երբ գրեց այն աշխատությունները, որոնց մասին խոսվեց նախորդ գլխում: Հետագա կյանքի ծրագիրն արդեն կազմված էր, մինչդեռ ոչ մի խոսք մարդկությանը ծառայելու, պրոլետարիատի ու սոցիալիզմի մասին: Դրա փոխարեն, նա կամենում էր մարդկությանը կործանման հասցնել՝ տենչալով իր համար մի այնպիսի գահ շինել, «որի հենարանը մարդկանց սարսափը պիտի լիներ»:

Մարքսի և իր հոր նամակագրությունն ուշադրությամբ զննելիս, այս ժամանակաշրջանին վերաբերող նամակներում հայտնաբերում ենք առեղծվածային հատվածներ: Ահա թե ինչ է գրում որդին հորը. «Ամեն ինչ վերջացած է: Իմ Սրբության Սրբոցի տեղը թափուր է, և հարկ է այդտեղ նոր աստվածներ տեղադրել»: 1837թ. նոյեմբերի 10-ին գրված այս տողերը պատկանում են մի երիտասարդի, որի գործունեության հիմքը մինչ այդ քրիստոնեական հավատքն էր: Մինչև այս տողերը գրելը, Մարքսը բազմիցս հայտարարել է, որ Քրիստոսն իր սրտում է: Այժմ արդեն ամեն ինչ այլ է: Ովքե՞ր են այն «նոր աստվածները», որ պիտի փոխարինեին Քրիստոսին: Ահա թե ինչ է պատասխանում հայրը. «Զեռնպահ մնալով՝ ես խուսափում եմ բացատրություններ պահանջել այսպիսի մի առեղծվածային հարցի մասին, քանի որ այն ինձ չափազանց կասկածելի է թվում»:

Ի՞նչ «առեղծվածային հարց» է սա: Մարքսի կենսագիրներից և ոչ մեկը չի տվել այս տարօրինակ խոսքերի մեկնաբանումը:

Վերներ Բլյումեբերգը «Մարքսի դիմանկարը» գրքում, բերում է Մարքսի հոր նամակը ուղղված որդուն՝ գրված 1837թ. մարտի 2-ին. «Քո կարիերան, քո անունը երբևէ աշխարհահռչակ դարձած և քո բարեկեցիկ կյանքը տեսնելը սրտիս միակ փափագը չէ: Ճիշտ է, դրանք վաղուց փայփայած երազանքներ են, բայց վստահեցնում եմ քեզ, միայն սրանց իրականացումը ինձ չէր երջանկացնի: Այ, եթե սիրտդ մաքուր մնա, եթե նա բաբախի մարդկային սիրով լցված և ոչ մի դիվային ուժի չհաջողվի գրկել այն ազնվագույն զգացումներից, այնժամ միայն ես ինձ լիարժեք երջանիկ կզգամ»:

Ի՞նչն է արդյոք անսպասելիորեն մղել հորն արտահայտելու իր վախն ու երկյուղը մինչ այդ ամուր հավատքի ուղու վրա կանգնած որդուն և զգուշացնել նրան դիվային ուժերի մասին: Արդյոք պատճառը իր հիսունհինգամյակի առթիվ որդու նվիրած բանաստեղծությունները չե՞ն:

Ահա մեկ այլ մեջբերում Մարքսի «Հեգելի մասին» պոեմից, որտեղ հեղինակը Հեգելի փիլիսոփայության ազդեցության տակ այսպես է գրում՝ բացահայտելով ինքն իրեն. «Ես սովորեցնում եմ դիվային ուժով խճողված խառնաշփոթ բառեր: Ամեն մեկին տրված է հավատալու այն ճշմարտությանը, որն իր սրտին է հաճո»:

Եվս մի հատված Հեգելին հղված էպիգրամից.

Քանզի հայտնություն եղավ ինձ այն, ինչ վեհ է ամենից,
Եվ իմ տքնանքի ու խորհրդածությունների ուժով
Բացեցի խորունկ անտակում թաղված
Ճշմարտություն մի նոր:

Արդ, ես էլ Աստծո չափ մեծ եմ ու հզոր,
Եվ խավարի սեմով, իր պես, փաթաթվել եմ ես:
(Deutsche Tagespost, 31 դեկտեմբեր 1982թ.)

Մեկ այլ առիթով, «Գունատ կույսը» պոեմում Մարքսը խոստովանում է.

Ահա կորցրել եմ ես անդարձ
Երկինք տանող լուսաշող ուղին,
Գիտեմ, քաջ գիտեմ դա:
Հոգուս՝ նախկինում Աստծուն նվիրյալ,
Մի ուղի է նախասահմանված
Այն է՝ դժոխք:

Սա արդեն մեկնաբանման կարիք չի զգում: Սկզբում Մարքսը փայփայում էր արվեստագետ դառնալու փառասիրական երազանքը: Բայց նրա պոեմներն ու դրամաները, բոլորովին զուրկ լինելով որևէ գեղարվեստական արժեքից, ոչ մի հաջողություն չունեցան, մինչդեռ շատ օգտակար եղան մեզ՝ բացահայտելու համար նրա հոգեվիճակը: Այսպես, ձախողումը դրամատուրգիայում ծնեց նացիստական պրոպագանդայի նախարար Գեբելսին, փիլիսոփայության մեջ՝ Ռոզենբերգին՝ գերմանական ռա-

սիստական գաղափարախոսության հորը, իսկ նկարչության ու ճարտարապետության մեջ՝ Հիտլերին:

Հիտլերը նույնպես բանաստեղծ է եղել: Ամենայն հավանականությամբ, նրան ծանոթ չի եղել Մարքսի պոեզիան, բայց նմանությունն ակներև է, քանի որ պոեմներում Հիտլերը խոսում է նույն սատանայական պատկերների մասին.

Մութ, խավարչտին գիշերներին ես երբեմն
Իջնում եմ խաղաղ պարտեզն այն, ու Վոտանի
Կաղնու փեշին դաշինք եմ կնքում ես մութ, սև ուժերի հետ:
Ահա լուսնի դժգույն ցոլքի մեջ ռունագրերն են թույլ
առկայծում,
Որ օրվա մեջ արևն է ողողել ցոլքերով իր լուսաշող,
Բայց մեկ-մեկ մարում ու կորչում են նրանք մութի մեջ սև,
Մինչև օդում կհնչեն բառեր կախարդական:
(Mullern-Schonhausen, The Solution of the Riddle, Adolf Hitler)

Վոտանը գերմանական հեթանոսական դիցարանի գերագույն աստվածն է: Ինչ վերաբերում է ռունագրերին, դրանք գերմանական հնագույն գրերն են: Հիտլերը շուտ հրաժարվեց բանաստեղծական գործունեությունից: Իսկ Մարքսը հրաժարվեց պոեզիայից ու սատանային երդում տալով, իրեն նվիրեց հեղափոխական գործունեության՝ ընդդեմ մի հասարակության, որը չկարողացավ ըստ արժանվույն գնահատել նրա ստեղծագործությունները: Հավանաբար, դա էր պատճառներից մեկը, որը նրան մղեց բացարձակ ըմբոստության՝ ընդդեմ բոլորի և ամեն ինչի: Մեկ այլ հանգամանք էլ կա. նա արհամարհվել է, քանի որ հրեա էր: 2 տարի անց Մարքսը գրում է. «Էպիկուրի բնափիլիսոփայության և Դեմոկրիտի բնափիլիսոփայության տարբերությունը» աշխատությունը, որի առաջաբանում իրեն է վերագրում Էսքիլեսի հետևյալ խոսքերը. «Իրականում սիրտս ատելությամբ է լցված բոլոր աստվածների հանդեպ»: Այս միտքը մի փոքր մեղմացնելով՝ Մարքսը բացատրում է, որ ինքը հակառակորդ է երկրի վրա ու երկնքում հայտնի բոլոր աստվածներին, որոնք մարդկային գիտակցությունը չեն համարում գերագույն աստվածություն:

Մարքսը բոլոր աստվածների երդվյալ թշնամին էր, նա՝ ով իր թուրը գնել էր Խավարի Արքայազնից և իր առջև նպատակ ու խնդիր էր դրել համակ մարդկությանը գլորել կործանման անդունդն ու չարախնդալով միանալ նրան:

Իսկապե՞ս Մարքսն իր թուրը գնել էր Սատանայից: «Մավրը և գեներալը. հուշեր Մարքսի և Էնգելսի մասին» գրքում նրա

աղջիկ Էլեոնորան պատմում է, որ իր հայրը սիրում էր տարբեր պատմություններ պատմել իրենց, երբ իրենք դեռ փոքր էին: Դրանցից մեկը, որը ոմն Հանս Ռեկլեի մասին էր, քույրերը հատկապես շատ էին սիրում: Մեջ ենք բերում Էլեոնորայի խոսքերը. «Այս պատմությունն ամիսներ ու ամիսներ էր տևում, քանի որ շատ երկար էր, ու վերջն էլ չէր երևում: Հանսը կախարդ էր... ուներ խաղալիքների խանութ... և շատ պարտքեր: Չնայած կախարդ լինելուն՝ նրա գանձանակը միշտ դատարկ էր, և այդ պատճառով Հանսը ստիպված եղավ իր ունեցվածքը մաս առ մաս սատանային վաճառել, ամեն ինչ, նույնիսկ իր ամենագեղեցիկ իրերը... Այս արկածային պատմություններից շատերը սարսափազդու էին, մենք շատ փոքր էինք, և մազերս սարսափից բիզբիզ էին կանգնում»:

Մի՞թե բնական կարող է լինել այն, որ ընտանիքի հայրը փոքրիկ երեխաներին նման սոսկալի պատմություններ պատմի, ուր խոսքը գնում է ամենաթանկագին բաները սատանային վաճառելու մասին:

Ռոբերտ Փեյնն իր «Մարքս» գրքում ակնարկում է այդ մասին, բերելով անթիվ մանրամասներ, որոնք հար և նման են Էլեոնորայի պատմություններին: Նա հատկապես ուշադրություն է դարձնում այն փաստի վրա, որ Ռեկլե կախարդը շատ դժբախտ լինելով՝ հակառակ իր կամքի էր համաձայնում գիջել խաղալիքները և մինչև վերջին պահը փորձում էր ուղիներ փնտրել, բայց սատանայի հետ դաշինքը կնքված էր և խուսափել հնարավոր չէր:

Հեղինակն ավելացնում է. «այս անվերջանալի պատմությունները, ամենայն հավանականությամբ, ինքնակենսագրական են... Մարքսի աշխարհընկալումը սատանայական էր. նա օժտված էր սատանային բնորոշ խարդախությամբ ու նենգությամբ: Ի դեպ, երբեմն թվում էր, թե նա գիտակցում է, որ ինքը սատանայի կամակատարն է»:

Երբ Մարքսն ավարտում էր «Օուլանեմ» դրաման և երիտասարդության շրջանի իր մյուս ստեղծագործությունները, նա խոստովանելով սատանայի հետ իր դաշինքը, ամենևին էլ չէր մտածում սոցիալիզմի մասին, դեռ ավելին, պայքարում էր նրա դեմ: Նա «Հռենոսյան թերթ»-ի խմբագիրն էր, թերթ, որը «չէր ընդունում կոմունիստական գաղափարների անգամ տեսական ուժն ու նշանակությունը, հատկապես դրանց այժմյան տեսքով, առավել ևս չէր ողջունում այդ գաղափարների իրագործման փորձերը՝ համարելով դա անիրականանալի գործ: Հոծ զանգվածների կողմից կոմունիստական գաղափարներն իրագործելու յուրաքանչյուր փորձ դատապարտված է թնդանոթների համազար-

կերով խեղդվելու, հատկապես այն ժամանակ, երբ դրանք վտանգավոր են դառնում»:

Մարքսն ուզում է Աստծուն վայր նետել երկնքից

Այս տարիներին էր, որ Մարքսը հանդիպում է Մ. Հեսսին, որը կարևորագույն դեր խաղաց նրա կյանքում՝ նպաստելով վերջինիս սոցիալիստական հայացքների ձևավորմանը: Եվ ոչ միայն այսքանը: Ահա թե ինչ է ասում Հեսսն այս առթիվ. «Դոկտոր Մարքսը՝ իմ կուռքը, ահա թե ով է ջախջախիչ հարված հասցնելու միջնադարյան քաղաքակրթությանն ու կրոնին»: Ահա թե որն է Մարքսի հիմնական նպատակը: Այդ նույն՝ 1841թ., Մարքսի ընկերներից մեկ ուրիշը՝ Ժորժ Յունգը, ավելի հստակ է արտահայտվում այս մասին. «Մարքսն անկասկած վայր կնետի Աստծուն երկնքից, դեռ ավելին, դատի կտա նրան: Նա ենթադրում է, թե քրիստոնեությունը կրոնի բոլոր տեսակներից ամենաանբարոյականն է» (Conversations avec Marx et Engels. Jnsel Editeur, Գերմանիա, 1973թ.):

Զարմանալի ոչինչ չկա, քանի որ Մարքսը կարծում էր, թե առաջին քրիստոնյաները սպանել են մարդկանց ու կերել նրանց միսը:

Ահա այսպիսին էին Մարքսի երիտասարդ տարիների ընկերներից երկուսի կանխատեսումները: Հետևաբար բացարձակապես սխալ է կարծել, որ նրան հարազատ ու սիրելի էր մարդկությանն օգնելու վեհ գաղափարը, որի իրականացման ճանապարհին կրոնի խոչընդոտ լինելն էլ հենց պատճառ է հանդիսացել իր հակակրոնական համոզմունքների համար: Իրականում ամեն ինչ այլ է: Մարքսն առանց բացառության ատում էր բոլոր աստվածներին, բոլորին՝ ընդհուպ Աստծո մասին հասկացողությունն անգամ: Նա սիրահոժար զինվորագրվել էր «քացի տալով Աստծուն վտարելու» գործին: Սոցիալիզմը Մարքսի համար ընդամենը խայծ էր՝ ներգրավելու պրոլետարիատին և մտավորականությանը սատանայական այդ գաղափարի իրագործմանը:

Ի վերջո, Մարքսը հանգում է նրան, որ չի ընդունում Արարչի գոյությունն անգամ: Դժվար է հավատալ, բայց նա գտնում էր, որ մարդկությունը ձևավորվել է ինքն իրեն: Ահա նրա խոսքերը.

«Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սոցիալիստի համար, այսպես կոչված աշխարհի պատմության բոլոր փաստերը ոչ այլ ինչ են, եթե ոչ մարդու ձևավորում (որն արգասիք է մարդկային աշխատանքի ու ջանքերի), ու նաև բնության ինքնըստինքյան զարգացում, այստեղից անհերքելի ապացույցն այն բանի, որ նա

ծնվել է ինքն իրենից... Կրոնի քննադատությունը տանում է այն դրույթի հստակ ձևակերպմանը, որ մարդը գերագույն էակ է հենց իր՝ մարդու համար»:

Եթե որոշակիորեն չկա Աստված, ուրեմն չկա հրամաններ արձակող, չկա մեկը, որին պիտի հաշիվ տանք մեր արարքների համար: Մարքսը հաստատում է դա՝ հայտարարելով. «Կոմունիստները բացարձակապես ոչ մի բարոյականություն չեն քարոզում»:

Երբ սովետները իշխանության գլուխ անցնելով՝ հռչակեցին հետևյալ նշանաբանը. «Վտարենք կապիտալիստներին մեր երկրից և Աստծուն՝ երկնքից», նրանք պարզապես գործում էին՝ հավատարիմ մնալով Մարքսից ստացած ժառանգությանը:

Վերևում խոսվեց անունների շրջադասության մասին, որպես սև մոգությանը բնորոշ մեթոդի: Արդ, շրջադասություններն այնքան հիմնավոր ու խորապես առկա են Մարքսի մտածողության մեջ, որ նա ամենուրեք գործածում է այն: Ի պատասխան Պրուդոնի «Աղքատության փիլիսոփայություն» գրքի, նա գրում է «Փիլիսոփայության աղքատությունը» աշխատությունը: «Մեզ հարկավոր է,-գրում է Մարքսը,-քննադատության զենքի փոխարեն օգտագործել զենքի քննադատությունը»:

Ահա շրջադասության ուրիշ օրինակներ.

«Փորձեք լուծել հրեայի առեղծվածը ոչ իր կրոնի սահմաններում, ավելի շուտ լուծեք այդ կրոնի առեղծվածը իսկական հրեայի մեջ» (Werke 1, էջ 372):

«Լյութերը փչրեց հավատը հեղինակության նկատմամբ, քանի որ նա վերականգնեց հավատի հեղինակությունը: Հոգևորականներին նա դարձրեց իրավաբաններ, քանի որ իրավաբաններին դարձրեց հոգևորականներ» (էջ 386):

Մարքսը հաճախ է դիմում շրջադասության վերոհիշյալ եղանակին, որը խոսում է նրա դիվային ոճի մասին: Այդ ժամանակաշրջանում տղամարդիկ մորուք ու երկար մազեր էին պահում, բայց ոչ Մարքսի նման: Նրա արտաքին տեսքն ավելի բնորոշ է Ջոաննա Սութքոքի հետևորդներին, որը տարօրինակ մի աղանդի կախարդ-քրմուհին լինելով՝ պնդում էր, թե կապված է Սիլոհ անունով դևի հետ (Conversations entre Marx et Engels):

Հետաքրքիր է նշել, որ 1814թ., նրա մահից 60 տարի անց, «Սութքոնականների Զատամի խումբ է թափանցում Ջեյմս Ուայթ անունով մի զինվորական, որը Հնդկաստանում ծառայությունն ավարտելուց հետո այժմ ղեկավարում էր տեղի խումբը՝ տարածելով Ջոաննայի ուսմունքը, սակայն միաժամանակ կոմունիստական ուղղվածություն տալով խմբի գործունեությանը» (James Hastings, Encyclopoedia of Religion and Etbics, New York, Charles Scribners's Sons, 1921, XI, 756):

Կարլը հասարակության մեջ մետաֆիզիկական թեմաներով բոլորովին չէր խոսում, բայց մենք կարող ենք նրա մտածողության պատկերի արտացոլանքը գտնել բոլոր այն մարդկանց հետ ունեցած հարաբերություններում, որոնց հետ նա համագործակցել է: Նրանցից մեկը՝ 1-ին Ինտերնացիոնալի անդամ, ռուս անարխիստ Միխայիլ Բակունինը գրում է. «Զարի կարևորագույն դրսևորումը սատանայական ըմբոստությունն է ընդդեմ աստվածային հեղինակության, ըմբոստություն, որի մեջ առանց դժվարության կարող ենք նշմարել կախյալ վիճակից մարդու ազատագրման ծիլը, որը և հեղափոխություն է կոչվում: Սոցիալիստները միմյանց ճանաչում են «հանուն նրա, ում նկատմամբ անարդար են վարվել» նշանաբանով:

«Սատանան հավերժական խռովարար է, առաջին ազատախոհը, որն ազատագրեց համակ աշխարհը, ստիպեց մարդուն ամոթ զգալ իր հնազանդության ու անասնական տգիտության համար: Ազատագրելով մարդուն՝ նա ազատության կնիք դրոշմեց մարդու և մարդկության ճակատին, մղելով նրան անհնազանդության, այսինքն՝ իմացության ծառի պտուղները ճաշակելու փորձության» (Miehael Bakunin, God and the state, New York, Dover Publications, *1970թ., էջ 112*):

Բակունինը չի բավարարվում Լյուցիֆերի գովքն անելով, նա ունի հեղափոխության կոնկրետ ծրագիր, բայց ոչ այնպիսի, որն աղքատներին կազատի շահագործումից:

«Այս հեղափոխության ընթացքում,- գրում է նա,- մեր խընդիրն է արթնացնել սատանային ժողովրդի գիտակցության մեջ ու նրա ներսում ամենանողկալի կրքեր գրգռել: Մեր առաքելությունը կործանելու և ոչ թե կառուցելու մեջ է: Կործանելու կիրքը ստեղծարար կիրք է» (Roman Gul "Dzerjinski", Փարիզ, *1936թ., էջ 81*):

Մարքսը, սերտորեն համագործակցելով Բակունինի հետ, հիմնադրում է 1-ին Ինտերնացիոնալը և հավանություն է տալիս այդ ծրագրին: «Կոմունիստական մանիֆեստ»-ում նա Էնգելսի հետ միասին գրում է, որ պրոլետարները օրենքը, բարոյականությունը և կրոնը համարում են «բուրժուական նախապաշարմունք, որոնց ետևում քաղքենիական շահեր են թաքնված»:

Բակունինը գրում է, որ մեկ այլ սոցիալիստ, հանրահայտ մտածող Պրուդոնը, որ այդ ժամանակ Մարքսի ընկերն էր, նույնպես «պաշտում էր» սատանային: Մարքսին Պրուդոնի հետ ծանոթացրել է Հեսսը, և այդ ժամանակ Պրուդոնի սանրվածքը, մորուքն ու արտաքինը հիշեցնում էին 19-րդ դ. Ջոաննա Սութքոքի սատանայական աղանդի անդամներին:

«Հեղափոխության մեջ և եկեղեցում արդարադատության մասին» աշխատության մեջ Պրուդոնը հայտարարում է, որ Աստված անարդարության նախատիպն է:

«Մեր ճանաչողության սահմաններն ընդարձակվում են անկախ իրենից, բարեկեցության ենք հասնում անկախ իրենից և վերջապես, հասարակարգ ենք ստեղծում անկախ իրենից: Դեպի առաջ արված ամեն մի քայլ, հաղթանակ է աստծո դեմ» (Proudhon "Philosophie de la Misere", Paris, Union Generale d'Editions, *1964թ., էջ 199, 200*):

Ապա Պրուդոնը ոգեշնչված բացականչում է. «Արի, ո՛վ Սատանա, դու՛, որին զրպարտել են փոքրոգի մարդիկ ու թագավորները: Աստված ստորություն է ու անհեթեթություն, Աստված կեղծիք է ու երեսպաշտություն, Աստված աղքատություն է և բռնակալություն, Աստված չարն է: Խորանի առջև խոնարհված մարդկությունը՝ թագավորների և կրոնավորների ստրուկը, ամենուր դատապարտված է... Ահա բարձրացնում եմ ձեռքս դեպի երկինք ու երդվում եմ, օ՛, Աստված, դու իմ բանականության դահիճն ես, դու խղճիս վրա ծանրացած գավազան ես... Աստված, ըստ էության, դեմ է քաղաքակրթությանը, ազատությանը, դեմ է մարդուն» (*նույնը, էջ 200-201*):

Պրուդոնը հայտարարում է, որ Աստված չար է ու վատ, քանի որ մարդը՝ Նրա արարածը, չար է: Այս մտքերն այնքան էլ յուրօրինակ չեն, սովորաբար դրանք կարելի է գտնել Սատանայի եկեղեցու քարոզներում:

Ավելի ուշ, Պրուդոնի հետ դժտվելուց հետո, Մարքսը գրում է մի աշխատություն՝ հերքելու համար «Աղքատության փիլիսոփայությունը», որից և արեցինք վերոհիշյալ մեջբերումները: Այստեղ Մարքսն իր անհամաձայնությունն է հայտնում Պրուդոնի տնտեսական ուսմունքին, բայց Աստծո դեմ վերջինիս սատանայական ըմբոստացման առթիվ ոչ մի առարկություն չունի:

Գերմանացի հռչակավոր պոետ, Մարքսի երրորդ մտերիմ ընկերը՝ Հայնրիխ Հայնեն, նույնպես սատանայի համախոհ էր.

Ձայն տվի սատանային, ու նա եկավ,
Արդ, կարող եմ զննել այժմ դեմքը նրա,
Տգեղ չէ ամենևին ու ոչ էլ կաղ,
Այլ այր է հիասքանչ և շատ հմայիչ:

(Paul Garus, History of the Devil, East Brunswick, N.J. Bell Publishing C., *էջ 435*)

«Մարքսը պաշտում էր Հայնեին... Նրանց հարաբերությունները սրտագին ու ջերմ էին» (Հ.Հայնե, Works. հատ 1, էջ 64):

Ինչո՞ւ էր Մարքսին այդպես դուր եկել Հայնեն: Գուցե պատճառը վերջինիս հետևյալ դիվային մտքե՞րն էին. «Մի ցանկություն ունեմ... տանս դիմաց տեսնել գեղեցիկ ծառեր և, եթե ինձ շատ սիրելի Աստծո մտքով անցներ կատարելապես երջանիկ դարձնել ինձ, ապա իմ վեց կամ յոթ մահացու թշնամիներին այդ ծառերից կախված տեսնելու հաճույքը կպարգևեր ինձ: Այնժամ կարեկցանքով լի սիրտս ունակ կլինի ներել նրանց մահվանից հետո՝ իրենց ողջ կյանքի ընթացքում ինձ պատճառած ցավերի համար: Այո, մենք պարտավոր ենք ներել մեր թշնամիներին, բայց ոչ շուտ, քան մահվանից առաջ: Վրեժխնդրության ոգին հարազատ չէ ինձ: Կուզեի սիրել իմ թշնամիներին: Պարզապես չեմ կարող դա անել, մինչև նրանց պատասխան հարված հասցնելը: Միայն այն ժամանակ սիրտս բաց կլինի նրանց համար: Այնքան ժամանակ, քանի դեռ որևէ մեկից վրեժ չեմ լուծել, սիրտս դառնացած կլինի»:

Որևէ պարկեշտ մարդ կարո՞ղ էր արդյոք նման մտքերի տեր մեկի հետ մտերիմ, ընկերական հարաբերությունների մեջ լինել: Մինչդեռ, Մարքսն ու նրա շրջապատը այսպես էին մտածում: ՍՍՀՄ լուսավորության նախկին նախարար և հայտնի մտածող Լունաչարսկին իր «Սոցիալիզմը և կրոնը» աշխատության մեջ գրել է, որ Մարքսը, մոռանալով ու ժխտելով Աստծո գաղափարն անգամ, պրոլետարական շարասյուների գլուխ է կարգել սատանային:

Սակայն այստեղ կարևոր է նշել այն, որ չնայած Մարքսն ու իր հետևորդները դեմ էին Աստծուն, այնուամենայնիվ, աթեիստներ չէին, ինչպես պնդում են այսօրվա կոմունիստները: Այլ կերպ ասած, նրանք արտահայտում էին իրենց բուռն ատելությունն Աստծո հանդեպ, որի գոյությունը չժխտելով հանդերձ, բացեիբաց մերժում ու անարգում էին: Հարցականի տակ էր դրվում ոչ թե Աստծո գոյությունը, այլ նրա առաջնությունն ու գերիշխող դերը:

1871թ. Փարիզի Կոմունայի օրերին կոմունար Ֆլորենսը հայտարարում է. «Մեր թշնամին Աստված է, նրա հանդեպ տածած ատելությունն իմաստության սկիզբն է» (Philosophie du Communisme, Charles Boyer, Fordham University Press, New York, 1952թ.):

Մարքսը գովաբանում էր կոմունարներին, որոնք բացեիբաց ազդարարում էին այս նպատակի մասին: Սակայն ի՞նչ ընդհանուր բան կարող է լինել այս զազրելի նպատակի և բարիքների արդարացի բաշխման կամ հասարակական հարաբերությունների

բարելավման միջև: Սա պարզապես դիմակ է՝ իսկական նպատակը քողարկելու համար, որն է՝ Աստծո պաշտամունքի և հավատի վերջնական ու համընդհանուր ջախջախումը: Ապացույցն այսօր կարող ենք տեսնել այնպիսի երկրներում, ինչպիսիք են Ալբանիան, Հյուսիսային Կորեան, ուր բոլոր եկեղեցիները, մզկիթներն ու բուդդայական մեհյանները փակված են:

Մարքսի դիվային պոեզիան

Մարքսի սատանայական հակումները հիանալիորեն արտացոլված են նրա պոեզիայում: «Հուսահատվածի աղոթքը» և «Մարդկային հպարտություն» բանաստեղծությունները սեփական մեծությունը գիտակցող մարդու աղոթքներ են: Եթե մարդուն վիճակված է մեռնել սեփական մեծության պատճառով, դա տիեզերական աղետ կլինի, սակայն նա կմեռնի որպես աստվածային էակ, որի մահը կողբան դևերը: «Մենեստրել» բալլադում Մարքսը գովերգում է երգչի բողոքն ու դժգոհությունն ընդդեմ Աստծո, որը չի ճանաչում ոչ իրեն, ոչ էլ իր արվեստը, այն արվեստը, որ հառնելով դժոխքի խավար ու մթամած անդունդից «Հմայում է միտքն ու գերում սիրտը, և որի պարը մահվան պար է»: Երաժիշտը հանում է թուրն ու մխրճում պոետի սիրտը:

«Արվեստը, որ հառնելով դժոխքի խավար անդունդից հմայում է միտքը», այս տողերը հիշեցնում են ամերիկացի հեղափոխական Ջերրի Ռուբինի խոսքերը նրա «Արա, գործիր» գրքից. «Մենք նենգորեն խառնել ենք իրար երիտասարդությունը, երաժշտությունը, սեքսը, թմրադեղն ու հեղափոխությունը: Արդյունքում ստացվել է մի համակցություն, որը շատ դժվար է մարսել»:

Մեկ այլ պոեմում, ուր խոստովանում է, որ իր նպատակը ոչ թե այս աշխարհի ու կյանքի բարելավումն ու բարեփոխումն է կամ հեղափոխական թոհուբոհի մեջ գցելը, այլ պարզապես այն շուտափույթ ու վերջնական կործանման հասցնելը, որից ինքը հրճվելու է անչափ, նա հատկապես նշում է հետևյալը.

Քամահրանքով մարտահրավեր կնետեմ այս աշխարհին,
Տեսնելու համար անկարող այդ հսկայի փուլ գալը,
Որի վախճանից, սակայն, չի մարի եռանդն իմ:
Հետո հաղթանակած, Աստծո պես կքայլեմ
Ավերակների միջով այս աշխարհի,
Ու խոսքիս տալով գործի ուժ,
Կզգամ ինձ Աստծուն հավասար:

(Mc Lellan de Marx before, marxism, Mac Millan):

Առանց ներքին, լուռ պայքարի չէ, որ Մարքսն ընտրում է սատանային: Պոեմներն ավարտելիս նա ծանր հիվանդանում է, որն արդյունք էր հոգում փոթորկվող մոլեգին կրքերի: Ահա այստեղ էլ նա գրում է, թե ինչքան ծանր էր իր համար կուռք ու դրոշակ դարձնել մի գաղափար, որը շատ ատելի էր իրեն: Այս մտքից տանջահար, նա հիվանդանում է:

Մարքսի հավատափոխության և կոմունիստական գաղափարներին հարելու իսկական պատճառը հստակ երևում է նրա ընկեր Ժորժ Յունգի՝ Ռուգեին ուղղված նամակից: Խնդիրը պրոլետարիատի ազատագրումը կամ ավելի լավ հասարակական սիստեմի կառուցումը չէ: Տեսնենք, թե ինչ է նա գրում. «Եթե ստացվի այնպես, որ Մարքսը, Բաուերը և Ֆոյերբախը միանան քաղաքական-աստվածաբանական թերթ հիմնելու համար, ապա լավ կլինի, որ Աստված իր շուրջը հավաքի իր բոլոր հրեշտակներին և սկսի դառնորեն ողբալ իր մահը, քանզի այս երեքին կհաջողվի Աստծուն վռնդել երկնքից» (Mc Lellan):

Արդյոք այսքա՞ն են Մարքսի սատանայական ստեղծագործությունները: Մենք դա չգիտենք, քանի որ նրա ձեռագրերը հիմնականում գաղտնի են պահվում:

Ալբեր Քամյուն «Ըմբոստը» էսսեում գրում է, որ Մարքսի և Էնգելսի գրչին պատկանող 30 հատոր աշխատություններ երբեք չեն հրատարակվել: «Հավանաբար այն պատճառով, որ նշված ստեղծագործությունները չեն համապատասխանում նրան, ինչն ընդունված է անվանել մարքսիզմ»: Կարդալով այս տողերը՝ խնդրեցի քարտուղարներիցս մեկին նամակ ուղարկել Մոսկվա, մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտ, տեղեկանալու համար, թե ինչքանով է ճիշտ ֆրանսիացի գրողը:

Ստացա պատասխանը: Ինստիտուտի փոխտնօրեն Մչեդլովը հայտարարում էր, որ Քամյուն ստում է, բայց և անուղղակիորեն հաստատում էր նրա կարծիքը, որ իսկապես, ընդհանուր հաշվով հարյուր հատորից լույս են տեսել միայն երեսունը: Այդ առթիվ փոխտնօրենը մի ծիծաղելի պատճառաբանություն է բերում. «Երկրորդ Համաշխարհային պատերազմը խանգարեց մնացած հատորների հրատարակմանը»: Այս նամակը գրվել է 1980թ.: Մի՞թե պատերազմի ավարտից հետո անցած 35 տարիների ընթացքում, սովետների երկրի Պետհրատարակչությունը չէր կարողացել հայթայթել անհրաժեշտ գումար այդ անելու համար:

Նամակից պարզ է դառնում, որ սովետական կոմունիստները, գաղտնի պահելով 100 հատոր կազմող ձեռագրերը, հաստատապես որոշել էին հրատարակել միայն 30-ը, և այստեղ ուրիշ բացատրություն լինել չի կարող, եթե ոչ այն, որ Մարքսի մտքերի մեծ մասը պետք է գաղտնի պահվեր:

Մարքսի անհանգիստ ու դժվարին կյանքը

Սատանայի բոլոր եռանդուն հետևորդներն ու կողմնակիցները, առանց բացառության, անհանգիստ ու դժվարին կյանք են ունեցել: Այդպիսին է եղել նաև Մարքսի կյանքը: Առնոլդ Կունցլին «Կարլ Մարքս - A պսիխոգրամ» գրքում մեղադրում է Մարքսին իր երկու դուստրերի և փեսայի ինքնասպանության համար: Երեք երեխաները մահացել են թերասնումից: Մարքսի աղջիկը՝ Լաուրան, սոցիալիստ Լաֆարգի կինը, նույնպես երեք երեխա թաղեց, որից հետո ամուսնու հետ մեկտեղ ինքնասպան եղավ: Մարքսի մյուս աղջիկը՝ Էլեոնորան, ամուսնու հետ նույնպես որոշում է նույնն անել: Նրան «հաջողվում է» ինքնասպանություն գործել, բայց ամուսինը վերջին պահին փոխում է իր որոշումը: Մարքսն ամենևին պարտավորված չէր զգում իրեն աշխատել և վաստակել ընտանիքի ապրուստը, չնայած հեշտորեն կարող էր այդ անել շնորհիվ լեզուների իր գերազանց իմացության, բայց գերադասում էր բավարարվել Էնգելսի տված ողորմություններով: Իր աղախնու հետ ունեցած կապի հետևանքով ծնված երեխայի հայրության պատիվը Մարքսը վերագրեց Էնգելսին: Վերջինս էլ համաձայնեց խաղալ այդ ծիծաղելի դերը: Մարքսը շատ էր խմում: Մոսկվայում մարքսիզմի ինստիտուտի տնօրեն Դավիդ Ռյազանովն այս մասին ակնարկում է իր «Կարլ Մարքսը որպես մտածող ու հեղափոխական» գրքում:

Մարքսն իր երեխաներից ամենից շատ սիրում էր Էլեոնորային, նրան անվանում էր Տուսսի և սիրում էր հաճախ կրկնել «Տուսսին ամբողջովին ես եմ, որ կամ»: Աղջկա համար մեծ հարված եղավ, երբ Էնգելսից իմացավ այդ սկանդալային դեպքի մասին, որը և նրան մղեց ինքնասպանության:

Պետք է նշել, որ «Կոմունիստական մանիֆեստ»-ում Մարքսն անարգանքի խոսքեր է ուղղում կապիտալիստներին, որոնք «ազատ տնօրինում են պրոլետարների կանանց ու աղջիկներին»: Նման կեղծավորությունը խորթ չէ Մարքսի էությանը:

Մեծ հեղափոխականի կյանքում, սակայն, ավելի մուգ բիծ կա: Գերմանական «Reichsruf» թերթը (1960թ. հունվարի 9) տեղեկացնում է, որ Ավստրիայի վարչապետ Ռաաբեն Մարքսի մի նամակի բնագիրը նվիրել է Սովետական Միության ղեկավար Նիկիտա Խրուշչովին: Վերջինս, թերևս, ըստ արժանվույն չի գնահատել նվերը, ուր ապացույցներ կային այն մասին, որ Մարքսն ավստրիական ոստիկանության գաղտնի գործակալ էր, և նրա միսիան հեղափոխականներին լրտեսելն էր:

Այս նամակը պատահաբար է գտնվել արխիվային գաղտնի պահոցներում: Այստեղ նաև նշվում է, որ Մարքսը Լոնդոն

աքսորված ժամանակ մատնել է իր ընկերներին և տեղեկություն-ների ամեն պատառիկի դիմաց ստացել 25 դոլար: Մարքս-մատ-նիչի տեղեկությունները վերաբերվում էին Լոնդոնի, Փարիզի և Շվեյցարիայի հեղափոխականներին: Նշված նյութերի մեջ տեղ են գտել նաև տեղեկություններ Մարքսի մտերիմ ընկեր Ռուգեի մասին, մինչդեռ առ այսօր պահպանվել են երկու ընկերների նամակագրության նյութերը, որոնք վկայում են ջերմ ու սերտ բարեկամության մասին:

Ռոլֆ Բաուերն իր «Հանճարը և հարստությունը» գրքում խոսում է Մարքսի արտառոց ու խելագար կյանքի մասին՝ նկատի ունենալով վեջինիս ֆինանսական կողմը. «Երբ նա ուսանող էր Բեռլինում, լինելով հորից երես առած, լկտի մի տղա, տարեկան 700 թալեր էր ստանում գրպանի ծախսերի համար»: Սա զգալի գումար էր, եթե հաշվի առնենք, որ այն ժամանակ բնակչության միայն 5% ուներ 300 թալերից բարձր եկամուտ: Կյանքի հետագա տարիներին Մարքսն Էնգելսից ստացավ 6 մլն. ֆրանսիական ֆրանկ: Մարքսն անընդհատ երազում էր որևէ մեկից ժառանգություն ստանալ: Հորեղբայրներից մեկը մահամերձ էր: Մարքսը գրում է. «Եթե այդ շունը սատկի, ես կփրկվեմ այս ծանր իրավիճակից»: Դրան Էնգելսը պատասխանում է այսպես. «Շատ ուրախացա ծանր հիվանդության լուրն առնելով: Վերջապես ժառանգություն ստանալու ճանապարհին խոչընդոտ չի լինի: Հուսով եմ ճակատագրական իրադարձությունը չի ուշանա»:

Վերջապես «շունը» հոգին ավանդում է: Կարդանք, թե ինչ է գրում Մարքսը 1855թ. մարտի 8-ին. «Հիանալի նորություն: Երեկ կնոջս 90-ամյա ծեր հորեղբոր մահվան լուրն առանք: Վերջապես կինս մոտ 100 ֆունտ ստեռլինգ կժառանգի, գուցե և ավելի, եթե միայն այդ ծեր շունն իր փողերի մի մասը տնտեսուհուն կտակած չլինի»:

Առանձնապես ջերմ զգացմունքներ չի տածում նա նաև ավելի մոտ ազգականների հանդեպ: Զարությամբ լցված Մարքսը խիստ բարկացած էր մոր վրա: 1863թ. դեկտեմբերին նա գրում է Էնգելսին. «Երկու ժամ առաջ հեռագիր ստացա: Մայրս մահացել է: Ճակատագրի կամքով ընտանիքիս անդամներից ևս մեկը պակասեց: Իմ մի ոտքն էլ էր արդեն գերեզմանում, բայց ներկա պայմաններում իմ առողջությունն ավելի կարևոր է, քան այդ ծեր կնոջ վիճակը: Պետք է Տրիր մեկնեմ ժառանգության կապակցությամբ»: Ահա այն ամենը, որ նա կարող է ասել մոր մահվան առթիվ:

Դեռ ավելին, կարելի է ապացուցել, որ Մարքսի ու իր կնոջ հարաբերություններն էլ այնքան ջերմ չեն եղել: Երկու անգամ կինը լքել է Մարքսին, ապա վերադարձել: Երբ կինը մահացավ,

նա նույնիսկ ներկա չէր թաղմանը:

Անընդհատ փող հայթայթելու մրցավազքի մեջ, չնայած տնտեսագետ լինելուն, Մարքսը հաճախակի մեծ գումարներ էր մսխում բորսայում: Նա, ինչպես և Էնգելսը, պատկանում էր մտավորականության բարձր խավին: Մինչդեռ նրանց նամակները հեղեղված են այդ դասի մարդկանց համար անսովոր, անվայել բառերով: Անընդհատ կարելի է հանդիպել անպատկառ արտահայտությունների, սակայն ոչ մի տեղ այս գաղափարախոսները չեն խոսում մարդասիրական կամ սոցիալիստական նպատակների ու երազանքների մասին:

Քանի որ Սատանայի աղանդը հույժ գաղտնի է, Մարքսի՝ աղանդի հետ ունեցած հնարավոր կապի մասին մենք կռահում ենք նրա ակնարկներից կամ էլ երկդիմի խոսքերից: Մարքսի անկանոն կյանքի ուսումնասիրությունը ևս մեկ օղակ չի՞ ավելացնում արդյոք այդ վարկածի օգտին կուտակվող փաստացի ապացույցների անվեջանալի շղթային:

3

Խարխլված հավատ

Էնգելսի հավատուրացությունը

Քանի որ Էնգելսը նշանակալից դեր է խաղացել Մարքսի կյանքում, ուստի կուզեի մի քանի խոսք ասել նրա մասին: Էնգելսը դաստիարակվել է բարեպաշտ ընտանիքում: Երիտասարդ տարիներին նույնիսկ քրիստոնեական ոգով մի քանի գեղեցիկ պոեմներ է գրել: Ահա Էնգելսի տպավորությունը Մարքսի հետ ծանոթանալուց հետո.

«Ո՞վ է նա. որսի ելած իսկական կատաղի գազան: Տրիրում ծնված մութ ու նենգ մի անձնավորություն (Տրիրը Մարքսի ծննդավայն է): Նա չի քայլում ու չի վազում, այլ պտտվում է տեղում՝ կատաղության ու ատելության մոլուցքով բռնված, ասես ուզում է կառչել երկնքի անսահման առագաստից ու վայր նետել այն: Բռունցքները սպառնալից սեղմած, նրա ցասումն ու մոլեգին կատաղությունը չի մարում, կարծես տասը հազար սատանաներ բռնել ու ձգում են մազերից» (Marx-Engels, Gesant Ausgabe, II հ., էջ 301):

Էնգելսը կարդալով լիբերալ աստվածաբան Բրունո Բաուերի մի գիրքը՝ սկսել էր կասկածել քրիստոնեական հավատքի ամրությանը: Այն ժամանակ նրա սիրտն իսկական թատերաբեմ էր: Ահա թե ինչ է նա գրում.

«Այն օրից ի վեր, ինչ կասկածը կրծում է սիրտս, անդադար աղոթում եմ, մինչդեռ վերադարձի ճամփան փակ է ինձ համար: Աչքերս արցունքով են լցվում այս տողերը գրելիս» (Karl Marx, Franz Mehring G Allen Unwin Londres, 1936թ.):

Եվ իսկապես, Էնգելսն Աստծո խոսքին դառնալու ուղին կորցնելով՝ հետևեց նրան, ում ինքն անվանել էր «բյուր սատանայի գերի դարձած հրեշ»: Սա հավատի գալու հակառակ պրոցեսն է կամ հավատուրացությունը:

Ինչպիսի՞ անձնավորություն էր Բրունո Բաուերը՝ այդ լիբերալ աստվածաբանը, որ նման վճռորոշ դեր է խաղացել Էնգելսի քրիստոնեական հավատի խարխլման գործում, և որին հավասարապես հաջողվել էր վստահություն ներշնչել Մարքսին՝ առաջ ընթանալու իր նոր հակաքրիստոնեական ճանապարհով: Գուցե

նա՞ էլ է առնչվել դևերի հետ: Ահա թե ինչ է գրում նա Առնոլդ Ռուգեին հղված նամակներից մեկում 1841թ. դեկտեմբերի 6-ին, այն նույն Ռուգեին, որն այս երեքի ընդհանուր ընկերն էր.

«Այստեղ՝ համալսարանում, մի շարք դասախոսություններ եմ կարդում լեփ-լեցուն լսարանների համար: Ինքս ինձ չեմ ճանաչում, երբ ամբիոնի բարձունքից սկսում եմ սրբապղծություններ ասել: Ունկնդիրներս այնքան ջահել են և անփորձ (մինչդեռ ոչ ոք իրավունք չունի խռովվելու նրանց հոգիները), որ իմ խոսքից նրանց մազերը բիզ-բիզ են կանգնում: Խոսքերս արտաբերելիս ակամայից հիշում եմ, թե ինչպիսի հավատքով ու բարեպաշտությամբ էի տանը գովաբանական տեքստեր շարադրում Սուրբ Գրքի և Հայտնության մասին: Համենայն դեպս, ամեն անգամ ամբիոնի առջև կանգնելիս զգում եմ, թե ինչպես է չար սատանան բուն դնում ներսումս, և այնքան անօգնական ու թույլ եմ, որ անկարող եմ այլ բան անել, զիջելուց բացի... Աստվածահայհոյության ոգիս ինձ հանգիստ կթողնի միայն այն ժամանակ, երբ ինձ կթույլատրվի բացեիբաց քարոզելու, որպես աթեիստական համակարգի դասախոս» (Marx-Engels, Historic critic complete-edition, Frankfurt a Main, 1927թ., հ. 1):

Այն մարդը, որ Էնգելսին համոզեց դառնալ կոմունիստ, նույն մարդն էր, որ դրանից առաջ Մարքսին էր համոզել: Դա Մ. Հեսսն էր, որը Քյոլնում Էնգելսի հետ հանդիպում ունենալուց հետո գրում է.

«Երբ մենք բաժանվեցինք, նա արդեն կատաղի կոմունիստ էր: Ահա թե ինչպիսի ավերածություններ եմ ես ունակ» (Hess, Oeuvres choisies, edition Joseph Melzer, Cologne, 1962թ.):

«Ավերածություններ գործել» – սա չէ՞ր արդյոք Հեսսի կյանքի գերնպատակը: Դա նաև Լյուցիֆերի գերագույն նպատակն է:

Էնգելսի հիշողության մեջ չմարեց նախկին Էնգելս-քրիստոնյայի լուսավոր կերպարը: 1865թ. նա իր հիացմունքն է արտահայտում «Ռեֆորմացիայի» հիմնի առթիվ. «Աստված պատվար ու նեցուկ է մեզ», «Այն հաղթական հիմն է, յուրովի Մարսելյեզ՝ գրված XVI դարում» («Բնության դիալեկտիկա»-ի ներածությունից): Նման օրինակներ շատ կարելի է գտնել Էնգելսի աշխատություններում՝ բոլորն էլ գրված հօգուտ քրիստոնեական դավանանքի:

Էնգելսի անձնական ողբերգությունն ավելի սրտաճմլիկ ու հուզիչ է, քան Մարքսինը: Ահա երիտասարդ տարիներին գրված պոեմից մի հատված, որը ձոն է՝ քրիստոնեական հավատքի ոգով տոգորված: Եվ գրված է մեկի կողմից, որը հետագայում եկեղեցու դեմ մղվող կործանարար ու ավերիչ պայքարում Մարքսի աջ ձեռքն է լինելու:

Տե՛ր իմ Հիսուս, Աստծո Միածին զավակ,
Աղաչում եմ, իջիր երկնային Գահից քո հեռավոր,
Մեղավոր հոգուս փրկություն բերելու համար,
Աղաչում եմ, իջիր օրհնանքով քո բյուր,
Դո՛ւ, մեր Սուրբ Հոգու լույս և իմաստություն,
Եվ թույլ տուր ընտրությունն իմ անել արդար:
Օ՜, ինչ հաճելի է, վեհ, ուրախ ու անխառն,
Բերկրանքն այն, որով, ո՛վ մեր Փրկիչ,
Քեզ ենք հղում փառաբանման ձոնը մեր:

Երբ հոգիս ավանդեմ,
Ու մահվան ցավը տանջահար անի հոգիս,
Ամուր կկառչեմ ես Քեզնից:
Երբ կոպերս հոգնած փակվեն,
Ու սիրտս էլ դադարի բաբախել,
Թող մարմինս ունայն սառչի Գրկիդ մեջ՝
Երկնքի անհաս բարձունքներում ջինջ,
Թող միտքս հավերժ փառաբանի անունը Քո,
Քանզի Քո ապահով թևերի մեջ պիտ հանգչի նա:

Ցնծալի պահ, կենչի ժամը քո, գուցե և շուտ,
Քանզի այնժամ ծնունդ առնելով Գորովալի Կրծքիցդ,
Նոր կյանքի շողերից գուցե թե հոգիս ջերմանա,
Այնժամ Քո առաջ բացելով ողորմածությամբ լի սիրտն իմ,
Կկարողանամ կրծքիս առհավետ սեղմել,
Բոլոր-բոլոր նրանց, որ թանկ են ինձ անչափ:
Ախ, կուզեի ապրել հավիտենապես,
Ապրել սուզված Քո մեծության հայեցողության մեջ,
Թող ուրեմն, կյանքս հոսի նոր թափով շարունակ:

Դու եկար փրկելու մարդկանց
Չարից, ցավից ու անէությունից,
Եվ ապա օրհնանք ու երջանիկ բախտ
Ամենքին շնորհելու համար:
Քո վերադարձը մեր կյանքում
Ամեն ինչ կփոխի, կբարելավի,
Եվ ամեն մեկը հասանելիքն իր կստանա:

Բրունո Բաուերին արդեն հաջողվել էր կասկած սերմանել Էնգելսի հոգում, երբ վերջինս գրում է իր ընկերներից մի քանիսին. «Գրված է՝ պահանջե՛ք և կստանաք: Ես ճշմարտություն եմ փնտրում ամենուր, ուր հույս ունեմ գտնել նրա ամենաանչան ստվերն անգամ: Մինչ այսօր ինձ չի հաջողվել ձեր ճշմարտության մեջ հավերժական ճշմարտությունը տեսնել: Այո՛, գրված է՝ Փնտրե՛ք և կգտնեք: Եվ նաև. «Ո՞վ է այն մարդը, որից իր որդին հաց ուզի, քար կտա: Արդ, որքա՜ն առավել ձեր Հայրը, որ երկնքում է, բարիքներ կտա նրանց, ովքեր Իրենից ուզում են»: Արցունքներն են խեղդում ինձ այս տողերը գրելիս: Խորապես հուզվում եմ, բայց զգում եմ, չեմ կորչի: Ես դարձի կգամ դեպ իմ Աստվածը, որին հոգիս ձգտում է անսահմանորեն: Սա ևս Սուրբ Հոգու հզորության վկայություն է: Ես ապրում եմ այդ վկայությունով և կմեռնեմ նույն համոզմունքով... Աստծո Հոգին է վկայում իմ մեջ, որ ես Աստծո որդին եմ»:

Նա հստակ պատկերացնում էր, թե ինչպիսի վտանգ էր իրենից ներկայացնում սատանան...

«Շելլինգը՝ քրիստոնեության փիլիսոփա» հոդվածում կարդում ենք Էնգելսի հետևյալ տողերը.

«Ֆրանսիական հեղափոխության օրերից սկսած կատարելապես նոր, անծանոթ դիվային ոգին սողոսկել է մարդկության սիրտը, և աթեիզմն իր սպառնալի գլուխն է բարձրացրել այնպիսի անպատկառությամբ, որ կարելի է մտածել, թե Սուրբ Գրքի մարգարեությունների ժամանակը հասել է: Եկեք տեսնենք, թե ինչ է ասում Աստվածաշունչը վերջին ժամանակների անաստվածների մասին: Նախ Հիսուսի խոսքերը (Մատթ 24.11-13). «Եվ շատ մարգարեներ դուրս կգան և շատերին կմոլորեցնեն: Եվ անօրենության շատանալու պատճառով շատերի սերը կսառչի: Բայց ով մինչև վերջ համբերի՝ նա կփրկվի: Եվ արքայության այս Ավետարանը կքարոզվի ողջ տիեզերքում, բոլոր հեթանոսներին վկայություն լինելու համար, և այն ժամանակ կգա վերջը»:

Եվ ապա. «Սուտ քրիստոսներ ու սուտ մարգարեներ վեր կկենան և մեծ նշաններ ու մեծ հրաշքներ ցույց կտան, մինչև որ եթե կարելի լինի, ընտրյալներին էլ մոլորեցնեն» (Մատթ 24.24):

Պողոս Առաքյալն իր ուղերձներից մեկում (Բ Թես 2.3-11) գրում է. «Կգա ուխտադրժության ժամանակը, կհայտնվի անօրենության մարդը, կորստի Որդին, այն Հակառակորդը, որ գոռոզացած է այն ամենի վրա, որ Աստված կամ Աստծո պաշտոնյա է անվանված: Նրա գալը սատանայի ներգործությունն է, ամեն զորությունով և սուտ նշաններով և հրաշքներով: Եվ անիրավության ամեն խաբեություններով կորուսյալների մեջ. նրա փոխարեն, որ ճշմարտության սերը չընդունեցին, որ ապրեն և դրա համար Աստված մոլորության ներգործություն կուղարկի նրանց, որ հավատան ստության ու դատապարտվեն ամենը, որ չհավատացին ճշմարտությանը և հավանեցին անօրենությունը»:

Էնգելսը հատվածներ է մեջբերում Սուրբ Գրքից այնպիսի հմտությամբ, որ սազական կլիներ ամենափորձառու աստվածաբանին միայն:

Նա շարունակում է այսպես. «Այժմ արդեն հնարավոր չէ սառնությամբ ու անտարբերությամբ վերաբերվել Տիրոջը: Ո՛չ, այժմ խոսքը գնում է բացահայտ թշնամության մասին. չկան բազում աղանդներ ու կուսակցություններ: Ի վերջո, առկա են սոսկ երկու խմբավորումներ՝ քրիստոնյաներ և հակաքրիստոնյաներ... Մեր շարքերում ի չարս են գործում սուտ մարգարեները... Նրանք ամենուր են Գերմանիայում և փորձում են սողոսկել ամեն տեղ՝ հրապարակներում քարոզելու համար սատանայական ուսմունքը ու ծածանելու սատանայի դրոշը քաղաքից-քաղաք՝ հուսահատ երիտասարդությանը մոլորեցնելու, և նրան դժոխքի ու մահվան խորխորատները ներքաշելու համար»: Իր գիրքն Էնգելսն ավարտում է Հայտնության հետևյալ տողերով (3.11).

«Ահա ես գալիս եմ շուտով. պահիր այն, որ ունես, որ ոչ ոք չառնի քո պսակը»:

Այսպիսով, այն մարդը, որ նման պոեմներ է գրում ու հայտարարություններ անում ընդդեմ սատանայի, այն մարդը, որ արցունք է թափում՝ այդ վտանգից փրկվելու հույս աղերսելով, որի խոսքերով՝ Մարքսը «բյուր դևերի բաժին դարձած հրեշ է», ահա այս մարդն էլ հենց դառնում է Մարքսի ամենամտերիմ համախոհն ու կողմնակիցը՝ բարոյականության ու հավատի վերջին նշույլն անգամ կործանելու սատանայական պայքարում:

Լիբերալ աստվածաբանությունը նրան հասցրեց այդտեղ: Նրանց՝ Մարքսի ու Էնգելսի ուսերին է ծանրացած պատասխանատվությունը կոմունիզմի թրից կործանված տասնյակ հազարավոր անմեղ կյանքերի համար: Ի՜նչ սոսկալի հոգևոր դրամա:

Մարքսի ատելությունն ընդդեմ բոլոր ազգերի

Այժմ հանգիստ թողնենք Էնգելսին ու վերադառնանք Մարքսին, որի վարքն ու ճառերն ամբողջությամբ սատանայական բնույթի էին:

Մոռանալով իր հրեա լինելը՝ չհապաղեց հրատարակել հրեատյաց բնույթի մի գիրք «Հրեական հարցը» վերնագրով: 1856թ. «Նյու-Յորք Տրիբուն» թերթում նա զետեղում է «Ռուսական փոխառություն» վերնագրով մի հոդված, ուր կարդում ենք.

«Մեզ հայտնի է, որ ամեն մի բանակալի ետևում կանգնած է մի հրեա, ինչպես որ ամեն Պապի ետևում՝ ճիզվիտ: Ինչպես որ ճիզվիտների հոծ բանակն է խեղդում ազատ մտքի փայլատակումը, նույն բախտին է արժանանում ճնշվածների ազատության ճիչը, իսկ կապիտալիստների կողմից քաջալերվող պատերազմների անհեթեթությունն ակներև կլիներ, եթե չլինեին հրեաները, որոնք օգուտ են քաղում այս ամենից: Հարկ չկա զարմանալ այն բանի վրա, որ 1856 տարի առաջ Հիսուսը վտարում էր վաճխառուներին Երուսաղեմից: Նրանք շատ նման են այսօրվա վաճխառուներին, որոնք թաքնվում են բանակալների հովանու ներքո: Նրանցից շատերը հրեաներ են: Այն փաստը, որ հրեաները հզորացել են մեր մոլորակի խաղաղ կյանքը վտանգելու աստիճան, մեզ ստիպում է նրանց կազմակերպությունն ու նպատակները ջրի երես հանել ու այնպես ներկայացնել, որ այդ գարշահոտությունից ոտքի կանգնի համայն աշխարհի աշխատավորությունը՝ պայքարելու և այդ վարակը վերացնելու համար»:

Մի՞թե Հիտլերը սրանից ավելի վատ է ասել:

(Տարօրինակ բան. Մարքսը «Կապիտալ»-ի 1-ին հատորում «Մանուֆակտուրայի կապիտալիստական բնույթը» գլխում գրում է հակառակը. «Այս ընտրյալ ազգի ներկայացուցիչների ճակատին խարանված է, որ իրենք Եհովային են պատկանում»):

Շատ կոմունիստներ կիսել են Մարքսի բուռն ատելությունը հրեաների հանդեպ: Պառլամենտի անդամ, գերմանացի, ծագումով հրեա, հայտնի կոմունիստական լիդեր Ռութ Ֆիշերն ասում էր. «Բնաջնջե՛ք հրեա կապիտալիստներին, կախե՛ք նրանց փողոցային լապտերներից, ոտնակոխ արեք նրանց...»: Ինչո՞ւ հատկապես հրեա կապիտալիստներին և ոչ մյուսներին: Հարցն անպատասխան է մնում:

Մարքսի ատելությունը ոչ միայն հրեաներին էր ուղղված: Նա հավասարապես չէր սիրում գերմանացիներին:

«Նրանց արթնացնելու միակ միջոցը,-ենթադրում էր Մարքսը,-մահակի հարվածն է»: Այնուհետև խոսում է «գերմանական հիմար ժողովրդի» ու նրանց «մտքի՝ արհամարհանքի արժանի սահմանափակության» մասին: Այնուհետև. «Գերմանացիներին, չինացիներին, հրեաներին կարելի է համեմատել միայն փերեզակների ու չարչիների հետ», ռուսներին անվանում է «կաղամբ ուտողներ», «սլավոնական ազգերն էթնիկական խոտան են:: Այսպիսով, շատ ու շատ ազգերի հանդեպ Մարքսն ի ցույց է դնում ոչ թե իր սերը, այլ բուռն ատելությունը:

Մարքսը 1848թ. ամանորին գրված շրջաբերական նամակում ակնարկում է, որ «սլավոնական տականքները» հեղեղել են ամբողջ Ռուսաստանը, Չեխոսլովակիան ու Խորվաթիան: Այդ «հետամնաց ռասաները» զրկված են ճակատագրի բարեհաճությունից և «նրանց ճակատին ակներևորեն գրոշմված է խեղդվել համաշխարհային հեղափոխության թոհուբոհի մեջ»: «Մոտեցող

համաշխարհային պատերազմը երկրի երեսից կբնաջնջի ոչ միայն դասակարգեր ու հետադիմական դինաստիաներ, այլև ազգեր: Այս է առաջընթացի իմաստը: Նրանց անունն անգամ կմոռացվի» (Bertram Wolfe, Marxism):

Ո՛չ Մարքսը, ոչ էլ Էնգելսն ամենևին մտահոգված չէին միլիոնավոր մարդկանց կործանման փաստով: Մարքսը գրում է.

«Հասարակության մեջ կամացուկ ծնվում է անխուսափելի հեղափոխությունը, որին նույնքան է հուզում կործանվող մարդկային կյանքը, որքան տներ քարուքանդ անող երկրաշարժին՝ իր ավերածությունները: Թույլ, ոչ կենսունակ ռասաներն ու դասակարգերը, որոնք չեն դիմանա գոյության նոր պայմաններին, կպարտվեն ու կանհետանան»:

Եթե համեմատելու լինենք Հիտլերի հետ, վերջինիս նպատակը, համենայն դեպս, այդ ազգերի ստրկացումն էր և ոչ համընդհանուր ոչնչացումը: Ըստ էության, նա ավելի մարդկային էր, քան Մարքսը: Էնգելսը նույնպիսի եռանդով գրում է.

«Վրա հասնող համաշխարհային պատերազմը երկրի երեսից ամբողջապես կվերացնի հետադիմական ժողովուրդներին: Սրան մեկ անուն կարելի է տալ՝ առաջընթաց» (Werke, VI, էջ 176):

«Ակներև է, որ այս ամենի հետ կոչնչանան ազգի ծաղիկը հանդիսացող ներկայացուցիչներից շատերը: Բայց պատմության մեջ ոչինչ հնարավոր չէ ձեռք բերել առանց բռնության ու անողոքության» (Deutschland Magazine, փետրվար, 1985):

Մարքսը, որն իրեն պրոլետարիատի պաշտպանն էր համարում, նույն այդ դասակարգին անվանում էր «հիմարների, սրիկաների ու էշերի դաս»:

Էնգելսը փայլուն գիտակցում էր, թե իրենց ինչ է սպասում. «Դեմոկրատական, կարմիր, այո՛, նույնիսկ կոմունիստական տգետ խաժամուժը երբեք մեզ չի համակրի»:

Մարքսը սեմամորթներին անվանում էր «հիմարներ» և մշտապես իր նամակներում օգտագործում «նեգր» վիրավորական տերմինը: Իր հակառակորդ Լասալին անվանում էր «նեգր հրեա», ընդգծելով, որ այդ նվաստացուցիչ տերմինը վերաբերում էր միմիայն նրան:

«Ինձ համար պարզ է հետևյալը. ըստ իր գլխի կազմության ու գանգուր մազերի, նա սերում է նեգրերից, նույն նրանցից, որ հետևեցին Մովսեսին՝ Եգիպտոսից փախչելիս (հավանական է, որ նրա մայրը կամ հորական կողմից տատն ամուսնացած է եղել նեգրի հետ)... Քանի որ վերջինիս վանող տեսքը սազական է միայն նեգրին»:

Մարքսը նույնիսկ ելույթներ է ունեցել՝ արդարացնելով ու պաշտպանելով ստրկատիրությունը Հյուսիսային Ամերիկայում:

Այս հարցի կապակցությամբ նա նույնիսկ վիճել է իր ընկեր Պրուդոնի հետ, որը կողմ էր Միացյալ Նահանգներում ստրուկների ազատագրմանը: Այսպես է Մարքսը պատասխանել նրան. «Առանց ստրուկների Հյուսիսային Ամերիկան առաջնակարգ ու զարգացած երկրից կվերածվի տոհմատիրական կարգերով ապրող մեծ հողատարածության: Ջնջեք Հյուսիսային Ամերիկան աշխարհի քարտեզից, ու կտիրի անարխիա, առևտրի ու ժամանակակից քաղաքակրթության համընդհանուր փլուզում: Վերացրեք ստրկությունը, և Հյուսիսային Ամերիկան կվերանա աշխարհի քարտեզից» (K. Marx, Racist, New Rochelle, N. York, Arlington House): Մարքսին են պատկանում նաև այս խոսքերը. «Սատանան տանի այդ անգլիացիներին» (Werke, 35, էջ 122):

Սատանան Մարքսի ընտանիքում

Մարքսի սիրելի աղջիկը՝ Էլեոնորան, հոր համաձայնությամբ, ամուսնացել էր Էդվարդ Ավելինգի հետ: Վերջինս դասախոսություններ էր կարդում «Աստծո այլասերվածությունը» և այլ թեմաներով: (Հիրավի սատանայական միտք: Սատանայի համախոհները չեն ժխտում Աստծո գոյությունը, ինչպես դա անում են աթեիստները, իսկ եթե ժխտում են, ուրեմն մոլորության մեջ գցելու համար միայն: Ընդհանրապես, նրանք հաստատապես գիտեն, որ Աստված կա, պարզապես նրան չար ու այլասերված են ներկայացնում): Իր դասախոսություններում Էդվարդը փորձում էր ապացուցել, որ «Աստծուն հաճո է բազմամուսնությունը և, որ նա հավանություն է տալիս գողությանը»: Նա պաշտպանում էր նաև աստվածհայհոյության իրավունքը: (The life of Eleanor Marx, Chushichi Tsuzuki, Clarendon Press. Oxford, 1967): Հետևյալ պոեմում շատ լավ արտացոլվում է աստվածիմացական նրա վերաբերմունքը հօգուտ սատանայի.

Քեզ եմ հղում հանդուգն ու անզուսպ տողերն այս
փառաբանող,
Քեզ, ո՛վ Սատանա, խնջույքի արքա,
Կորի՛ր, գնա՛, դու, քահանա, զուր գործերիդ ու միալար
երգերիդ հետ մեկտեղ,
Քանզի, ո՛վ քահանա, նեցուկ չի լինի Սատանան քեզ երբեք:

Շունչդ առնելով, ո՛վ Սատանա, գրեցի տողերն այս
խանդավառ,
Երբ հոգուս խորքից մարտահրավեր էի նետում Աստծուն:

Կորչեն մեծանուն թագավորներն ու մեծավորները տմարդի,
Մնկի կիջնեմ միայն քո շանթ ու կայծակի առջև, մտքեր
փոթորկող:

Սատանան ողորմած է: Նայիր էլոիզին,
Իր թևերը մրրիկի պես տարածելով հպարտ
Անցնում է, օ՛, ժողովուրդներ, պայծառափայլ Սատանան:

Ողջույն քեզ, բանականության մեծագույն պաշտպան,
Սրբազան խնկարույրն ու մաղթանքները քեզ են արժանի
միայն,
Քանզի ի զորու եղար գահընկեց անել դու Աստծուն երկնքից:
(The Prince of Darkness, Tatford, Bible and Advent Testimony movement):

4

Զափազանց ուշ է

Աղախնու խոստովանությունը

Սերժիուս Ռիիս անունով մի ամերիկացի կապիտան Մարքսի երկրպագուներից էր: Լսելով Մարքսի մահվան լուրը, նա մեկնում է Լոնդոն՝ այցելելու այն տունը, ուր ապրել էր սիրելի ուսուցիչը: Մարքսի ընտանիքը տեղափոխվել էր: Միակ անձնավորությունը, որից կարող էր տեղեկություններ հավաքել, Մարքսի նախկին աղախինն էր, որը նրան հետևյալ զարմանալի խոսքերն ասաց.

«Նա աստվածավախ մարդ էր: Երբ ծանր հիվանդ էր, շարունակ միայնակ, իր սենյակում ծնկաչոք աղոթում էր վառվող մոմերի մի ամբողջ շարքի առջև՝ ճակատին ինչ-որ ժապավեն կապած» (S.M.Riis, Marx Master of Fraud, Speller, New-York, 1962):

Այս խոսքերն ակամայից հիշեցնում են գրապանակները,* որոնք ուղղափառ հրեաները որպես թալիսման կրում են առավոտյան աղոթքի ժամանակ: Մարքսը, մկրտված լինելով որպես քրիստոնյա, երբեք հրեական կրոնով չի տարվել: Հետագայում Աստծո երդվյալ թշնամին դարձավ՝ գրելով բազմաթիվ հակաքրիստոնեական գրքեր ու իր երեխաներին էլ դաստիարակեց աթեիզմի ոգով: Ի՞նչ արարողության մասին է խոսում աղախինը, որը տգիտության պատճառով չփոթել էր աղոթքի հետ: Երբ հրեաները ժապավենը ճակատին աղոթք են անում, երբեք չեն կանգնում մոմերի առջև: Խոսքն արդյոք չի՞ գնում մոգական որևէ ծեսի մասին: Հայտնի է նաև, որ Մարքսը լինելով աթեիստ, իր աշխատասենյակում ուներ Զևսի կիսանդրին: Արդ, հունական դիցաբանության մեջ Զևսը՝ այդ հեթանոսական դաժան աստվա-

* Գրապանակ (հուն.՝ ֆիլակտերի, երբ.՝ տեֆիլին՝ տեֆիլ-աղոթք բառից) - մագաղաթյա փոքրիկ տուփ է, որի մեջ ոլորված պահվում են Սուրբ Գրքից վերցված հետևյալ հատվածները՝ Ելից 13. 1-16, Բ Օրին 6. 4-9, 11. 13-21: Յուրաքանչյուր ուղղափառ հրեա պարտավոր է ունենալ երկու գրապանակ, որոնք ժապավեններով հավատացյալ հրեան կրում է մեկը թևին, մյուսը՝ ճակատին, առավոտյան աղոթքի ժամանակ (բացի շաբաթ և տոն օրերից):

ծությունը, կերպարանափոխվում է ցլի և գերում Եվրոպային. այն, ինչ որ ավելի ուշ իրագործեց մարքսիզմը:

Պատահական զուգադիպություն է նաև այն, որ Զևսի մերկամարմին արձանը, որն, ի դեպ, խորհրդանշում է վայրագություն և անգթություն, միակ գեղարվեստական գործն է կրոնական թեմայով, որ դրված է... Նյու-Յորքում գտնվող Միացյալ Ազգերի կազմակերպության շենքի մեծ նախասրահում:

Ընտանեկան նամակագրություն

Այս վարկածի օգտին է խոսում մեկ այլ փաստ ևս: 1854թ. մարտի 31-ին, Էդգարի՝ Մարքսի որդու, հորն ուղղված նամակը սկսվում է այսպիսի ապշեցուցիչ բառերով. «իմ սիրելի սատանա» (M. E. Briefwechsel II l., M.E. Lenin Institut, Moscou, էջ. 18):

Լավ՞ած բան է, որ որդին հորը դիմի այս կերպ, մինչդեռ այսպես են դիմում սատանայապաշտներն իրենց շատ սիրելիներին: Գուցե որդին նո՞ւյնպես ձեռնադրված անդամներից է եղել: Պակաս հետաքրքիր չէ նաև 1844թ. օգոստոսին Մարքսի կնոջ նամակն ուղղված ամուսնուն. «Ո՛վ մեծ քուրմ և հոգիների տիրակալ, ձեր վերջին հովվական ուղերձը կրկին խաղաղություն ու հանգիստ բերեց ձեր խեղճ գառնուկին» (Marx-Engels, Gesamt Asgabe, Berlin-Est, 1967-74 tome suppl. 1., էջ 654):

«Կոմունիստական մանիֆեստ»-ում Մարքսը հստակորեն շարադրում է իր նպատակը՝ խորտակել կրոնի բոլոր ձևերը: Պետք է ենթադրել, որ նաև՝ սատանայի պաշտամունքը: Մինչդեռ կինը Մարքսին անվանում է «մեծ քուրմ և տիրակալ» (բառացի՝ եպիսկոպոս): Այդ ո՞ր կրոնի մասին է խոսքը: Եվրոպայում հայտնի միակ կրոնը, որն ունի գերագույն քրմեր - սատանայական կրոնն է: Իսկ հովվական նամակները մի՞թե կարող էին շարադրված լինել մեկի կողմից, որն աթեիստ է, և ո՞ւր են դրանք: Դժբախտաբար Մարքսի կյանքի որոշ հատվածներ հետազոտված չեն:

Կենսագիրների վկայությունը

Մարքսի կենսագիրներից մի քանիսն ինչ-որ չափով կռահել էին իրենց գրքի «հերոսի» և սատանայական կրոնի միջև հնարավոր կապի մասին, բայց անհրաժեշտ հոգևոր պատրաստություն չունենալու պատճառով չեն կարողացել ըմբռնել դրա էությունը: Այնուամենայնիվ նրանց վկայությունները զուրկ չեն հետաքրքրությունից:

Մարքսիստ Ֆրանց Մեհրինգն իր «Կարլ Մարքս» գրքում գրում է. «Չնայած Մարքսի հայրը մահացավ այն ժամանակ, երբ որդու 20 տարին արդեն լրացել էր, համենայն դեպս, նա արդեն ներքին վախով բացահայտել էր սատանայի ներկայությունն իր սիրելի որդու մեջ...

Հենրի Մարքսը չէր կանխատեսել (և ինչպե՞ս կարող էր), որ բուրժուական մշակութային ժառանգությունը, որ փոխանցել էր որդուն, և որն իսկապես արժեքավոր էր, ծառայելու էր լոկ որդու սրտում սատանայի համար ճանապարհ հարթելուն, մի բան, որից նա այնքան սարսափում էր»:

Մարքսը մահացավ շատ վհատված ու հուսահատ, ինչպես և սատանայի բոլոր երկրպագուները: 1883թ. մայիսի 25-ին նա գրում է Էնգելսին. «Օ՜, ինչ դաժան և ունայն է կյանքը և միաժամանակ՝ ինչքա՜ն ցանկալի»:

Մարքսը քրիստոնեական հավատի այնպիսի արժանավոր ներկայացուցիչների ժամանակակիցն է եղել, ինչպիսիք են կոմպոզիտոր Մենդելսոնը, մեծ բարեգործ դոկտոր Բերնարդոն, անվանի քարոզիչներ Շարլ Սպուրժոնը և գեներալ Վիլյամ Բոթը: Նրանք բոլորն էլ ապրել են Լոնդոնում, Մարքսի տնից ոչ հեռու: Նրանց մասին Մարքսն ընդհանրապես չի խոսում, քանի որ նրանց չի նկատել:

Մարքսիզմն իր մեջ այնպիսի առեղծված և գաղտնիք է ամփոփում, որ հայտնի է միայն քիչ թվով հետևորդների: Նույնիսկ Լենինը գրել է. «Կես հարյուրամյակ է արդեն անցել, բայց ոչ մի մարքսիստ չի կարող պարծենալ, թե, ըստ էության, հասկացել է Մարքսին» (Hegel, W Kaufmann, Doubleday, New-York, 1965):

Լենինի կյանքի գաղտնիքը

Լենինի կյանքը նույնպես զերծ չէ գաղտնիքներից: Երբ աշխատում էի այս գրքի առաջին հրատարակության վրա, դեռ ծանոթ չէի, թե ինչ չափով էր Լենինն անձամբ մասնակցություն ունեցել սատանայական աղանդի «ծիսակատարություններին»: Վերջերս Լենինի ընկեր և համագործակից Տրոցկու «Երիտասարդ Լենինը» գրքում կարդացի, որ 16 տարեկան հասակում նա խաչը պոկելով վզից, թքել է վրան ու ոտնակոխ արել, ինչը գործնականում և սովորաբար ընդունված է այս կրոնում: Կասկած չի մնում, որ Լենինը վերոհիշյալ գաղափարախոսության համախոհն է եղել: Այլ կերպ ինչպե՞ս բացատրել 1913թ. նոյեմբերին Մաքսիմ Գորկուն ուղղված նամակներից մեկի հետևյալ հատվածը. «Միլիոնավոր մեղքերը, չարագործություններն ու համաճարակ-

ները պակաս վտանգավոր են, քան որևէ աստծո կոնկրետ գաղափարը կամ աղոտ միտքը, եթե նա թաքնված է ամենագեղեցիկ ու բարձրագույն նպատակի քողի ներքո» (Oeuvres completes de Lenine. edition en russe, *հատ. 48, էջ 226-227):*

Վերջում Լենինը ևս հիասթափվեց սատանայից, ինչպես և վերջինիս համախոհներից շատ-շատերը: Սովետական պետության մասին Լենինը գրում է. «Պետությունը մեր ուզածի պես չի գործում: Ինչո՞ւ: Մեքենան չի ենթարկվում, ղեկին վարորդ կա, բայց գնում է մեկ այլ ուժի զորության թելադրանքով» (Lenin, *հատ.* XXXIII, *էջ 284): Այդ ի՞նչ «ուրիշ» առեղծվածային ուժ է, որ խառնել է նույնիսկ բոլշևիկյան ղեկավարների պլանները: Թե՞ նրանք տուրք են տվել մի զորության, հույսով, որ կկարողանան կառավարել այն, բայց որն ավելի զորեղ գտնվեց՝ նրանց մղելով հուսահատության:*

1921թ. գրված մի նամակում կարդում ենք Լենինի հետևյալ խոսքերը.

«Մենք բոլորս արժանի ենք կախվելու հոտած ու փտած պարաններով: Հուսով եմ, որ դա պատահելու է, քանի որ չենք կարողանում վերջ տալ այս կեղտոտ բյուրոկրատիային: Եթե դա պատահի, ուրեմն ամեն ինչ ճիշտ է» (հատ. XXXVI, *էջ 572): Այս էր Լենինի վերջին հույսն այն բանից հետո, երբ իր ամբողջ կյանքն ի սպաս էր դրել հանուն կոմունիստական գաղափարների. արդարացի դատավճիռ՝ կախաղան, այն էլ հոտած պարաններով: Նրա հույսը չիրականացավ, բայց Լենինի համարյա բոլոր զինակիցները մահվան դատապարտվեցին Ստալինի կողմից, այն էլ այն բանից հետո, երբ հրապարակայնորեն ընդունում էին, որ իրենք ծառայել են ոչ թե պրոլետարիատին՝ իբր նրան օգնելու և նրա վիճակը թեթևացնելու համար, այլ ուրիշ իշխանությունների:*

Ի՜նչ զարմանալի խոստովանություն. հույս ունենալ կախված լինել հոտած պարանով»:

Հետաքրքիր է նշել, որ 13 տարեկանում Լենինը գրել է այսպես կոչված մարգարեական պոեմ՝ կանխագուշակելով ձախողման անդունդը, որը կլանելու և խեղդելու էր իր կյանքը: Նա որոշել էր ծառայել մարդկությանը, սակայն առանց Աստծո օգնության: Ահա նրա խոսքերը.

Զոհելով կյանքդ ուրիշների համար,
Վերջում, ավաղ, fn զոհաբերության
Անփառունակ բախտը տեսնելու
Տխուր պատվին կարժանանաս դու:

(Buldinik, Russia n *48 գր 1883,* The New-Review, New-York, *140/1980, էջ 276)*

Ինչպիսի՜ հակադրություն ու անհամատեղելիություն, եթե համեմատելու լինենք արդարության համար մարտնչող մեկ այլ մարտիկի՝ Պողոս Առաքյալի հետ, որն իր կյանքի ավարտին գրում է.

«Բարի պատերազմը պատերազմեցի, ընթացքը կատարեցի, հավատքը պահեցի: Այսուհետև մնում է ինձ արդարության պսակը, որ Տերը կտա ինձ այն օրը՝ արդար դատավորը և ոչ միայն ինձ, այլև ամենքին, որ սիրեցին Նրա հայտնությունը» (Բ Տիմ 4.7,8):

Հոգևոր ոլորտում երբեմն չափազանց ուշ է լինում: Եսավը դառն արցունք թափելով՝ դառնորեն զղջաց անդրանիկության իր իրավունքը ծախելու համար, բայց գործարքը քանդել անհնարին էր այլևս: Սովետական պետության հիմնադիր Լենինը մահվան մահճում գրում է.

«Ես շատ լուրջ սխալ եմ գործել: Շարունակ մղձավանջների մեջ եմ. ինձ թվում է, թե չնչահեղձ եմ լինում արյան ծովի, անթիվ զոհերի արյան մեջ: Այժմ չափազանց ուշ է ետ դառնալը: Մեր երկիրը՝ Ռուսաստանը, փրկել կկարողանային Ֆրանցիսկ Ասսիզացու պես մարդիկ: Նրա նման 10 հոգին բավական կլիներ, որ Ռուսաստանը փրկվեր»:

5

Նողկալի նմանակում

Բուխարին, Ստալին, Մաո, Ջաուշեսկու, Անդրոպով

Սույն ուսումնասիրությունների տվյալ էտապում թերևս հետաքրքիր կլիներ հայացք նետել մեր օրերի մարքսիստներից մի քանիսի կյանքի ուղու վրա: Կոմունիստական Ինտերնացիոնալի գլխավոր քարտուղար և դարաշրջանի տեսաբաններից ամենակարկառունը՝ Բուխարինը, Հովհաննես Առաքյալի «Հայտնության» ընթերցումից հետո, 12 տարեկան հասակում արդեն անասելի մի ցանկություն է ունեցել՝ դառնալ հակաքրիստոս՝ Նեռ: Սուրբ Գրքից իմանալով, որ Նեռը ծնվելու է Հայտնության մեծ պոռնիկից, նա ստիպում էր մորը խոստովանել, որ զբաղվել է անառակությամբ:

Ստալինի մասին նա գրել է. «Նա ոչ թե մարդ է, այլ՝ դև» (Georges Kathov, the Trial of Bukharin, Londres B. T. Batsford 1969 թ., 1, էջ 29):

Զափազանց ուշ էր, երբ Բուխարինի համար պարզ դարձավ, թե ինչ թակարդի մեջ էր ընկել ինքը: Մահվանից մի քանի ժամ առաջ գրված նամակում, որը Բուխարինն ապսպրում է կնոջն անգիր անել, նա գրում է.

«Կյանքիս վախճանը շատ մոտ է, ահա ես խոնարհում եմ գլուխս դահճի կացնի տակ ու զգում իմ անզորությունն այդ դժոխային սարքի առջև» (Medvedev, Le stalinisme, Seuil, Paris): Իր գործունեությամբ նա նպաստել էր այն հսկա գիլյոտինի կառուցմանը, որ Սովետական Պետություն է կոչվում, և որ միլիոնավոր մարդկանց կործանման պատճառը հանդիսացավ... Միայն կյանքի վերջում նա հասկացավ, որ իր նախագիծը դժոխքի որոգայթ էր լոկ: Նա ցանկանում էր դառնալ հակաքրիստոս, փոխարենը նրա զոհը դարձավ:

Կագանովիչը՝ Ստալինի փեսան ու զինակիցը, նույնն է գրում իր օրագրում (այն շուտով կհրապարակվի).

«Կամաց-կամաց սկսում եմ հասկանալ, թե ինչ ձևով Ստալինն աստվածացրեց իր անձը: Նրա խառնվածքը զերծ էր որևէ մարդկային գծից: Նույնիսկ, եթե երբեմն կարելի էր գուշակել նրա թաքուն հույզերն ու զգացմունքները, ապա դրանք կարծես իրեն

չէին պատկանում, քանզի անչափ կեղծ էին: Սրանց հետևում իսկական Ստալինն էր՝ իսկը պողպատի կտոր: Հիմնավորապես կարծում եմ, որ նա երբեք չի մեռնի... Նրա մեջ ոչ մի մարդկային բան չկա...

Ռոզան՝ նրա կինը, պնդում է, որ Ստալինն իրեն մերկ, միայն գուլպաներով ստիպում էր մագլցել ծառը: Իսկապես, հիմա եմ հասկանում, թե ինչքան անմարդկային էր նա: Ստալինը սովորական մարդկանցից այնքան էր տարբերվում, որ դժվար է նրան նորմալ մարդ համարել, չնայած որ կերպարանքով նման է բոլորին: Այս ի՞նչ առեղծված է: Բայց ես ի՞նչ եմ գրում: Գուցե ե՞ս էլ եմ խելագարվում արդեն»:

Ստալինը Կագանովիչին բացատրում է, թե ինչ մեթոդներով էր ինքը մտքի վարժանքներ անում: Որևէ կրոնի դավանող մեկը որպես մտահայեցության օբյեկտ սովորաբար ընտրում է այն, ինչը գեղեցիկ է, իմաստուն և բարի, որը կօգնի նրան սիրով զորանալու: Ստալինին դուր էր գալիս անել հակառակը: Ահա, թե ինչ է գրում նա իր փեսային.

«Երբ պատրաստվում եմ ցտեսություն ասել որևէ մեկին, նրան մտովի չորքոտանի եմ պատկերացնում, ու նա մեկեն վանող ու տհաճ է թվում աչքիս: Եթե համակրանք ու կապվածություն եմ ունենում այնպիսի մեկի հանդեպ, որին ընդհանուր գործի բարօրության համար պետք է լիկվիդացնել, ի՞նչ եք կարծում, ինչպե՞ս եմ վարվում, պատկերացնում եմ, թե ինչպես է նա արտաթորում, ինչպիսի սրտխառնուք է ունենում, ինչպիսի գարշահոտ է տարածում իր շուրջն ու ինչպես է փսխում... ու էլ չեմ խղճում նրան: Ինչքան շուտ դադարի ապականել այս երկիրը, այնքան լավ: Եվ սրտումս այս անձնավորության վրա խաչ եմ քաշում»:

Ստալինի համար ազատ ժամանցի ձևերից մեկն էլ ձիու աչքերին կանաչ ապակիներ հարմարեցնելն էր, որպեսզի խեղճ կենդանին չորացած խոտը թարմ խոտի տեղ ուտեր: Դեռ ավելին, մարդկության աչքին նա աթեիզմի սև ակնոցներ հագցրեց, այսպիսով խանգարելով մարդկանց ըմբռնելու Աստծո փարթամ ու անծայրածիր մարգագետինների կանաչը, որտեղ մուտքը միայն նվիրյալ հավատացյալների համար է նախասահմանված:

Կագանովիչի օրագրում առկա են բազմաթիվ լուսաբանող կետեր.

«Ստալինը հաճախ կրոնի մասին խոսելիս այն անվանում է մարդկության ահավոր թշնամի: Նա ատելություն էր տածում կրոնի հանդեպ՝ ելնելով բազմաթիվ դրդապատճառներից, և ես համակարծիք էի նրա հետ: Կրոնը խորամանկ ու վտանգավոր թշնամի է... Խլել երեխաներին՝ ահա թե որն է, Ստալինի կարծիքով, որևէ աղանդի անդամ ծնողին պատժելու լավագույն ձևը,

ընդ որում նշանակություն չունի, համոզված աղանդավորական է նա, թե՝ ոչ»:

«Ստալինը շատ էր սիրում աստղագուշակությունը: Նրա բնավորության մի գիծն ինձ հատկապես ապշեցրել էր: Աստծո և կրոնի մասին նա միշտ հարգանքով ու ակնածանքով էր խոսում: Սկզբում կարծում էի, թե դա սոսկ թվում է, բայց ժամանակի ընթացքում հասկացա, որ իրավացի էի: Երբ խոսքը գնում էր կոնկրետ այս թեմայի շուրջ, նա սկսում էր զգուշանալ, և ես այդպես էլ ստույգ չիմացա նրա կարծիքն այդ մասին: Բայց մի բանում վստահ եմ՝ Աստծո և կրոնի մասին նա հատուկ կարծիք ու վերաբերմունք ուներ: Օրինակ երբեք ուղղակիորեն չէր ասի. «Աստված չկա...»:

«Նրա ներկայությամբ մարդիկ կատարելապես մոռանում էին իրենց ով լինելը, քանի որ բոլորին միավորում էր Ստալինի անձի հանդեպ բուռն հիացմունքը: Բոլորը պաշտում էին նրան... Կարծում եմ, որ նրա հանդեպ սերը վեր էր անգամ հայրենասիրությունից: Կարող է տարօրինակ թվալ, բայց Ստալինը գրավել էր նախկինում բացառապես Աստծուն հատկացված տեղը»:

Ուրեմն զարմանալի չեն կարող թվալ նաև Ստալինի հետևյալ խոսքերը.

«Ամենամեծ ուրախությունն այս է. ընկերական ջերմ հարաբերություններ հաստատել և սպասել մինչև ընկերդ վստահորեն գլուխը կրծքիդ կխոնարհի, ապա հարմար պահ ընտրելով՝ թիկունքից հարվածել դաշույնով: Ի՜նչ անգերազանցելի հաճույք» (Boris Souvarine, Stalin):

Նրանից դեռ շատ առաջ, Մարքսը նույնպես արտահայտել է այդ միտքը.

«Պետք է այս սրիկաներին հավատացնենք, թե շարունակում ենք մեր ջերմ հարաբերություններն իրենց հետ այնքան ժամանակ, քանի դեռ այս կամ այն ձևով նրանց մեր ճանապարհից մաքրելու հարմար եղանակը չենք գտել» (Werke *27, էջ 292)*:

Նշանակալից է այն, որ Ստալինի զինակիցներից շատերը նրան որակավորում էին որպես «Սադայելի գործիք»: Հարավսլավիայի անվանի կոմունիստ առաջնորդ Միլովան Ջիլասը, որն անձամբ ճանաչել էր Ստալինին, գրում է.

«Ստալինի զորեղ ու եռանդուն գործունեությունն ի՞նչ հետևանքներ ունեցավ: Մի՞թե ոչ այն, որ կոմունիստական շարժումն ամբողջությամբ, իր անդամ-համախոհների հետ հասցրեց խառնաշփոթության ու անզգայացման քաոսային վիճակի՝ հիմնադրելով վախի ու սարսափի իր թագավորությունը» (Milovan Djilas, Strange Times, Kontinent. *33, էջ 25)*:

Ստալինն արտահայտել է նաև իր կարծիքը ՍՍՀՄ-ի ամբողջ կառավարող դասի մասին.

«Նրանք այնպիսի տպավորություն են ստեղծում, ասես հավատում են ապագայի անդասակարգ հասարակության պայմաններում սոցիալիզմի գաղափարների իրականացմանը: Իրականում, նրանք ոչնչի էլ չեն հավատում, բացի կենտրոնացված իշխանությունից» (նույն տեղը):

Մյուս կողմից Ստալինի աղջիկը՝ Սվետլանա Ալիլուևան, գրում է. «Բերիան (ներքին գործոց նախարարը) մեր ընտանիքի հետ կապված էր սատանայական կապով», «Բերիան իսկական սատանա էր», «Սարսափելի դևը սողոսկել էր հորս սիրտը, որի հետևանքով, - գրում է Սվետլանան, - բարեգործությունն ու գթասրտությունը նրա կողմից դիտվում էին իբրև ամենածանր հանցագործությունից էլ վատ բան» (Twenty Lettres to a Friend, Doubleday New York, Paris 1967, editions du Seuil):

Այսպիսին է «սատանայական ուսմունքի» էությունը, որն իշխում է մոլորակի բնակչության կեսին, և որի թելադրանքով ամբողջ աշխարհում իրագործվում են սարսափազդու գործողություններ:

Ստալինը կալվածատիրոջ ու աղախնու ապօրինի զավակ էր: Հայրը վատ համբավ ձեռք բերելու վախից կաշառեց ոմն կոշկակարի, որ սա կնության առնի երիտասարդ հղիացած աղախնուն: Բայց սուտն արագ բացվեց: Մանուկ հասակում Ստալինին ծաղրում էին՝ նրան «բիճ» անվանելով: Պատանի էր, երբ Ստալինի իսկական հորը սպանեցին: Կասկածեցին որդուն, բայց Ստալինի դեմ փաստացի ապացույցներ չկային: Ավելի ուշ, ուսանողական տարիներին, Ստալինը սկսեց մասնակցել կոմունիստական խմբակների աշխատանքին: Այստեղ էլ հենց հանդիպեց Գալինա անունով մի երիտասարդ աղջկա ու սիրահարվեց: Կոմունիստների ֆինանսական վիճակը ծայրաստիճան վատ էր, և նրանք հանձնարարեցին Գալինային դառնալ մի հարուստ անձնավորության սիրուհին ու, այսպիսով, դրամ հայթայթել կուսակցության կարիքների համար: Այն բանից հետո, երբ Ստալինը հավանություն տվեց այս ծրագրին, աղջիկը կտրելով երակները, ինքնասպան եղավ:

Նա բազմիցս գողություն է արել հանուն կուսակցության, այն էլ բավական հմուտ ձևով, սակայն գողացված գումարից սեփական կարիքների համար ոչինչ չի պահել:

Այնուհետև Ստալինին հանձնարարվեց ցարական ոստիկանության ցանցի մեջ թափանցելու պատվավոր գործը, որն իրականում կրկնակի նպատակ էր հետապնդում՝ կուսակցության ստորադաս անդամներին մատնել ցարական ոստիկանությանը՝ այնտեղից

ինֆորմացիա ստանալու հույսով, ու այս ձևով ապահովել ավելի բարձրաստիճան կոմունիստների անվտանգությունը:

Ժառանգական անփառունակ տվյալների հետ մեկտեղ նաև վատ դաստիարակություն ստանալով՝ Ստալինը պատանեկության տարիներն անցկացրեց վատթարագույն ձևով: Նա էությամբ արդեն պատրաստ էր ընդունելու սատանայի ներգործությունը: Ի վերջո, կյանքի ընթացքում նա ապացուցեց իրեն վերագրվող Ստալին՝ «պողպատե մարդ» որակավորման ճշտությունը, քանի որ բացարձակապես զերծ էր մարդկային գթասրտությունից ու զգացմունքներից:

(Անդրոպովը՝ Սովետների երկրի նախկին ղեկավարը, նույն տպավորությունն էր թողնում շրջապատի վրա, ինչպես և Ստալինը: Ֆրանսիայի արտաքին գործոց նախարար Շեյսոնը վերջինիս հետ հանդիպելուց հետո «Լը Մոնդ» թերթում այսպես է բնութագրում նրան.

«Ահա մարդկային ջերմությունից զերծ մի անձնավորություն, որ գործում է հաշվիչ մեքենայի ճշտությամբ: Նա կատարելապես տիրապետում է իր զգացմունքներին... ծայրաստիճան անվրդով է... խոսում ու գործում է ռոբոտի պես, անսխալ ու անվրեպ»):

Մարքսի, Էնգելսի, Բաուերի նման, Ստալինն էլ սկզբում հավատացյալ է եղել: 15 տարեկանում գրում է իր առաջին բանաստեղծությունը, որն սկսվում է այսպես.

«Անսահման է Ամենակարողի Նախախնամության զորությունը»: Ներքին ձայնի ու կոչման թելադրանքով Ստալինն ընդունվեց սեմինարիա, ուր դարձավ սկզբում Դարվինի, իսկ հետո՝ Մարքսի հետևորդը:

Երբ սկսեց ստեղծագործել հեղափոխական ոգով, հանդես էր գալիս «Դեմոնիշվիլի», ապա «Բեսոշվիլի» կեղծանունով, որը վրացերեն նշանակում է դիվահար, մոլագար (Poloczy Norvath, Staline):

Կան այլ կարևորագույն փաստեր, որոնք վկայում են մարքսիստական առաջնորդների դիվային համոզմունքների մասին: Սովետական մարշալ Տուխաչևսկու աղջիկը՝ Տրոցկյան, այսպես է գրում իր հոր մասին, որը Կարմիր Բանակի կարկառուն դեմքերից մեկն էր և որը հետագայում սպանվեց Ստալինի հրամանով.

«Հորս ննջարանի արևելյան պատին սատանայի պատկերն էր կախված»:

Բայց չէ՞ որ սովորաբար այս տեղում Ուղղափառ եկեղեցու ծառաները սրբապատկերներ են կախում:

Չեխոսլովակիայի անվանի մի կոմունիստ, իշխանության գալուխ անցնելով՝ նշանակվեց հոգևոր գործերի ղեկավար: Սա մի կազմակերպություն էր, որի նպատակն էր լրտեսել և հետապնդել հավատացյալներին: Այս անձնավորությունը կրում էր «Հրուզա» անունը, որ սլովակերեն «սարսափ» է նշանակում: Սա նաև սատանայի շատ գործածական անուններից մեկն է:

Արգենտինայի տեռորիստական կազմակերպության ղեկավարներից մեկն իրեն կնքել է «Սատանովսկի» անունով:

Հայտնի գրող, կոմունիստ Անատոլ Ֆրանսի ազդեցությամբ կոմունիստական գաղափարներին են հարել ֆրանսիացի մտավորականության փայլուն ներկայացուցիչներից շատերը: Վերջերս Փարիզում կազմակերպված դիվային արվեստի ցուցահանդեսում տեղ էր գտել այն հատուկ բազկաթոռը, որին բազմում էր կոմունիստ գրողը սատանայական արարողությունների ժամանակ: Բազմոցի արմնկակալներն ու ոտքերը պոզավոր էին՝ ծածկված այծի մորթով (L'Express, 6 հոկտեմբեր, 1979թ., Փարիզ):

Անգլիայում սատանայի գլխավոր աթոռանիստը Լոնդոնի Հայգեյթյան գերեզմանոցն է, ուր թաղված է Մարքսը: Նրա շիրիմին սև մոգության խորհրդավոր ծեսեր են անցկացնում: Բացի դրանից այս վայրում էր իր ոգեշնչումն ստանում «Հայգեյթյան վամպիրը»: 1970թ. այս կենդանին բազմիցս հարձակվել է երիտասարդ աղջիկների վրա: Կարմիր Չինաստանի ղեկավար՝ Հուա Կուո Ֆենը, նույնպես իր հարգանքի տուրքն է մատուցել նրա շիրիմին:

Ուլրիկե Մայնհոֆը, Էսելինը և Կարմիր Գերմանիայի շատ տեռորիստներ նույնպես կապված են եղել օկուլտիզմի (ոգեհարցության) հետ:

1979թ. հուլիսին «Նաուկա ի ռելիգիա»-ի մի հոդվածում գովաբանվում է սիրիական եզդիների աղանդը, որը լինելով ամենահինը, հավատարիմ է մնացել սատանայապաշտությանը: Սա միակ կրոնական աղանդն է, որի մասին նշված սովետական աթեիստական ամսագիրը քննադատության ոչ մի խոսք չի ասում:

Մաո Ցզե Դունը հայտարարում էր. «Դեռ 8 տարեկանից ատել եմ Կոնֆուցիոսին, որի տաճարը մեր գյուղում էր գտնվում: Այն ժամանակ հոգուս խորքում փայփայում էի մի նվիրական ցանկություն. այդ տաճարը հիմնահատակ ավերել» (Manfred Zach, Mao Tse-Tung Bechtle Verlag, 1969, էջ 13):

Մի՞թե նորմալ երևույթ է, որ այդ հասակում երեխան փափագի իր կրոնի ջախջախումը: Պարզ է, որ բանականությունը մթագնող նմանօրինակ մտքեր միայն սատանան կարող է ներշնչել: Դրան հակառակ, նորից 8 տարեկան հասակում, Սուրբ Պողոս Խաչապաշտն ամեն գիշեր աղոթում էր 3 ժամ շարունակ:

Երկու ինչպիսի՛ ծայրահեղություններ...

Բռնության պաշտամունք

«Անտի-Դյուրինգ» -ում Էնգելսը գրում է. «Մարդու հանդեպ համապարփակ սերն ու ներողամտությունն անհեթեթություն է»: Իսկ ընկերներից մեկին ուղղված նամակում այսպես է արտահայտվում.

«Մենք ավելի շատ ատելության, քան սիրո կարիք ունենք, գոնե այս պահի համար»:

Զե Գևարան փայլուն էր յուրացրել մարքսիզմի դասը: Իր աշխատություններում նա այսպես է արձագանքում Էնգելսի մտքերին. «Ատելությունը պայքարի զենք է, ատելություն, որ անողոքաբար ուղղված է թշնամուն, և որը հեղափոխականին կառաջնորդի մարդկային ընդունելի սահմաններից այն կողմ, և որի կրողը հզոր, անտարբեր, կործանելու ունակ, սառնասիրտ ու ազատագրված անձ է՝ իսկական մեքենա, որի խնդիրն է սպանել»:

Սա չէ՞ արդյոք Սադայելի գործունեության նպատակն ընդդեմ մարդու: Պետք է ասել, որ նա հաջողության է հասել մարդկային ցեղի նշանավոր ղեկավարների հարցում:

Միայն ներկա դարաշրջանում մենք վկա ենք եղել մեկից ավելի օրինակների. Հիտլեր, Ստալին, Մաո, Անդրոպով, Պոլ Պոթ:

«Կոմունիստական մանիֆեստ» -ում կարդում ենք.

«Կոմունիստները չեն վախենում բարձրաձայն արտահայտել իրենց կարծիքներն ու մտադրությունները: Նրանք բացեիբաց հայտարարում են, որ իրենց նպատակները կիրագործվեն առկա հասարակական սիստեմի հիմնահատակ ու բռնի կործանման ճանապարհով միայն»:

Եվ հետո. «Միայն մի մեթոդ գոյություն ունի փտած հասարակության հոգևարքի ջղաձգումներն ու ծնվող հասարակության արյունոտ տանջանքները կրճատելու համար, միայն մի մեթոդ՝ դրանք հեշտացնելու ու կենտրոնացնելու համար, այն է՝ հեղափոխական տեռորը» (Werke, 5, էջ 457):

Պատմությանը հայտնի են շատ հեղափոխություններ: Եվ դրանցից ամեն մեկն ունի իր նպատակը: Օրինակ, հեղափոխությունն Ամերիկայում խնդիր էր դրել հասնել ազգային անկախության, Ֆրանսիական հեղափոխությունը պայքար էր դեմոկրատիայի համար: Մարքսը միակ հեղափոխականն էր, որը հայտարարում էր, թե իր նպատակը «հարատև հեղափոխությունն» է, արյունահեղությունն ու տեռորը՝ ի սեր հեղափոխության: Ծայրահեղ բռնություն՝ նպատակին հասնելու այլ ճանապարհ չկա: Այսպես կարելի է տարբերել սատանայությունը սովորական մարդկային մեղսագործությունից:

Ցարական Ռուսաստանում մահվան դատապարտված տեռորիստներին Մարքսն անվանում է «անմահ նահատակներ» կամ «զարմանալիորեն օժտված անձինք» (Werke, 31 էջ 191, 25 էջ 179):

Էնգելսն իր հերթին նույնպես ակնարկում է «այն արյունալի վրեժխնդրության մասին», որ ձեռնարկել են իրենք: Նա հաճախ է կրկնում հետևյալ արտահայտությունը. «Ի՞նչ հրաշալի առաջընթաց է նկատվում Ռուսաստանում: Սպանության փորձերը գնալով ավելի հաճախակի են դառնում: Մի կողմ թողնենք «բարոյականությունը»... հեղափոխականի համար նպատակի իրագործման ճանապարհին բոլոր միջոցներն էլ ճիշտ են, լինեն դրանք բռնի, թե՝ սովորական»:

Կերենսկու դեմոկրատական պետության օրերին մարքսիստ Լենինը հայտարարում է.

«Հիմա մեզ հարկավոր է անսպառ եռանդ, ավելի ու ավելի շատ եռանդ: Ապշած և նույնիսկ սարսափած եմ տեսնելով, որ վեց ամսից ավելի խոսվում է ռումբերի մասին, սակայն առ այսօր ոչ մի ռումբ չի արտադրվել» (Lenine, Collected Works, հ.32 էջ 281):

Հետևյալ կարճ մեջբերումները կօգնեն մեզ ավելի լավ հասկանալ կոմունիստների հիմնադրույթները:

Մարքս. «Մենք պայքարի ենք ելել այնպիսի համընդհանուր ճանաչված գաղափարների դեմ, ինչպիսիք են կրոնը, պետությունը, հողը, հայրենասիրությունը: Աստծո գաղափարը բնորոշ է փտած քաղաքականություններին, այն պետք է կործանել»:

«Կոմունիստական մանիֆեստ». «Կոմունիստները կարիք չունեն համաձայնեցնել իրենց հայացքները նպատակների հետ: Նրանք բացեիբաց հայտարարում են, որ իրենց նպատակների իրագործումը հնարավոր է առկա հասարակական սիստեմի ու պայմանների բռնի ավերումով միայն: Թող կառավարող դասը դողդողա կոմունիստական հեղափոխության մտքից»:

Լենին. «Ամեն միջոց պետք է գործի դրվի. խորամանկություն, հնարանք, կեղծավորություն, զարտուղի ճանապարհներ, կեղծիք և... ճշմարտության քողարկում: Խաղի հիմնական օրենքը պետք է լինի կապիտալիստական պետությունների հակադիր շահերի ճիշտ օգտագործումը»:

Լենին. «Աթեիզմը մարքսիզմի անբաժան մասն է: Մարքսիզմը մատերիալիզմն է: Պետք է կործանել հավատն ու կրոնը: Սա մատերիալիզմի ամենաառաջին և ամենաանհրաժեշտ պայմանն է»:

Լենին (1922թ. ճառերից մեկում). «Սկզբում կնվաճենք Արևմտյան Եվրոպայի ժողովուրդներին, հետո Ասիայի հոծ զանգվածներին: Որից հետո կպաշարենք ու հօդս կցնդեցնենք Միաց-

յալ Նահանգները, որոնք առանց պատերազմի կհայտնվեն մեր ձեռքերում, հասուն մրգի պես»:

Խրուշչև. «Եթե ինչ-որ մեկը կարծում է, թե մեր քմծիծաղն առնվազն նշանակում է հրաժարում Մարքսի, Էնգելսի ու Լենինի ուսմունքից, ուրեմն թյուրիմացության մեջ է: Ով էլ որ սպասում է դրան, ուրեմն երկար է սպասելու»:

Սատանայական անողոքություն

«Գուլագ Արշիպելագ»-ում Սոլժենիցինը պատմում է, որ Սովետական Միության ներքին գործոց նախարար Յագոդան ուներ այսպիսի զբաղմունք՝ կրակել Հիսուսի և Սրբերի պատկերների վրա: Ահա կոմունիստական հիերարխիայի բարձրաստիճան անձանց բնորոշ սատանայական ծեսերից մեկը:

Ինչպե՞ս բացատրել այն, որ իրենց պրոլետարիատի ներկայացուցիչներ համարող անհատները կարող են Հիսուսի փոխարեն թիրախ դարձնել հասարակ բանվորին, կամ ժողովրդի ծոցից ելած կնոջն ընդունել Կույս Մարիամի փոխարեն ու կրակել:

Հոգեգալստականներն այսպիսի մի դեպք են պատմում, որ կատարվել է Ռուսաստանում երկրորդ համաշխարհային պատերազմի օրերին: Քարոզիչներից մեկն աղոթքի զորությամբ քշել էր դևին, որը հեռանալիս սպառնացել էր վրեժխնդիր լինել: Հոգեգալստական այս քարոզչին մի քանի տարի անց գնդակահարեցին որպես հավատացյալի: Մահապատիժն ի կատար ածող սպան, մինչև կրակելն այսպես էր ասել. «Հիմա քվիտ ենք»:

Այսպիսով, կոմունիզմի որոշ գործակալներ արդյոք բռնված չե՞ն դևով և վրեժխնդրության գործիք չե՞ն արդյոք նրանք սատանայի ձեռքին՝ քրիստոնյաների դեմ պայքարում, որոնք հնարավոր ամեն բան անում են սատանային գահընկեց անելու համար: Կասկածներն անտեղի են:

Ստալինյան ժամանակների Ռուսաստանում մի խումբ կոմունիստներ միլիցիայի բանտախցերում սպանել են բազմաթիվ անմեղ մարդկանց: Այս արյունալի չարագործությունն անելուց հետո մարդասպաններից մեկն ուշքի գալով՝ մի դիակից մյուսին էր գնում, ասես թողություն խնդրելով. «Ես մտադիր չէի այդ անել: Ես ձեզ չեմ ճանաչում: Խոսեք, գոնե շարժվեք, ներեցեք ինձ»: Այս խոսքերը լսելով՝ մյուս մարդասպանն սպանեց ընկերոջը, իսկ երրորդը, ավելի ուշ զղջալով իր արարքների համար, պատմեց ամբողջը:

Ռուսաստանում բժիշկ Պրոֆիրևիչը հավատքի ոգով էր դաստիարակել իր աղջկան, բայց վերջինս սկսեց հաճախել կոմունիստական դպրոց: 12 տարեկան հասակում նա տուն դառնալով հայտարարեց իր ծնողներին. «Կրոնը կապիտալիստական վերապրուկ է և իր դարն ապրել է»: Ուրանալով իր հավատը, աղջիկն անցավ կոմունիստական կուսակցության շարքերը և դարձավ ՊԱԿ-ի գործակալ: Ծնողների համար սա ահավոր հարված էր:

Հետագայում ձերբակալեցին աղջկա մորը: Քանի որ ըստ կոմունիստների, ոչ ոք անձնական ոչինչ չունի. ոչ երեխաներ, ոչ սեփական կին, ոչ էլ ազատություն, հետևաբար, պետությունը ցանկացած ժամանակ կարող է դրանք խլել:

Մոր ձերբակալման պահին տղան հեծկլտում էր, իսկ մեկ տարի անց կախվեց: Բժիշկ Պրոֆիրևիչը գտավ տղայի կողմից իրեն հասցեագրված նամակը.

«Հայր իմ, անկասկած դու ինձ կմեղադրես: Ես կոմերիտական եմ և պարտավորվել էի տեղեկություններ հաղորդել այն ամենի մասին, ինչը դեմ է սովետական իշխանությանը:

Մի օր ինձ կանչեցին միլիցիա և քույրս՝ Վարյան, պահանջեց, որ պարսավագիր ստորագրեմ այն մասին, որ մայրս քրիստոնյա է: Մայրս համարվում էր հակահեղափոխական: Ես ստորագրեցի... Եվ ես մեղավոր եմ նրա ձերբակալման համար: Այժմ ինձ հրամայված է հետևել քեզ... Հետևանքները պարզ են արդեն: Ներիր ինձ, հայր իմ, բայց ես ինքնասպան լինելու որոշում եմ ընդունել»:

Որդու ինքնասպանությունից հետո ձերբակալեցին հորը (1975թ. Փարիզ, մարտի 13, «Русская мысль»):

1941թ. քահանա Զինովի Կովալիկը ձերբակալվելով բոլշևիկների կողմից՝ գտնվում էր Ուկրաինայի Լվով քաղաքի Բրիգիդկա բանտում: Նույն թվին գերմանացիները մտան քաղաք և վտարեցին բոլշևիկներին: Քաղաքի բնակիչներն արնաթաթախ քահանային գտան բանտախցում, թևերն ու ոտքերը պատին խաչված, ճիշտ և ճիշտ Քրիստոսի պես: Նրանք հայտնաբերեցին նաև 6 հազար բանտարկյալների դիակները, որոնց թիկունքից կրակելով սպանելուց հետո, բոլշևիկները խառնիխուռն լցրել էին իրար վրա ու ծածկել գաջով:

Դոկտոր Օ. Սաս-Յավորսկին (Միացյալ Նահանգներ) 1941թ. հունիսի վերջերին գերմանացիների կողմից Լվովը գրավելուց հետո, եկավ փնտրելու իր բանտարկված հորը: Բանտում նա տեսավ խաչին գամված մի քահանայի դիակ: Կոմունիստները պատռել էին նրա փորը և դատարկված ստամոքսի մեջ դրել մոր արգանդից անգթորեն պոկված մի երեխայի, իսկ մոր դիակն արնաշաղախ ընկած էր գետնին: Տեսնողների վկայությամբ, դա հենց եղել է անվանի քարոզիչ Հայր Կովալիկը:

Ընդհանրապես կոմունիստների համար մարդկային կյանքն արժեք չունի: Քաղաքացիական պատերազմի տարիներին Լենինը գրում է. «Ամոթ է չգնդակահարել բոլոր նրանց, ովքեր հրաժարվել են զորահավաքին մասնակցելուց: Ավելի հաճախակի ինձ տեղյակ պահեք ընթացքի ու արդյունքների մասին» (Lenin, Military Correspondence, Moscow, *1954 թ.*, էջ *148*):

Իսպանիայում քաղաքացիական պատերազմի ժամանակ 4 հազար հոգևորականներ են գնդակահարվել կոմունիստների կողմից:

Ռուս ուղղափառ քահանա, նշանավոր Հայր Դուդկոն պատմում է, թե ինչպես 6 կոմունիստներ մտնելով Նիկոլայ Զարդովի տունը, պոկել էին վերջինիս մազերը, հանել աչքերը, դանակահարել մի քանի տեղից, հետո շիկացած արդուկով վառել մարմինը և նոր միայն գնդակահարել: Դեպքը պատահել է Սուրբ Նիկոլայի տոնի նախօրեին, այսինքն՝ ոճիրն ուղղված չէր միայն քահանայի դեմ: Նպատակը սրբի հասցեին անարգանք հասցնելն էր:

Արևմտյան մամուլը 1983թ. մարտի 10-ին տեղեկացնում է, որ Զիմբաբվեում նդեբելե ցեղի 3000 ներկայացուցիչներ գնդակահարվել էին կոմունիստ-դիկտատոր Մյուգաբեի հրամանով, որի զինվորների ռազմական պատրաստությամբ զբաղվել էին Հյուսիսային Կորեայից ժամանած հրահանգիչները: Ցեղի անդամներից պահանջվել էր սեփական ձեռքերով գնդակահարել իրենց ավագ որդիներին: Հրաժարվելու դեպքում հայր ու որդի գնդակահարվում էին միասին:

Սատանան ուզում է ամեն ինչում նմանակել Աստծուն՝ խոստանալով զուլալ ջուր ու դալար պարտեզներ, որ երբևէ ի զորու չէ պարգևել: Ահա թե ինչու է ուզում մոլորության մեջ գցել մեզ: Եվ քանի որ քիչ բան ունի մեզ տալու, շարունակ պիտի ձևացնի ու ստի, իսկ վստահություն շահելու համար նա դիմակ է հագնում (երբևէ չե՞ք խորհել կոմունիստական «ճակատներ» կազմակերպության մասին) ու փորձում է բարեգութ երևալ: Բայց նա կարող է բերել միայն թշվառություն, մահ ու ավեր, այն էլ «սոսկալի, համընդհանուր և անողոք»:

Լինելով նախանձ, սատանան չի կարող հանդուրժել հոգևոր գեղեցկությունը՝ նա դրանից ավելի է մոլեգնում: Քանի որ ինքնին նա չի կարող գեղեցիկ լինել (իր բնական գեղեցկությունը նա կորցրեց սեփական ամբարտավանության պատճառով), չի ուզում, որ որևէ մեկն այդպիսին լինի: Եթե սրբերի հոգևոր գեղեցկությունն այդքան ակներև չլիներ, սատանան այդքան տգեղ չէր թվա: Այդ իսկ պատճառով նա փորձում է աղճատել ամեն գեղեցիկ բան:

Նույն պատճառով ռումինական Պիթեշթի բանտում, ինչպես և կոմունիստական մյուս բանտերում հավատացյալներին կտտանքի են ենթարկում ոչ միայն Գաղտնի Եկեղեցու գաղտնիքները կորզելու համար, այլ նաև ստիպելու, որ նրանք անարգեն Աստծուն:

Այսպիսի հասարակարգը, ուր նման իրադարձություններն ու դեպքերն առօրեական ու սովորական են, որը մարդկանց, նույնիսկ հավատացյալներին, վերածում է մարդասպանների ու մատնիչների, միայն սոսկում ու արհամարհանք կարող է առաջացնել Աստծո զավակների հոգում, իսկ եթե մեկը նրանցից հանկարծ մոլորվի ու գայթակղվի հար և նման վարչակարգով՝ «մասնակից կլինի նրա չար գործերին» (Բ Հով Հ 11):

Սատանայական մեղքեր

Արդեն ասվեց, որ Մարքսը սատանայի պաշտամունքի ջատագովն էր: Սակայն մեղքն իր բնույթով սատանայական չէ՞ արդյոք: Այդ մասին շատ եմ խորհել: Եվ ահա մի գիշեր երազ տեսա, որը լույս սփռեց այս ամենի վրա: Տեսա մի անառակ կնոջ, որ փորձում էր եկեղեցուց դուրս եկող երիտասարդներին գայթակղեցնել: Եվ երազումս նրան հարցրի.

«Ինչո՞ւ եք հատկապես այս վայրն ընտրել»:

Այսպիսին եղավ նրա պատասխանը.

«Ինձ անասելի հաճույք է պատճառում գայթակղեցնել ու ստիպել երիտասարդներին մեղք գործել, հատկապես, երբ նրանք նոր են դուրս եկել ժամասացությունից: Նոր Կտակարանում «պաշտել, պաշտամունքով մեծարել» բառը հունարենում «պրոսկուն» է: Այս բառը ստուգաբանորեն նշանակում է «համբուրել, գրկել»: Նվիրյալը թողնելով աղոթքի տունը, իր դեմքին դեռ կրում է Հիսուսի համբույրների հետքերը: Ինչպիսի բավականություն է մեզ համար այդ պահին նրան մոլորեցնել ու հետո հայտարարել. «Ահա, տեսնո՞ւմ եք, Հիսուսը, որին հենց նոր աղոթում էիք, չկարողացավ ձեզ պաշտպանել մոլորությունից ու մեղք գործելուց նույնիսկ 5 րոպե: Նա չէ՞ արդյոք ձեր Փրկիչը: Տերը, որին ես ծառայում եմ, ավելի հզոր է, քան Հիսուսը»:

Սեռական պղծությունը սովորական դարձած մարդկային մեղք է: Մեֆիստոֆելը Ֆաուստին հրամայում է Մարգարիտային գայթակղեցնել հենց այն ժամանակ, երբ վերջինս աղոթագիրքը ձեռքին ուղղվում է դեպի եկեղեցի: Գրել, կարդալ կամ նայել պոռնկագրական գրականություն՝ նույնպես հաճախակի հանդիպող մեղք է: Սակայն ամերիկյան պոռնոգրաֆիան հատկանշական է նրանով, որ փառաբանում է արյունապղծությունը,

անառակությունը, արվամոլությունը, նրանում հաճախ են հիշատակվում Աստծո, Սուրբ Մարիամի և Հիսուսի անունները: Պղծախոսությունն արտաբերվում է սուրբ անունների հետ մեկտեղ, յուրաքանչյուր զազրելի շարժում ուղեկցվում է աստվածաշնչային որևէ արտահայտությամբ, և այս ամենի նպատակն է պղծել այն, ինչը սուրբ է: Սա ևս սատանային տուրք տալ է նշանակում:

Անմեղ մարդու սպանությունը նույնպես ամեն քայլափոխի հանդիպող մեղքերից է... Խաչել Քրիստոսին երկու մարդասպանների արանքում, այսպիսով, իբր թե ավելի ակնառու դարձնելով նրա մեղավորությունը, ոչ այլ ոք, քան սատանան է ի զորու նման բան անել:

Ազերբազատվել քաղաքական թշնամիներից, պատերազմ մղել և հեղափոխություն կատարել անգամ մասսայական կոտորածների գնով, այս ամենը խոսում է այն մասին, որ մարդն ի բնե մեղսական է: Սակայն ռուս կոմունիստներն այս ձևով միլիոնավոր թշնամիների կոտորելով՝ կատաղորեն ու մոլեգնաբար սկսում են փորել իրենց իսկ ընկերների գերեզմանը, այդ թվում ոչնչացնելով բոլոր ղեկավարներին ու մեծանուն ընկերներին, որոնք հեղափոխությունն իրենց ձեռքով էին սկսել: Այս արարքները դիվային կնիք են կրում: Ուստի այս հեղափոխությունն ուղղված չէ նվիրական նպատակների իրագործմանը, այլ հեղափոխություն է ու եղեռն հանուն սպանելու պիղծ հաճույքի, որ Մարքսն անվանում էր «հարատև հեղափոխություն»:

1917 թվականի բոլշևիկյան կուսակցության կենտկոմի 29 թեկնածուներից ու անդամներից միայն 4-ին բախտ վիճակվեց ժամանակին հոգին ավանդել, խուսափելով հարկադրական ու տանջալի մահից: Նրանցից մեկը, համենայն դեպս, հետմահու «Հեղափոխության թշնամի» հայտարարվեց... Նրանցից 13-ը մատնվելով իրենց իսկ ընկերների կողմից՝ մահվան դատապարտվեցին կամ անհետ կորան: Վերջապես երկուսն էլ ստալինյան հետապնդումներից ծայրաստիճան վհատված, դիմեցին ինքնասպանության:

Մաֆիայի անդամ ու մարդասպան լինելը մարդկային զազրելի չարագործություն է ու մեղք, բայց սատանայի ջատագովն ավելին է, քան մաֆիայի անդամը:

Թոմաս Բաուկետան՝ սիցիլիական մաֆիայի ներկայացուցիչներից մեկը, հետագայում դավաճանելով մաֆիայի շահերին, բացահայտել է այդ կազմակերպության գործած չարագործությունները.

«Ոճիրն անհրաժեշտություն է, որից ոչ ոք չի կարող խուսափել, սակայն այն միշտ մի շարժառիթ ունի: Մեզ մոտ բացված է «աննպատակ սպանություն» կոչվածը, որն ինքնին նշանակում է վերջ և անձնական վրեժի արդյունք է: Մենք չենք ընդունում «լայնակի վրեժխնդրությունը»՝ մեր գործողությունների թիրախին մոտ անձանց, օրինակ՝ կնոջ, երեխաների կամ ծնողների սպանությունը»:

Սատանայական զանցանքն ու մեղքն այլ բնույթի են: Հիտլերն, օրինակ, մահվան դուռն ուղարկեց միլիոնավոր հրեաների, այդ թվում երեխաների, միայն այն բանի համար, որ հրեաները վնաս էին հասցրել գերմանացիներին: Կոմունիստների համար բնական է ձերբակալել ու տանջահար անել մեղավոր անհատի ընտանիքի անդամներին: Երբ ես բանտում էի, շատ բնական էր թվում այն, որ կինս նույնպես այնտեղ գտնվեր, իսկ մեր որդին դադարեր դպրոց հաճախել:

Մարքսիզմը սովորական մեղսագործի գաղափարախոսություն չէ: Այն սատանայական է՝ մեղքեր գործելու իր եղանակներով, սատանայական է՝ իր ուսմունքն ուսուցանելու և տարածելու ձևերով: Հազվադեպ են այն դեպքերը, երբ մարքսիզմը բացեիբաց խոստովանել է իր սատանայական բնույթը: Ինչ ուսուցիչն է, այն էլ աշակերտը: Նշանավոր նկարիչ Պիկասոն ասել է. «Արվեստագետին է պատկանում իր նկարածի սուտն ու կեղծիքը ճշմարտության տեղ հրամցնելու հնարամտությունը»:

Նման սարսափազդու գրական ժառանգություն ո՞վ կարող էր թողնել: Միայն մեկը: Նա, ով հայտարարել է. «Ես կոմունիստական համոզմունքի եկա այնպես, ինչպես մեկն իր ծարավն է հագեցնում... Պատահական չէ, որ ես հարել եմ կոմունիստական գաղափարին: Այն իմ ամբողջ կյանքի ու գործունեության տրամաբանական շարունակությունն է»: Այսպիսով, հնարավոր է ուրեմն, դառնալ մարքսիստ, եթե պարզապես սուտն ու կեղծիքը կուռք ես դարձրել քեզ համար: Ի՞նչ ցավալի է:

Սադայելի որևէ ջատագովի աշխարհայացքի մասին կարծիք կազմելու համար բավական է մի քանի տող կարդալ Ալիստեր Կրոուլիի (1875 -1947) գրքից: Ալիստերը հայտնի էր որպես օկուլտիստական արարողությունների եռանդուն մասնակից:

«Ընկածներին չխղճալ: Նրանց չեմ ճանաչել և չեմ սիրում նրանց մխիթարել: Հավասարապես ատում եմ և՛ մխիթարողին, և՛ մխիթարվողին» (Crowley, The Book of Thoth Berkeley, Koshmarin Press, 1904, էջ 97):

«Գայլը դավաճանում է միայն ագահին ու խաբեբային, գառվը՝ թախծոտին ու անազնիվին: Իսկ ես նա եմ, ում մասին գրված է հետևյալը. Նա կմոլորեցնի ընտրյալներին...»:

«Հագեցել եմ սրբերի արյունից, բայց մարդիկ չեն կասկածում, որ ես իրենց թշնամին եմ, քանի որ իմ գեղմն անբիծ է ու մաքուր

և շատ տաք է պահում այն կրողին, ատամներս էլ գիշատիչի միս հոշոտող ատամներ չեն, հայացքս մեղմ է ու հանգիստ: Նրանք չգիտեն, որ ես ստախոսների պարագլուխն եմ...» (նույնը, էջ 134-135):

«Օ՜, Բաբելոն, ինչքան գեղեցիկ ու ցանկալի ես դու... Օ՜, Բաբելոն, մայր ամենազոր, որ հնազանդեցրել ես այս թագադիր անասուններին, թույլ տուր արբենամ քո անառակությունների ցոփ գինով ու գրկախառնված քեզ, ընկղմվեմ մահվան անդունդի մեջ» (նույնը, էջ 137):

Կրոուլին այս կարգի բազմաթիվ բարոյախոսական խրատներ է մեջբերում, բոլորն էլ քաղված սատանայական պաշտամունքի հին ձեռագրերից, անծանոթ ձեռագրեր, որ Աստծո հավատի նվիրյալները հնարավորություն չեն ունեցել ձեռք բերել:

«Հայր Մեր» աղոթքի մի քանի աստվածանարգող նմանակումներ

«Սովետսկայա Մոլոդյոժ» օրաթերթի 1976թ. փետրվարի 14-ի համարում բերված են նոր փաստեր մարքսիզմի և սատանայապաշտության միջև գոյություն ունեցող կապի մասին: Այստեղ նշվում է, որ ցարական տիրապետության ժամանակ կուսակցության մարտիկները ներխուժում էին եկեղեցիներն ու ծանակում Աստծուն, ի դեպ, նրանց շուրթերին մշտապես հնչում էր «Հայր Մեր» աղոթքի յուրօրինակ աստվածանարգիչ «տարբերակը».

«Հայր Մեր, որ Պետերբուրգում ես,
Անիծյալ լինի անունը քո,
Թող փլուզվի թագավորությունը քո,
Կամքը քո թող երբեք ի կատար չածվի,
Երբեք և նույնիսկ դժոխքում:

Տուր մեզ հացը մեր հանապազօրյա,
Որ գողացել ես մեզնից,
Վճարիր մեր պարտքերը, ինչպես որ
Մենք ենք առ այսօր քեզ վճարել,

Մի տար մեզ ի փորձություն, այլ
Ազատիր մեզ չարից՝ Պլեվեի ոստիկանությունից (ցարի
պրեմիեր-մինիստր),
Վերջ տուր նզովյալ կառավարությանը նրա:

Սակայն անզոր ես դու և ողորմելի՝ հոգով,
Իշխանությամբ և հեղինակությամբ,
Կորիր, ուրեմն, նրանց հետ հավիտյանս հավիտենից, Ամեն:

Կոմունիստների գերագույն նպատակը նոր երկրներ զավթելուց բացի, ոչ թե հասարակական կամ տնտեսական նոր սիստեմի հաստատումն է, այլ Աստծուն ծանակելն է ու սատանային փառաբանելը:

Գերմանացի ուսանողների սոցիալիստական միությունը հրապարակել է «Հայր Մեր» աղոթքի մեկ այլ ծաղրանմանակում, ջանալով ապացուցել, որ այս աղոթքը ծառայում է կապիտալիստների շահերին.

«Կապիտալ մեր, որ Արևմուտքում ես,
Ներդրումները քո թող հուսալի լինեն,
Ու մեզ միշտ թող խոշոր եկամուտներ բերեն,
Բաժնետոմսերիդ արժեքը թող միշտ բարձրանա
Վալ Սթրիթում և թե Եվրոպայում ամբողջ:

Տուր վարձը մեր ամենօրյա,
Եվ շատացրու վարկը մեր այսօր,
Ինչպես որ մենք ենք բազմապատկում
Պարտքը մեր պարտապանների:

Մի տար մեզ դեպի սնանկացում,
Այլ ազատիր մեզ սինդիկատներից,
Քանզի իշխում ես դու աշխարհի կեսին,
Քոնն է թե իշխանություն, թե հարստություն
Ոչ պակաս քան երկու հարյուր տարով
Օ՜, մամմոնա...

(Rhein-Neckar Zeitung, *1968 թ., փետրվարի 2*)

Քրիստոնեությունը կապիտալի շահերին նույնացնելը՝ մաքուր զրպարտություն է: Եկեղեցուն հայտնի է, որ կապիտալիզմը հաստատվելիս արատավորել է իրեն արյան ու կեղտի մեջ: Մենք բոլորս մեղավորներ ենք, և մեր տնտեսական համակարգերն էլ կրում են մեղքի անջնջելի դրոշմը: Մենք կոմունիզմին հակադրում ենք ոչ թե կապիտալիզմը, այլ Աստծո Արքայությունը, որ մեր հասարակական իդեալն է:

Մեջբերված տեքստը աղոթքներից գեղեցկագույնի դիվային ծաղրերգությունն է, ինչպես և վերը հիշատակված սովետական տեքստը:

Ի դեպ, «Հայր Մեր»-ի ծաղրերգությունները շատ ընդունված ու հարգի են կոմունիստական երկրներում: Եթովպիայում երեխաներին այսպես են աղոթել սովորեցնում.

Կուսակցություն մեր, որ Սովետական Միությունում ես,
Սուրբ լինի անունը քո,
Թող գա արքայությունը քո, եղիցի կամքը քո, այստեղ
Եթովպիայում ու նաև համայն աշխարհում:

Տուր մեզ հացը մեր հանապազօրյա,
և թողություն մի տուր իմպերիալիստների մեղքերին,
Ինչպես որ մենք չենք ների նրանց երբեք,
Մի տար մեզ ի փորձություն,
Որ չլքենք մենք մարտի դաշտը երբեք,
Եվ ազատի մեզ անիծյալ կապիտալիզմից, Ամեն:

Եթովպիայի կոմունիստների կողմից բռնագրավված լյութերականների ռադիոցանցով հաճախ ընթերցվում են Աստվածաշնչի սատանայական վերսիաներ: Օրինակ, Պողոս Առաքյալի «Ա Թուղթ առ կորնթացիներին» 13-րդ գլուխը աղավաղված է այսպես. «Եթե ես խոսում եմ աշխարհի բոլոր լեզուներով և ատելություն չեմ տածում կապիտալիստների ու սեփականատերերի հանդեպ, ուրեմն զրնգուն բրոնզի կտոր եմ լոկ... Դասակարգային ատելությունը տանել չի կարողանում շահագործումը, այն բիրտ ու կոպիտ է և անհագորեն տենչում է բոլորի հարստությունը և կարող է պարծենալ սոցիալիստական շատ երկրներում իր տարած հաղթանակով: Այժմ առկա են հավատը, հույսը և դասակարգային ատելությունը, մինչդեռ այս երեքից ամենազորը հեղափոխական ատելությունն է»:

1974 թ. ֆրանսիական կոմունիստների համընդհանուր գործադուլի ժամանակ բանվորներին կոչ էր արվում անցնել Փարիզի փողոցներով հետևյալ լոզունգներով.

«Մահ ժիսկար Դ'Էստենին,
Դևերն են հիմա փողոց ելել»:

Ինչո՞ւ հատկապես «դևեր» և ոչ թե «աշխատավորներ» կամ «ժողովուրդ»: Ինչո՞ւ ձայն տալ ու կանչել սատանայական ուժերին: Ի՞նչ ընդհանուր բան կա աշխատավարձի բարձրացման համար բանվոր դասակարգի օրինական պահանջների և սատանայական զորության միջև:

Կոմունիստական առաջնորդների աստվածացումը

Կոմունիստական առաջնորդները եղել և այսօր էլ համարվում են աստվածներ: Ահա 1939 թ. «Պրավդա»-յի օգոստոսի 10-ի համարում Ստալինին ձոնված պոեմից մի հատված.

Արևն է շողում երկնքում, հայտնի է աշխարհին, արևը այդ դու ես,
Ծովի ալյակների մեղմ ծփանքը ձոն է հյուսում քեզ, ո՛վ Ստալին,
Ջյունածածկ լեռների սպիտակաթույր գագաթը ձոն է հյուսում քեզ, ո՛վ Ստալին,
Միլիոնավոր ծաղիկներ ու դաշտեր քո գովքն են անում,
Քեզ են փառաբանում լի ու առատ սեղաններն ու փեթակները բյուր,
Ջահել հերոսների հայրերը քեզ երկինք են հասցնում,
Ո՛վ Ստալին, Լենինի ժառանգորդ, դու մեզ համար Լենինն ես, որ կաս:

Այս ոգով գրված հազարավոր պոեմներ կան: Ահա Ստալինի պատվին գրված մեկ ուրիշ օրհներգ, որն աչքի է ընկնում արտառոց գեղեցկությամբ ու պաթոսով: Այն կարդալիս ակամայից մտաբերում ես բյուզանդական օրհներգը՝ հյուսված քրիստոնեության առաջին դարերում:

Օ՛, մեծ Ստալին, ժողովուրդների առաջնորդ,
Դու ծնունդ տվիր մարդուն,
Դու մաքրագործեցիր հողը,
Ու նոր թափ տվիր անիվին ժամանակի,
Դու ծնունդ տվիր մի նոր գարնան,
Ու քո շնչից թրթռում է տավիղ, թե կիթառ,
Դու, իմ ծաղկուն գարնան հրաշք, ո՛վ Ստալին,
Արև, որ ջերմացնում է սրտերը բյուր մարդկանց:

(Պրավդա, օգոստոս, 1936թ.)

Կոմունիստական նույն պաշտոնական օրաթերթի 1935թ.-ի համարներից մեկում այսպիսի խանդավառ տողեր ենք կարդում.

Նրա հրամանով թշնամու արևը մայր կմտնի անհապաղ,
Կխոսի նա, ու Արևելքն իր ընկերների համար կշողա լուսառատ ու ջերմ,
Թե պահանջի ածխից, որ ներմակ այն դառնա,

Ստալինի կամքով այդպես էլ կլինի...
Լավ հիշեք աշխարհի տերն այսուհետև
Ստալինն է, որ կա:

Ոմն հայտնի սովետական պոետ նույն թափով, բայց մեկ այլ ոճով գրել է այս տողերը.

Կուզեի համեմատել ձյունաճերմակ լեռան հետ,
Բայց լեռներն, ավա՜ղ, գագաթներ ունեն,
Կուզեի համեմատել ծովի խորության հետ,
Բայց ծովերն, ավա՜ղ, հատակներ ունեն,
Կուզեի համեմատել լուսնի կաթնալույսի հետ,
Բայց լուսինը գիշերվա տերն է և ոչ օրվա,
Կուզեի համեմատել արևի շողշողուն փայլերի հետ,
Բայց արևն էլ ցերեկվա տերն է և ոչ գիշերվա:

Մաո Ցզե Դունին համարում էին «աշխարհաստեղծ միտք»: Հյուսիսային Կորեայի դիկտատոր Կիմ Իր Սենին նույնպես պաշտում էին իբրև Աստծո, ինչպես և կոմունիստական Ռումինիայի դիկտատոր Չաուշեսկուին: Այս վերջինը Ստալինի մի այլ տարատեսակն էր: Նրա կնիքն անհատի պաշտամունքն էր, և նրան համեմատում էին Կեսարի, Մակեդոնացու, Պերիկլեսի, Կրոմվելի, Նապոլեոնի, Պետրոս Մեծի և... Աբրահամի հետ: Թվարկումն ավարտված չէ: Նրան անվանում էին նաև «աշխարհիկ Աստված»: Ի դեպ, կոմունիստական Ռումինիան, որն ընդհանրապես կողմ չէր միջազգային կրոնական հավաքներին, հավանություն է տվել 1979թ. գարնանը Կուրտեա Դ'Արջեսում սև մոգության կոնգրեսի անցկացմանը:

Բուխարեստում կա մի թանգարան, ուր պահվում են ժողովրդի կողմից Չաուշեսկուին շնորհված պարգևները: Այնտեղ տեղ է գտել նաև մի ջրանկար՝ ստեղծված մի կույր մարդու կողմից, որը հրաշքով վերստացել էր տեսողությունը: Իր բուժման փաստը նա վերագրել է այն բանին, որ ամբողջ ժամանակ միտքը կենտրոնացրել է պրեզիդենտի անձի վրա, որը «ոչ միայն ի զորու է տեսողություն տալ կույրերին, այլ կարող է Կարպատներն անգամ տեղաշարժել»:

Մեկ այլ պատկեր ներկայացնում է Չաուշեսկուին Կինգ-Վլադ-Ցեփելի հետ, որը հայտնի էր «Վամպիր Դրակուլա» մականունով: Վերջինս սովորություն ուներ ցցի հանել իր հակառակորդներին: Նույն կերպ Ստալինը փառաբանել է նաև Իվան Ահեղին:

6

Հոգևոր պայքար

Երևելի և ոչ երևելի սատանաներ

Համաձայն մարքսիստական ուսմունքի, չկա Աստված և ոչ էլ սատանա, քանի որ երկուսն էլ երևակայության արդյունք են: Այդ ուսմունքը հիմք ընդունելով՝ կոմունիստները հետապնդել ու տանջել են քրիստոնյաներին: Մինչդեռ «Կոմունիզմա Ուզվարա» սովետական թերթում 1974թ. ապրիլին նշվում է, որ Լատվիայի մի շարք դպրոցներում բացվել են «աթեիստական» ակումբներ: Տարրական դասարանների աշակերտները, որոնք միաժամանակ ակումբի անդամներ են, անվանվում են «փոքրիկ սատանաներ», միջին դասարանի աշակերտները՝ «սատանայի սպասավորներ» են, իսկ բարձր դասարաններում՝ «սատանայի հավատարիմ հետևորդներ»: Հավաքների ժամանակ ակումբի անդամները զգեստավորվում են սատանայի զգեստներով՝ պոչով ու եղջյուրներով: Այսպիսով, արգելվում է պաշտել Աստծուն, բայց թույլատրվում և բացեիբաց քաջալերվում է սատանայապաշտությունը դեռ դպրոցական հասակում: Այս էր, ի դեպ, կոմունիստների թաքուն նպատակը, երբ Ռուսաստանում նրանք իշխանությունը վերցրին իրենց ձեռքը:

Վիտեբսկում կոմերիտական Զոյա Տիտովան հանկարծակի է բերվել մոգությամբ զբաղվելիս: Երբ նրա հարցը դրվեց կոմերիտական ժողովում, միաձայն որոշում ընդունվեց նրան պատժից ազատել, մինչդեռ, Աստծո հավատարիմ ծառայողներին անհապաղ վտարում էին: Աստծուն հավատալ, նշանակում է չարագործություն անել՝ այսպես են կարծում կոմունիստները: Եվ այս «հանցանքի» համար է, որ բազմաթիվ երեխաների կտրելով ընտանիքից, հանձնել են աթեիստական դպրոցներ: Դեռ ավելին, կոմունիստներն ուզում են քրիստոնեական նվիրապետության անդամներին դարձնել սատանայապաշտներ: Ազգությամբ ռուս, ուղղափառ եկեղեցու քահանա Պլատոնովը, որ հակահրեական պրոպագանդայի ջատագով էր, նույնպես լրացրեց կոմունիստների շարքերը: Վերջերս նրան եպիսկոպոս ու վարձու լրտես կարգեցին: Պլատոնովը մեծագույն հանգստությամբ իր ընկեր հավատացյալներին մատնեց գաղտնի ոստիկանությանը, շատ լավ

իմանալով, որ վերջիններս ամեն տեսակ հետապնդումների ու տանջանքների էին ենթարկվելու: Մի օր նա ավտոբուսում հանդիպեց իր քրոջը՝ Ալեքսանդրային, որը մայրապետ էր վանքում: Ալեքսանդրային մի քանի անգամ արդեն ձերբակալել էին և ոչ առանց եղբոր իրազեկության: Նա ձևացրեց, թե չի նկատել եղբորը, որը սակայն մոտենալով հարցրեց.

–Ինչո՞ւ ինձ հետ չես խոսում: Ինձ չե՞ս ճանաչում:

–Դեռ հարցնո՞ւմ ես պատճառը,– պատասխանեց նա,– եթե հայրիկն ու մայրիկը պատահածը տեսնեին, դագաղի մեջ շուռ կգային սարսափից: Դու ծառայում ես սատանային:

Ուղղափառ եպիսկոպոսն առարկեց.

–Գուցե ես սատանան եմ, որ կամ:

«Պրավոսլավնայա ռուս» –ում գրված է. «Օդեսայի ուղղափառ եկեղեցին, որ բնակիչների սերն էր վայելում, կոմունիստների կողմից իշխանությունը գրավելուց հետո դարձել է սատանայապաշտների հավաքատեղի... Նրանք հավաքվում են նաև Սլոբոտկա-Ռոմանովկայում և Տոլստոյի նախկին տանը»:

Սրան հետևում է տնօրեն Սերգեյ Միխայլովի մանրամասն պատմությունը, ուր նկարագրվում են սատանայի պատվին տրված պատարագները «գործող եկեղեցում», որը կոմունիստների մեղսակիցների ուղղափառ թևն էր: Մասնակիցներից մեկի խոսքերով այն քրիստոնեական պատարագի ծաղրապատկերն է, որի ընթացքում հաղորդվում են «մարդկային արյամբ»: Պատարագն անցկացվում է տաճարի ներսում, մայր խորանի առջև:

Օդեսայի աթեիզմի թանգարանի զարդը սատանայի հրաշալի քանդակն է, որին կոչում են «Բաֆոմետ»: Սա Աստծո ֆրանկամասոնական անվանումն է: Ամեն գիշեր սատանայի սպասավորները հավաքվում են թանգարանում, որպեսզի երգելով ու արարողություններով փառաբանեն նրան:

Անվայել մտքեր եկեղեցու հասցեին

Թերևս կարելի է հասկանալ այն, որ կոմունիստները ձերբակալում էին քահանաներին ու պաստորներին՝ հակահեղափոխական լինելու պատրվակով: Իսկ ինչպե՞ս բացատրել հետևյալը. մարքսիստները Ռումինիայի Պիթեշթի բանտում ստիպել են քահանաներին պատարագ մատուցել արտաթորանքով ու մեզով: Ի՜նչ անվայելուչ ծաղր ու ծանակ կրոնի հասցեին: Ռումինական ուղղափառ եկեղեցու քահանա Ռոման Բրագայի ատամները (Նրան ես անձամբ ճանաչել եմ. այժմ ապրում է Միացյալ Նահանգներում), մեկ-մեկ ջարդել են երկաթե ձողով՝ նրան ստիպելով աստվածանարգել: Կոմունիստներն այսպես բացատրեցին նրան.

«Եթե մենք սպանենք ձեզ՝ քրիստոնյաներիդ, ձեր հոգիները երկինք կգնան: Բայց մենք չենք ուզում, որ նահատակի փառքի պսակը ձեզ բաժին հասնի: Կստիպենք ձեզ նզովել Աստծուն, այնժամ ձեր հոգիները դժոխք կգնան»:

Պիթեշթի բանտում կոմունիստներն ամեն օր մի պարկեշտ ու հավատացյալ բանտարկյալի ստիպում էին «կնքվել»՝ վերջինիս գլուխը սուզելով տակառիկի մեջ, որ հիգիենիկ դույլի դեր էր կատարում նրա տառապյալ ընկերների համար: Այդ ընթացքում մյուսները պետք է օրհներգերով նշանավորեին կնունքի արարողությունը:

Աստվածաբանության ֆակուլտետի մի ուսանողի ստիպել էին հագնել սպիտակ սավաններ (Քրիստոսի քիտոնի նման) և վզից թելով օճառե առնանդամ էին կախել: Հավատացյալ բանտարկյալներին արյունահոսելու աստիճան ծեծել էին, ստիպելով ծնկի գալ Քրիստոսի այդ պիղծ ու վիրավորական պատկերի առջև ու համբուրել օճառը, որից հետո նրանք պիտի արտաբերեին սրբազան խոսքեր:

Մի քանի բանտարկյալների ստիպել էին հանել անդրավարտիքներն ու մերկ նստել Սուրբ Գրքի բաց էջերի վրա:

Երկու տարի շարունակ աստվածանարգիչ նմանօրինակ արարքները շատ սովորական էին դարձել բանտերում այն դեպքում, երբ կուսակցության ատյանն իրազեկ էր այդ ամենին: Այս անպարկեշտությունը որևէ առնչություն կարո՞ղ է ունենալ սոցիալիզմի կամ պրոլետարիատի շահերի հետ: Հակակապիտալիստական լոզունգները շիրմա չե՞ն արդյոք աստվածանարգման և սատանայական խնջույքների քողարկման համար:

Մարքսիստներն, իրենց ասելով, աթեիստներ են և չեն հավատում ո՛չ Աստծուն և ոչ էլ սատանային: Ծայրահեղ իրավիճակներում միայն մարքսիզմը պոկել է աթեիզմի դիմակը, իր իսկական՝ սատանայական դեմքը բացահայտելու համար: Այն, որ կոմունիստները հալածում էին կրոնն ու կրոնավորներին, կարելի է մարդկայնորեն բացատրել, բայց վայրագ կատաղությունը, որ դուրս է երևակայելի սահմաններից, միայն սատանայական ծագում ու բնույթ կարող է ունենալ:

Ռումինիայի և ՍՍՀՄ-ի որոշ բանտերում հավատացյալ կանանց, որոնք մերժում էին ուրանալ կրոնը, բռնաբարում էին: Նույն վերաբերմունքին էին արժանանում նաև բապտիստ աղջիկները: Այսպիսի բռնությունների ենթարկվելով՝ բազմաթիվ բանտարկյալներ նահատակվեցին: Բայց նման մահը չի բավարարում կոմունիստներին: Գործի դնելով հիրավի լյուցիֆերյան

տեխնիկա, նրանք ստիպում էին մարդկանց մեռնել անարգելով Աստծուն: Խեղճ մարդիկ տանջանքների, զառանցանքների մեջ նվաղելով, անգիտակցորեն աստվածանարգում էին:

Իր երկերում Մարքսը միայն մեկ անգամ է հիշատակում տանջանքների մասին: Մինչդեռ իր հետևորդներից շատերն են տանջանքների ենթարկվել ցարական իշխանությունների կողմից:

Մարքսին սովորաբար մարդասեր են համարում և պետք էր ակնկալել, որ նա սարսափով պիտի խոսեր նման զազրելի մեթոդի մասին: Ահա Մարքսի միակ մեկնաբանությունն այս առթիվ.

«Տանջաքննությունն ինքնին նպաստել է ամենահանճարեղ մեխանիկական գործիքների ստեղծմանը՝ դրանց պատրաստման գործում ներգրավելով բազում հմուտ ու ձեռներեց արհեստավորների» (Theories of surplus value, էջ 375):

Կտտանքը շարժառիթ է և տանում է արժեքավոր հայտնագործությունների՝ ահա թե ինչ կարող է նա ասել այս հարցի շուրջը: Ուրեմն էլ ինչո՞ւ զարմանալ, որ մարքսիստական իշխանություններն իրենց թշնամիներին խոշտանգելու հարցում գերազանցել էին բոլորին: Միայն այսքանը բավական է մարքսիզմի սատանայական դիմակը պատռելու համար:

Մարքսիզմի հիմնադրույթն ատելությունն է առ Աստված: 1923թ. Սովետական Միությունում, հենց Տրոցկու և Լունաչարսկու ներկայությամբ անց են կացվել ծաղրական դատավարություններ ընդդեմ Աստծո: Դժբախտաբար սեփական ժողովրդի ու Աստծո հանդեպ բուռն ատելության դրսևորումներ միայն անցյալում չէ, որ եղել են: Սովետական Լիտվայի բազմաթիվ քաղաքներում ու գյուղերում 70-ական թվականներին շատ կաթոլիկական եկեղեցիներ պղծվել են սատանային վայել ձևով: Մեզ հայտնի դեպքերից վերջինը կատարվել է 1980թ. սեպտեմբերի 22-ին Ալսեդեա քաղաքում:

«Psychiatric Hospital 14, Moscow» գրքում, Գեորգի Ֆեդոտովը պատմում է հոգեբույժ Վլադիմիր Լևիցկու հետ ունեցած զրույցի մասին: Խոսքը գնացել է ոմն հավատացյալ Արժանտովի մասին, որը բուժվող հիվանդ է եղել: Ահա թե ինչ է ասել բժիշկն իր հիվանդին.

«Դուք ձեր ընկեր Էդուարդին համոզում եք դառնալ Աստծո նվիրյալ, իսկ մենք՝ սատանայի սպասավոր: Այդ իսկ պատճառով գործի դնելով հոգեբույժի իմ իրավունքները, ձեզ և ձեր ընկերներին արգելում եմ որևէ առնչություն ունենալ նրա հետ»:

Մոգամբիկում քրիստոնյա Սալու Դակա Նդեբելեն հարցաքննության է ենթարկվել գաղտնի ոստիկանության գործակալի կողմից, որն այսպես է հայտարարել. «Ուզում ենք ձեր Աստծուն սպանել»:

Հետո հրացանի փողն ուղղելով բանտարկյալի գլխին, ավելացրել է. «Սա է իմ Աստվածը: Սրա զորությամբ ես իշխում եմ կյանքի ու նաև մահվան վրա: Եթե քո Աստվածն այստեղ լիներ, ինքս այս հրացանով կսպանեի նրան» (Salu Ndebele, Guerrilla for Christ (Old Tapan, N. J. Fleming H. Revell). էջ 9, 10):

Շիասոյում (Անգոլա) կոմունիստները եկեղեցում մորթելով կենդանիներին՝ վերջիններիս գլուխները դրել են խորանին, իսկ կողքին ցուցանակ են կախել հետևյալ խոսքերով.

«Սրանք են այն աստվածները, որոնց դուք պաշտում եք»:

Պաստոր Աուրելիո Սաունջեին իր 150 ծխականների հետ սպանել են:

Լիտվայի կաթոլիկ եկեղեցու քահանա Եվգենի Վոսիկևիկին սպանել էին: Նրա բերանը լիքն էր հացով: Ի՞նչ է սա, եթե ոչ սատանայապաշտության ծես:

«Վեչերնայա Մոսկվա» թերթի էջերից մեկում պատահաբար, թերևս խմբագրի անուշադրության հետևանքով, գրել էին հետևյալ տողերը.

«Մեր պայքարն, ըստ էության, ո՛չ հավատացյալների և ոչ էլ հոգևոր դասի դեմ է ուղղված: Մենք պայքարում ենք ընդդեմ Աստծո՝ նրանից իր հավատացյալներին խլելու համար»:

Այս պայքարը կրոնի դեմ կոմունիստների մղած պայքարի միակ տրամաբանական բացատրությունը չէ՞ արդյոք: Դրա համար էլ չենք զարմանում սովետական թերթում այս տողերը կարդալիս:

Արդեն իսկ Մարքսը «Գերմանական գաղափարախոսություն» գրքում Աստծուն անվանում է «Բացարձակ Ոգի» (ի դեպ, ինչպես և իր ուսուցիչ Հեգելը). «Մեզ հիմա մտահոգում է ավելի մեծ կարևորություն ունեցող մի հարց՝ բացարձակ ոգու ջախջախումը»: Այստեղ խոսքը չի գնում գոյություն չունեցող Աստծո հանդեպ կեղծ հավատի դեմ պայքարի մասին, ընդհակառակը Մարքսին մտահոգում էր հետևյալը. նա հավատում էր Աստծո գոյությանը և ուզում էր այդ «Բացարձակ Ոգին» փշրված տեսնել, հար և նման բազում այն բանտարկյալներին, որոնք հետագայում կոմունիստների կամքով պիտի փտեին բանտերում:

Ալբանիայում Ստեֆան Կուրտ անունով մի հոգևորական մահվան դատապարտվեց միայն այն բանի համար, որ երեխա էր կնքել: Նշենք, որ շատ կոմունիստական երկրներում, այդ թվում և Հյուսիսային Կորեայում, մկրտությունը խիստ գաղտնի կատարվում:

Լենինգրադի մետրոպոլիտ Բենիամինի դատավարության ընթացքում մի հայցվոր հայտարարում է.

«Ուղղափառ եկեղեցին ամբողջությամբ կորստաբեր է: Մասնավորապես եկեղեցին ու կրոնը պետք է արգելվեն»:

Եվ եթե ՍՍՀՄ-ում բոլոր հավատացյալները բանտերում չեն, պատճառն այն է, որ կոմունիստները բավականաչափ հզոր չեն: Բայց առկա է ավերելու ու ջախջախելու անհերթ կամքը:

Աստվածային Ոգու ազդեցությունից դուրս լինելով և ամբողջովին չար ուժերի գերիշխանության ներքո գտնվելով՝ նրանք իրականում ունակ են կործանելու ողջ տիեզերքը, այդ հորձանքի մեջ առնելով և իրենց:

Սովետական Միությունում մկրտությունը կարող է կատարվել միայն հատուկ գրանցումից հետո: Բոլոր նրանք, ովքեր ուզում են կնքել իրենց երեխաներին, եկեղեցուն պետք է ներկայացնեն ինքնությունը հաստատող փաստաթուղթ, որից հետո եկեղեցին պետք է տեղյակ պահի իշխանություններին: Այստեղից էլ սկսվում են հալածանքները: Կոլտնտեսականներն ինքնությունը հաստատող փաստաթղթեր չունեն և ստիպված են լինում գաղտնի մկրտել երեխաներին: Բողոքական եկեղեցու շատ սպասավորներ բանտ են նետվել այս հանգամանքն ու ձևականությունը հաշվի չառնելու համար:

Կոմունիստների անողոք պայքարն ընդդեմ սրբազան օծման արդեն իսկ հավատի ճշմարտացիության ու զորության ապացույց է: Այնպիսի կրոնական պետություններ, ինչպիսիք են Իսրայելը, Պակիստանը, Նեպալը դեմ են մկրտությանը՝ որպես քրիստոնեական դավանանքին պատկանելիության արտաքին դրսևորում, քանի որ այս երկրներում այլ կրոն են դավանում: Բայց աթեիստների համար (այսպես են իրենց անվանում կոմունիստները) մկրտությունը խորհուրդ չունի: Մկրտվողի համար այն ոչ լավ է, ոչ վատ: Իսկ նման դիրքորոշման դեպքում ո՞րն է նրանց հալածելու պատճառը: Այն, որ «նրանք պայքարում են ընդդեմ Աստծո՝ նրանից իր հավատացյալներին խլելու համար»: Հետևաբար, նրանց գաղափարախոսությունն իրականում աթեիզմի ծնունդ չէ, այլ Աստծո դեմ մոլեգին կատաղության արդյունք:

Լենինը խոստովանել է, որ «մենք ստեղծեցինք մեր կուսակցությունը հատկապես «ժողովրդի հաշիշը»՝ կրոնը, ջախջախելու նպատակով»:

Օկուլտիստական գործունեություն

Եթե ուզում եք ավելի շատ բան իմանալ մարքսիզմի և օկուլտիզմի միջև գոյություն ունեցող հարաբերությունների

մասին, կարդացեք Շրոյդերի «Պարահոգեբանական աներևակայելի հետազոտություններ ՍՍՀՄ-ում» գիրքը (Փարիզ, 1973թ.): Ընթերցողն անսպասելիորեն բացահայտում է, որ Արևելյան Եվրոպայի կոմունիստական երկրները մի քայլ առաջ են անցել Արևմուտքից՝ սատանայի ծնունդ անդրաշխարհային ուժերի բացահայտման ու կիրառման գործում:

Հոգեբանների միջազգային ասոցիացիայի անդամ դոկտոր Էդուարդ Նաումովը ձերբակալվել էր Մոսկվայում: Հավատափոխված ու քրիստոնեական հավատի ուղու վրա կանգնած մոսկվացի հրեա Լ. Ռեգելսոնը ձայն բարձրացնելով նրա պաշտպանության օգտին՝ լուսաբանեց վերջինիս ձերբակալման շարժառիթը. Նաումովը փորձել էր զերծ պահել հոգեաշխարհը չար ուժերի բացարձակ գերիշխանությունից, որոնց այս բնագավառը (հոգեբանություն) հետաքրքրել էր իբրև մարդու անհատականության ճնշելու մի նոր ոլորտ: Չեխոսլովակիայում, Բուլղարիայում և այլուր կոմունիստական կուսակցությունը հսկայական գումարներ է ներդնում մետաֆիզիկայի ասպարեզում գաղտնի հետազոտությունների համար: ՍՍՀՄ-ում կան պարահոգեբանության 20 ինստիտուտ, բայց «երկաթե վարագույրի» կուսակցությունն Արևմուտքի համար անթափանց պատնեշ է, որը թույլ չի տալիս նվազագույն գաղափար իսկ կազմել, թե ինչ է տեղի ունենում այնտեղ («Новое русское слово», 30 հուլիս, 1975թ.):

«Կոմսոմոլսկայա պրավդա»-ն լայնածավալ մի հոդված է հրապարակել հիպնոսիչների մասին, որոնք օգնում են մարդկանց «վերապրել անցած կյանքը»: Այս երևույթի իրականացման համար նրանք օգտագործում են հետևյալ հրահանգները. «Դուք իջնում եք գետնի տակ, խորը, ավելի ու ավելի խորը: Դուք հողը նույնանում եք միասնական ու անբաժանելի դառնալու աստիճան... Դուք հողի մեջ եք, շատ ու շատ խորը և պարուրված եք անթափանց խավարով... Ձեր շուրջը հավիտենական գիշեր է. Այժմ կամաց-կամաց մոտենում եք հեռվում առկայծող լուսավոր մի կետի... Այն ավելի ու ավելի է մոտենում: Երկնքի մեջ բացվում այդ փոքրիկ լուսավոր կետից ներս ենք թափանցում, թողնելով մեր մարմինը գետնի տակ, ամենախորքում... Ահա և մենք հայտնվում ենք մի անցյալ կյանքում, քանի որ անցել ենք ժամանակի սահմաններից այն կողմ...»:

Այս կարգի հոդվածներում կոմունիստները դիտավորյալ երկիմաստ արտահայտություններ են գործածում: Շատ լավ գիտակցելով, որ ոմանք կվախենան, կսարսափեն, նրանք կանխամտածված կերպով հայտարարում են, որ իրենք սահմանափակվում են միայն տեղեկություններ հաղորդելով, առանց, թերևս, կատարելապես դրանց հետ համաձայնելու: Իսկ ի՞նչ կմտածե

ընթերցողը, եթե, օրինակ, որևէ հրատակչի խելքին փչի անսահմանափակ քանակությամբ պրովոկացիոն հոդվածներ և «փլեյ բոյ» ոճի պոռնկագրական լուսանկարներ տպել թերթում և միաժամանակ հպարտորեն ազդարարել, թե ինքը լիովին համաձայն չէ իր ներկայացրած նյութերի հետ:

Սովետական գրողները կտրականապես հայտարարում են, որ այդ «ժամանակի մեքենան» գիտաֆանտաստիկ գրականության ժանրին չի պատկանում: Մինչդեռ «տրանսանհատականացումը» տալիս է ժամանակի մեջ ճամփորդելու նման հնարավորություն:

Մենք արդեն առիթ ունեցանք հիշատակելու, որ սև մոգության արարողությունների ժամանակ բոլոր աղոթքները կարդացվում են հակառակ կարգով՝ վերջից՝ սկիզբ, և քուրմը շուրջառը թարս է հագնում: Շրջադարձությունը՝ սատանայապաշտության այդ կանոնը, վերագրվում է նույնիսկ վերամարմնավորման ուսմունքին: Մինչ հնդիկ նվիրյալներն իրենց կյանքի ընթացքում տանջվում են գալիք վերամարմնավորմանը պատրաստ լինելու համար և ջանում կատարյալ վիճակի հասնել, սատանայի համախոհները, դրան հակառակ, առաջարկում են վերադարձ դեպի նախկին վերամարմնավորումները և սպանիչ ծաղրի առարկա են դարձնում հավերժության մեջ կատարյալ ապագայի լուսավոր տեսիլքը:

Մարքսիզմը հավա՞տք է, թե՞ ոչ

Ինչպես որ Աստվածաշնչում սատանան Հիսուսին փորձության ենթարկեց հենց Սուրբ Գրքի տողերն ի չարս գործածելով, այնպես էլ Մարքսն է օգտվում սրբազան տեքստերից, իհարկե, դրանք սարսափելիորեն ձևափոխելով: «Մարքսի և Էնգելսի աշխատություններ»-ի II հատորն սկսվում է Հիսուսի՝ Իր աշակերտներին ուղղված խոսքերով (Հովհ 6.64):

«Հոգին է կենդանարար» բառերով է սկսվում Մարքսի «Սրբազան ընտանիքը», որից հետո կարդում ենք. «Քննադատությունը (գոյություն ունեցող ամեն ինչի քննադատությունը) այնպես սիրեց մասսաներին, որ ուղարկեց իր միածին որդուն (այսինքն՝ Մարքսին), որպեսզի ով նրան հավատա, չկորչի, այլ ունենա քննադատության կյանք: Քննադատությունը շատացել է և ապրում է մեր մեջ և մենք տեսանք նրա փառքը, ինչպես տեսանք փառքը Հոր միածին որդու: Քննադատությունը Աստծուն հավասար լինելը հափշտակություն չհամարեց, այլ իրեն ունայնացրեց՝ ծառայի կերպարանք առնելով և խոնարհեցրեց ինքն իրեն մինչև անիմաստություն, այո՛, մինչև օտար լեզուներով

քննադատական անիմաստություն» (Werke II, էջ 9):

Սուրբ Գրքին ծանոթ ընթերցողները նկատեցին անշուշտ Աստվածաշնչի հետևյալ հատվածների ծաղրանմանակումը. Հովհ 3.16, 1.14, Փիլ 2.6–8: Հիշենք, թե ինչպես է Մարքսը բնորոշել իր սեփական աշխատությունները՝ «հիմարություններ» և «աղտեղություններ»:

Մարքսիզմը մի նոր կրոն է, որն օգտագործում է Սուրբ Գիրքը: Մարքսի կարևորագույն աշխատությունը՝ «Կապիտալը», կոչվել է «բանվոր դասակարգի Աստվածաշունչ»: Ինչ վերաբերվում է Մարքսին, ապա նա իրեն «կոմունիզմի պապ» էր համարում: Կոմունիզմի ուժը նրա անխախտելիության և անսխալականության մեջ է: Բոլոր նրանք, ովքեր կոմունիստական «կրեդոյին» կհակառակվեն (արտահայտությունը քաղված է Էնգելսի երկերից և նշանակում է «հավատամք»), կվտարվեն ու կհեռացվեն: Մարքսը գրում է. «Բակունինը պետք է զգուշանա, այլապես նրան կվտարենք» (Werke, հ.32, էջ 351):

Ի սպաս մարքսիզմի կյանքը զոհածներին, կոմունիստները հիշում ու հարգանքի տուրք են մատուցում իրրև «նահատակների»: Մարքսիստներն ունեն սրբագործման իրենց արարողությունները. հանդիսավոր հավաքներ ամենափոքրերի՝ «Հոկտեմբերի մանուկներ» կազմակերպությունում, ունեն իրենց երդումները «պիոներության շարքերը» անցնելիս: Հետևում են ձեռնադրման ավելի բարձր մակարդակները, երբ օծում են կոմերիտական և կուսակցական: Խոստովանանքը փոխարինվում է ինքնաքննադատությամբ, այն էլ կուսակցական ժողովի առջև:

Ուրեմն՝ մարքսիզմը դավանանք է, քանի որ ունի կրոնին բնորոշ բոլոր հատկանիշները: Մինչդեռ այս կրոնի աստծո անունը հանրամատչելի գրականության մեջ չի հիշատակվում:

Հետաքրքիր է նշել, որ չնայած իր սատանայական բնույթին ու էությանը, մարքսիզմը, մի շարք եկեղեցիների պաշտոնյաների կարծիքով, վտանգ չի սպառնում ազատ աշխարհի համար: Այս առթիվ բերենք վիճակագրական մի քանի տվյալներ: Միացյալ Նահանգներում սեմինարիայի դասախոսներին տվել են հետևյալ հարցը.

«Հնարավո՞ր է լինել ձեր պաշտոնական անդամը ու միաժամանակ հարել մարքսիզմին»:

Ստորև բերվում է դրական պատասխանների տոկոսային հարաբերությունը.

Եպիսկոպոսական եկեղեցի	68%
Լյութերական եկեղեցի	53%
Երիցական եկեղեցի	49%
Մեթոդիստական եկեղեցի	49%

Քրիստոսի եկեղեցի	47%
Բապտիստական եկեղեցի	44%
Կաթոլիկ եկեղեցի	31%

Ցավալի է տեսնել, որ ճշմարտության լուսավոր ուղիով ընթացող մարդիկ կարող են ընկնել կեղծիքի ու ստի աստծուն ծառայող սպասավորների թակարդը:

7

Մարքսը, Դարվինը և հեղափոխությունը

Մարքսը և Դարվինը

Այժմ պարզենք, թե ինչ դեր խաղաց Մարքսը մարդկությա
կործանման ծրագիրն իրականացնելու գործում: Պետք է ասել, ո
կարևորագույն դեր:

Աստվածաշունչն ասում է, որ Աստված ստեղծեց մարդուն ի
պատկերով և նմանությամբ: Մինչև Մարքսը մարդը դիտվում է
իբրև արարչագործության գագաթ ու պսակ: Սատանայի ձեռքի
Մարքսն ընտրյալ գործիք դարձավ: Այդ նա՝ Մարքսը, ստիպե
մարդուն մոռանալ իր արժանապատվությունը, զրկեց նրա
փառահեղ անցյալի ծնունդ լինելու հաստատ համոզմունքի
անցյալ, որին նա դառնալու է օրերից մի օր: Մարքսիզմ
համակարգված ու մանրամասնորեն մշակված առաջին փիլիսո
փայական սիստեմն էր, որ բիրտ ու կոպիտ ձևով նվաստացրեց
զրոյի հավասարեցրեց մարդու պատկերացումն իր մասին: Այ
ուսմունքի հեղինակին է պատկանում այն «հանճարեղ» միտք
ըստ որի մարդ արարածը հիմնականում սոված որովայն է, որ
անհրաժեշտ է մշտապես լցնել, իսկ գերագույն նպատակներն
շահերը վերաբերում են տնտեսական ոլորտին: Մարդն արտա
դրում է իր տարրական կարիքները բավարարելու համար միայ
և այս ձևով կարող է մյուս մարդկանց հետ հարաբերվել: Ահ
հասարակության հիմնակմախքը, որը Մարքսի բնորոշմամբ կոչ
վում է բազիս: Ամուսնությունը, արվեստը, գիտությունը, կրոն
փիլիսոփայությունը, մի խոսքով այն ամենը, ինչը չի առնչվու
որովայնի պահանջները գոհացնելու հետ, կոչվում է վերնաշեն
որի կայունությունն ու վիճակը վերջ ի վերջո նույնպես որոշ
վում է որովայնի վիճակով:

Զարմանալի չէ, որ Մարքսը մեծագույն ուրախություն ապրե
կարդալով Դարվինի «Տեսակների ծագումը» գիրքը, որն
կարծիքով ջախջախիչ հարված հասցրեց մարդուն՝ ստիպել
նրան մոռանալ իր աստվածային ծագման ու նախասահմանմա
մասին: Դարվինը ենթադրում էր, թե մարդը կենդանակա
ծագում ունի:

Այսպիսով, բնության թագավորն ու զարդը ճարպկորեն գահընկեց արվեց այս երկու անձնավորությունների կողմից: Անզոր լինելով ուղղակիորեն հարձակվել Աստծո վրա՝ սատանան արժեզրկեց մարդուն, իր իսկ աչքում ցածրացնելով նրան՝ բնազդներով ապրող ստրուկի և կենդանական դասի ուղղակի ժառանգի աստիճան:

Տարօրինակ զուգադիպությամբ 19-րդ դարն աշխարհին պարգևեց քրիստոնեական հավատի երեք կատաղի թշնամիների, որոնք բոլորն էլ Շարլ անունն էին կրում: Կարլ (գերմաներեն՝ Շարլ) Մարքսը, Չարլզ Դարվինը և ֆրանսիացի պոետ Շարլ Բոդլերը: Վերջինս իր «Կայեն ու Աբել»-ում գրում է.

Կայենի սերունդ, հասիր երկինք
Ու ցած նետիր Աստծուն:

1867թ. հունվարի 16-ին Ֆերդինանդ Լասալին ուղղված նամակում Մարքսը գրում է. «Դարվինի գիրքը կարևորագույն նշանակություն ունի: Այն ինձ համար հիմք է ծառայել դասակարգային պատմական պայքարի տեսությունը մշակելիս»:

«Սոցիալիզմը և մտավորականությունը» գրքում Մարքսի փեսան՝ Փոլ Լաֆարգը, հաստատում է.

«Դարվինի «Տեսակների ծագումը» գիրքն Աստծուց խլեց օրգանական աշխարհն արարողի պատիվը: Նույնին հասավ նաև Ֆրանկլինը, սակայն պատերազմի ու արյունահեղության ճանապարհով»:

Իրականում Դարվինը հատուկ դիտավորություն չուներ հեղինակազրկել Եկեղեցուն: Ահա թե ինչ է գրել նա.

«Կյանքի այս զարմանահրաշ տեսիլքն իր բազմապիսի ու հզոր դրսևորումներով իր մեջ վեհության մեծ խորհուրդ ունի, կյանք, որի մեկ կամ մի քանի դրսևորումներն արարվել են նախասկզբնական շնչից»: Իր ուսմունքն ավելի հուզիչ դարձնելու համար Դարվինը «Նախասկզբնական շունչ» -ից հետո, իր աշխատության երկրորդ հրատարակության մեջ ավելացրել է «Արարիչ» բառը: Հետագայում բոլոր հրատարակությունները լույս են տեսել այս ձևով:

Ավելի ուշ Ֆրեյդը եկավ լրացնելու այս երկու հսկաների սկսած գործը՝ մարդուն հիմնավորապես ցածրացնելով և դիտելով նրան իբրև մի էակի, որը միայն սեռական բնազդով է ապրում, բնազդ, որի վսեմագույն արտահայտություններին ծանոթ ենք քաղաքականության մեջ, արվեստում և կրոնում: Եվ միայն շվեյցարացի հոգեբան Կարլ Գուստավ Յունգի եռանդուն գործունեության շնորհիվ հաստատվեց աստվածաշնչյան այն

դրույթը, ըստ որի հոգևոր, կրոնական բնազդը հիմնավորապես և անխախտ է նստած ամեն մարդու մեջ:

Մարքսի գործունեության տարիները, կյանքի բազում ոլորտներում, սատանայական սանձարձակ լկտիության ժամանակներ էին: Այսպես օրինակ, ռուս պոետ Սոլոգուբը հայտարարում է. «Իմ հայրը սատանան է»: Բրյուսովը լրացնում է ասելով. «Փառաբանում եմ ինչպես Աստծուն, այնպես էլ սատանային»:

Մարքսն այն ժամանակաշրջանի ծնունդն էր, որն աշխարհին տվել էր միաժամանակ Նիցշե (Հիտլերի և Մուսոլինիի նախընտրելի փիլիսոփան), Մաքս Սթերներ՝ կատաղի անարխիստ և Օսկար Ուայլդ՝ ազատ արվամոլության առաջին կողմնակիցը:

Սատանայական ուժերի եռանդուն գործունեության արդասիքը մարքսիզմի հաղթանակն էր Ռուսաստանում: Ահա թե ինչպիսի գույներով է ներկայացվում գերիշխող հոգեվիճակը հեղափոխական Ռուսաստանում. «Վրա են հասել այն ժամանակները, երբ սերը, ազնիվ զգացմունքներն ու բարությունն արհամարհվում են և հետադիմական են համարվում: Աղջիկները թաքցնում են կուսությունը, ամուսինները՝ իրենց հավատարմությունը: Ավեր ու կործանում է քարոզվում ամենուրեք: Անէության ծնունդ մոդայիկ որոշ գրողների կարծիքով ավերածությունը լավ ճաշակի, իսկ նյարդաթուլագարությունն էլ նուրբ ու խորաթափանց մտքի արտահայտություն է: Մարդիկ նոր արատներ ու նողկալի թերություններ են հորինում և ջանում են երբեք բարոյականության կողմնակիցներ չհամարվել»:

Այս ամենից հետո դեռ փորձում ենք բացատրել, թե ինչո՞ւ Ստալինը Դարվինին կարդալուց հետո դարձավ հեղափոխական:

Ուղղափառ սեմինարիայում ուսանելիս «Տեսակների ծագումը» կարդալուց հետո Ստալինի մոտ այնպիսի տպավորություն ստեղծվեց, ասես մարդն Աստծո արարածը չէր, այլ այնպիսի էվոլյուցիայի արգասիք, ուր իշխում է միայն անողոք ու դաժան հակամարտությունը. կենդանի կմնա նա, ով ամենից ուժեղն է ու դաժանը: Բնության մեջ կրոնական կամ բարոյական չափանիշները ոչ մի դեր չեն խաղում, քանի որ ինչպես ձուկը կամ շիմպանզեն, մարդն էլ ընդամենը բնության մի մասնիկն է: Ուրեմն, կեցցե դաժանությունը և անողոք պայքարը: Գրելով «Տեսակների ծագումը», Դարվինը ցանկանում էր շարադրել իր գիտական հայացքները, և մտադիր չէր շոշափել քաղաքական, առավել ևս տնտեսական հարցեր: Դարվինի ուսմունքն աներևակայելի հետևանքներ ունեցավ, այն է՝ տասնյակ միլիոնավոր անմեղ մարդկանց կործանում: Եվ իսկապես էլ, Դարվինը դարձավ պատմությանը երբևէ հայտնի մի այնպիսի մարդասպանի «Հոգևոր հայրը», ինչպիսին էր Մարքսը:

XIX դ. մտավորականությանը համակած գաղափարներում առկա էին նաև ֆրանսիական հեղափոխության թողած հետքերը, մի հեղափոխություն, որը հոգևոր առումով շատ աղերսներ ունի XX դ. ռուսականի հետ:

Ֆրանսիայում, ապստամբության օրերին, փայլուն հեղափոխական -լուսավորիչ Անախարսիս Կլոտսն իրեն համարում էր «Հիսուսի անձնական թշնամին»: 1792թ. նոյեմբերի 17-ին Կոնվենտի առջև նա ազդարարում է. «Ժողովուրդն է այս աշխարհի տիրակալն ու աստվածը... միայն խելագարը կարող է հավատալ մեկ ուրիշ Աստծո, մեկ ուրիշ գերագույն էակի»: Այնժամ Կոնվենտը հրապարակեց մի նոր դեկրետ «կրոնի բոլոր ձևերը հիմնովին ջախջախելու մասին»:

Բոլոր նրանց համար, ովքեր հավատում են Տիրոջ խոսքին, «Ազատիր մեզ չարից» աղերսի իմաստը պարզ է. Աստծուց խնդրել, որ նա պաշտպանի ու զերց պահի մեզ ամեն կարգի կեղծ ուսմունքներից և անբարո արվեստից, որոնք մեզ ընտելացնում են բարիով քողակված չարի գոյությանը, և փրկի մեզ՝ կյանքում տեղ գտած անբարոյականությունից:

Մենք կանգնած ենք ընտրության առջև՝ լինել սատանայի պես դաժան ու արատավոր, կամ Հիսուսի օրինակով դառնալ աստվածային ու կատարյալ մարդ, որի հոգին լի է խաղաղությամբ, սիրով և սրբազան հավատով:

Մովսես Հեսսի կեղծ սիոնիզմը

Պատկերը կատարյալ դարձնելու համար ևս մի քանի խոսք Հեսսի մասին, մի մարդու, որի ջանքերով Մարքսն ու Էնգելսը հավատափոխ լինելով՝ հարեցին սոցիալիստական գաղափարներին: Իսրայելում կա մի դամբարան, որի վրա կարելի է կարդալ հետևյալը.

«Մովսես Հեսս, գերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցության հիմնադիր»:

«Կարմիր կատեխիզիսը գերմանական ժողովրդի համար» գրքում Հեսսը գրում է. «Ի՞նչն է մռայլ ու արատավոր... Սև ու արատավոր է հոգևորական դասը... Այս աստվածաբան կոչվածներն ավելի վատ են, քան արիստոկրատները: Տերտերը նախ Աստծո անունից սովորեցնում է արքայազնին՝ ճնշել ժողովրդին, ապա սովորեցնում է ժողովրդին հպատակվել և ստրուկի պես շահագործման ենթարկվել հանուն Աստծո: Վերջապես և ընդհանուր առմամբ Աստծո օգնությամբ իր համար այս երկրի վրա բարեկեցիկ կյանք է ապահովում, միաժամանակ ժողովրդին

խորհուրդ տալով՝ սպասել երկնային արքայությանը...»:

«Կարմիր դրոշակը հարատև հեղափոխության սիմվոլն է այնքան ժամանակ, քանի դեռ բանվոր դասակարգը վերջնականապես չի հաղթանակել բոլոր քաղաքակիրթ երկրներում, այլ կերպ ասած՝ մինչև Կարմիր հանրապետության հաղթանակը»:

«Իմ դավանանքը սոցիալիստական հեղափոխությունն է: Աշխատավորները մի երկիր նվաճելուց հետո պետք է օգնեն իրենց եղբայրներին աշխարհի մյուս երկրներն էլ գրավելու»:

Այսպիսին էին Հեսսի համոզմունքներն այն պահին, երբ լույս տեսավ նրա «Կատեխիզիսը»: Երկրորդ հրատարակության մեջ Հեսսն ավելացնում է մի քանի գլուխ: Այստեղ խոսքը նորից նույն դավանանքի մասին է՝ սոցիալիստական հեղափոխության: Սակայն այժմ քրիստոնյաներին վստահություն ներշնչելու համար Հեսսը դիմում է ավետարանին:

Հեղափոխությունը գովերգող ու փառաբանող պրոպագանդայի կողքին հեղինակը մի քանի սիրաշահող խոսքեր է նետում քրիստոնեության, սիրո, կրոնի ու մարդասիրության հասցեին: Սակայն ճիշտ կլիներ այս ամենն ավելի լուսաբանել: Հեսսի պատկերացումով դժոխքն այս երկրի վրա չպիտի լինի, ոչ էլ դրախտը՝ երկնքում: Սոցիալիստական հասարակությունը քրիստոնեական պատվիրանների կատարյալ իրագործումը կլինի: Ահա այսպես է սատանան լույսի ու ճշմարտության հրեշտակի կերպարանք հագնում:

Մարքսին և Էնգելսին համոզելով սոցիալիստական գաղափարների ճշմարտացիության մեջ, նա հենց սկզբից էլ չի թաքցնում, որ իր վերջնական նպատակը «միջնադարյան կրոնին ու եկեղեցուն ջախջախիչ հարված հասցնելն է»: (Նրա ընկեր Յունգն ավելի հստակ է շարադրում այս միտքը. «Մարքսին անկասկած կհաջողվի Աստծուն վտարել երկնքից»): Հեսսի կյանքում էլ է տեղի ունենում մի շատ հետաքրքիր իրադարձություն: Այն մարդը, որ ժամանակակից սոցիալիզմի հիմնադիրն էր, միաժամանակ արմատապես տարբեր մի այլ շարժման հիմնադիրն է դառնում, այն է՝ սիոնիզմը, որի նպատակն էր կործանել բարեպաշտ սիոնիզմը, որը հարևան ժողովուրդների միջև սեր, համերաշխություն ու հաշտ հարաբերություններ էր քարոզում: Նույն մարդը, որ Մարքսին պարզաբանել էր դասակարգային պայքարի նշանակությունը, 1862թ. գրում է հետևյալ տողերը, որոնք անչափ զարմացնում են. «Ամենից առաջ ռասայական, հետո միայն դասակարգային պայքար»: Այդ նա էր, որ հանուն դասակարգային պայքարի բորբոքեց անմարելի մի կրակ, փոխանակ այդ նույն դասակարգերին մատնացույց աներ համագործակցության ճշգրիտ ուղին հանուն ընդհանուրի բարօրության:

Այսպիսով, Հեսսը դարձավ աղավաղված սիոնիստական մի նոր շարժման՝ ռասայական թշնամություն սերմանող սիոնիզմի սաղրիչը, որի պայքարի սուր սլաքն ուղղված էր ոչ հրեա բոլոր ազգերի դեմ: Ինչպես մենք ենք մերժում մարքսիստական դիվային ուսմունքը, նույնպես էլ պատասխանատվության զգացում ունեցող յուրաքանչյուր հրեա կամ քրիստոնյա պետք է մերժի սիոնիզմի նման սատանայական աղավաղումը:

Հեսսը պահանջում է Երուսաղեմը հրեաների համար, սակայն Երուսաղեմ «առանց Հիսուսի, որ հրեաների թագավորն է»: Ինչի՞ է պետք Հիսուսը: Իրականում «ամեն հրեա արդեն իսկ պոտենցիալ մեսիա է և ամեն հրեուհի էլ ողբացող Մարիամ չէ՞ արդյոք»: Այդ դեպքում ինչո՞ւ Մարքսը, լինելով հրեա, չդարձավ մեսիա կամ Աստծո ընտրյալ, այլ մնաց մի մարդ, որն իր ամբողջ կյանքը, չարագործություններն ու ատելությամբ լի սիրտն ի սպաս դրեց Աստծուն երկնքից վտարելու պիղծ գործին: Հեսսի կարծիքով Հիսուսը հրեա է, որին հեթանոսներն աստվածացրեցին՝ կոչելով նրան Փրկիչ: Ո՛չ ինքը, և ոչ էլ հրեաները Հիսուսի կարիքն իբրև Փրկչի չեն զգում:

Հեսսը չի ուզում փրկված լինել և ենթադրում է, որ սրբության անհատական որոնումը հնդ-գերմանական ծագում ունի: Հրեաների իդեալը, ըստ իրեն, «մեսիա-պետությունն» է, որը հնարավորություն կտա մարդուն բացահայտելու իր «աստվածային էությունը», որն ինչպես ինքն է հաստատում «Կարմիր կատեխիզիս»-ում, նշանակում է իրագործել սոցիալիստական հեղափոխություն՝ հիմնվելով ռասայական և դասակարգային պայքարի վրա:

Հեսսը, որ Մարքսի՝ իր կուռքի ուսերին էր դրել միջնադարյան կրոնի կործանման, սոցիալիստական հեղափոխության և նոր դավանանքի հաստատման ամբողջ ծանրությունը, գրում է հետևյալ տարօրինակ խոսքերը. «Ես միշտ խրատվել եմ եբրայական աղոթքներից»: Այդ ի՞նչ աղոթքներ կարող են կարդալ այն մարդիկ, որոնք կրոնը դիտում են իբրև «հաշիշ ժողովրդի համար»: Արդեն ասվեց, որ աթեիզմի հիմնադիրն աղոթում էր վառվող մոմերի առջև՝ ճակատին գրապանակ կապած: Սա նշանակում է, որ հրեական, ինչպես և քրիստոնեական աղոթքները սատանայապաշտության մեջ կարող են օգտագործվել պղծելու և անարգելու նպատակով:

Հեսսը սովորեցնում էր, որ սոցիալիզմն անքակտելիորեն կապված է ինտերնացիոնալիզմի հետ: Եվ Մարքսն էլ ի հաստատումն այդ խոսքերի, «Կոմունիստական մանիֆեստում» հավաստիացնում է, որ պրոլետարիատը սահմաններ չի ճանաչում: Ինչ վերաբերում է իրեն՝ Հեսսին, «Կարմիր կատեխիզիս»-ում նա ամեն

առիթ օգտագործում է ծաղրելու գերմանական շովինիզմը:

Նույն կերպ, ի դեպ, նա կվարվեր եվրոպական մեկ այլ ժողովրդի հայրենասիրական սուրբ զգացմունքների հետ: Գերմանական սոցիալ -դեմոկրատական կուսակցության «Էրֆուրտյան ծրագիր»-ը, ազգային սկզբունքն անվերապահորեն ընդունելու պատճառով, սուր քննադատության ենթարկվեց Հեսսի կողմից: Հեսսի պատկերացումը ինտերնացիոնալիստի մասին յուրօրինակ է, քանի որ վերջինիս հոգում միշտ պիտի վառ մնա հրեական հայրենասիրությունը: Նա գրում է. «Ուխտադրուժ կկոչվի նա, ով կժխտի հրեական նացիոնալիզմը: Նա ոչ միայն դավաճան է հոգևոր առումով, այլև իր ընտանիքի ու ժողովրդի շահերի թշնամին է: Եթե մի օր պարզվի, որ հրեաների ազատատենչությունն անհամատեղելի է հրեական ազգայնամոլության հետ, ապա առանց մազաչափ իսկ հապաղելու, հրեաները պետք է զիջեն իրենց ազատատենչությունը... Անկախ ամեն ինչից հրեաները պարտավոր են հայրենասեր լինել»:

Ինչ վերաբերվում է ինձ, ապա ես համաձայն եմ Հեսսի հայրենասիրական մտքերի հետ այն չափով, որքանով նրանք օգուտ կարող են բերել բոլորին: Ես կողմ եմ ու հարգում եմ բոլոր ազգերի հայրենասիրական զգացմունքները, լինեն դրանք հրեաներ, արաբներ, գերմանացիներ, ֆրանսիացիներ: Հայրենասիրությունը մեծագույն առաքինություն է, եթե ապահովում է բարեկեցիկ ու երջանիկ կյանք տնտեսական, քաղաքական, հոգևոր ոլորտներում, իհարկե, պայմանով, որ այն հիմնվի ազգերի միջև բարեկամության ու համագործակցության առողջ հարաբերությունների վրա:

Դրան հակառակ, սոցիալիստ հեղափոխականի հրեական հայրենասիրությունը, որը ժխտում է մյուս ազգերի հայրենասիրության իրավունքը, ինձ ծայրաստիճան կասկածելի է թվում: Կարծես սատանայի ձեռքով մշակված ծրագիր լինի, որի նպատակը հրեաներին բոլոր ժողովուրդների աչքում ատելի դարձնել է:

Եթե ես հրեա չլինեի ու տեսնեի, որ հրեաները գրկաբաց ընդունում են Հեսսի հայրենասիրության միակողմանի պլանը, ես անպայման կմերժեի այն: Բարեբախտաբար, ինչքան տեղյակ եմ, ոչ մի հրեա հավանություն չի տվել այս դիվային նախագծին: Ես իրականում, Հեսսն է, որ սիոնիստական շարժմանը սրբազան ուղղվածություն տվեց: Սիոնիզմն իր այսօրվա դրսևորումներում զերծ է սատանայի ներգործությունից:

Ռասայական պայքարը, որի ոգեշնչողը Հեսսն էր, նույնքան սխալ դուրս եկավ, ինչպես և դասակարգային պայքարը, որի սաղրիչը նույնպես Հեսսն էր:

Համենայն դեպս, Հեսսը սիոնիստական այս յուրահատուկ շարժմանը տուրք տալով՝ չդավաճանեց սոցիալիստական գաղափարներին: «Հռոմը և Երուսաղեմը» գրելուց հետո նա շարունակեց իր եռանդուն գործունեությունը համաշխարհային սոցիալիստական շարժման մեջ:

Հեսսը հստակորեն չի շարադրում իր մտքերը, այդ իսկ պատճառով դժվար է դրանք ընկալել: Բավական է ասել, որ ըստ Հեսսի «քրիստոնեական աշխարհը Հիսուսի մեջ տեսնում է մի սուրբ Հրեայի, որը հեթանոս է դարձել»: Այս գրքում նա հայտարարում է, որ «մենք այսօր ձգտում ենք փրկության ավելի լայն գաղափարի, քան այն, որ քրիստոնեությունը երբևէ ի վիճակի է եղել մեզ առաջարկելու»: Հիշենք, ըստ «Կարմիր կատեխիզիս»-ի, փրկության ավելի լայն հասկացողությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ սոցիալիստական հեղափոխությունը:

Ավելացնենք նաև, որ Հեսսը ոչ միայն մարքսիզմի նախասկզբնական հոգևոր աղբյուրն է ու հակաքրիստոնեական սիոնիզմի հիմնադիրը, այլև Ազատագրման աստվածաբանության Հայրը, որը ներկայիս Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի և կաթոլիկության հիմնադրություններից է: Այսպիսով, աշխարհին Համարյա անհայտ այս անձնավորությունը դարձավ սատանայական բնույթ ու ծագում ունեցող երեք շարժումների մուներտիկն ու ջատագովը՝ կոմունիզմի, ռասայական-անտագոնիստական սիոնիզմի և հեղափոխական աստվածաբանության:

Կատարյալ քրիստոնյան չի կարող հրեատյաց լինել: Հիսուսը հրեա էր, ինչպես և կույս Մարիամն ու առաքյալները: Մեր Աստվածաշունչը եբրայական ծագում ունի, և ինքը՝ Տերը, այսպես է ասել. «փրկությունը բերելու են հրեաները»: Եվ Հեսսը դիտավորյալ փառաբանում է հրեաներին, կարծես փորձելով թշնամանք բորբոքել այս ազգի հանդեպ: Հեսսը հաստատում է, որ իր դավանանքը միայն ու միայն սոցիալիստական հեղափոխությունն է, իսկ մյուս կրոնների հոգևորական դասի ներկայացուցիչները միայն խաբեբաներ են: Այո, հեղափոխությունը միակ կրոնն է, որին Հեսսը մեծագույն ակնածանքով է վերաբերվել: Նա գրում է. «Մեր կրոնը (Հուդայականությունը) նախնական, ելակետային պահին արդեն հենվում է այդ ազգի խանդավառ հավատքի վրա, մի ազգ, որ հայտնվելով պատմության թատերաբեմում, կարողացավ կանխատեսել մարդկության վերջնական նպատակը՝ ազդարարելով մարդկության համար այնքան սպասելի մեսիայի երջանիկ ժամանակների մասին, երբ մարդկային հոգին իր կատարյալ վիճակին կհասնի ոչ թե հանձինս մեկ կամ մի քանի անհատների, այլ համայն մարդկության հասարակական հաստատություններում» (Oeuvres Choi-

sies, Moses Hess, Berchtel edit, Allemagne):

«Մեսիայի ժամանակներ» ասելով Հեսսը պատկերացնում է համաշխարհային հեղափոխության վերջնական հաղթանակի փառապանծ օրերը: Այն միտքը, որ հրեական կրոնի նախնական, ելակետային նպատակը եղել է սոցիալիստական, անաստված հեղափոխությունը, զավեշտ է և իսկական հայհոյանք հրեա ազգի հասցեին:

Իր երկերում մշտապես կրոնական տերմիններ օգտագործելով հանդերձ՝ Հեսսը չի հավատում Աստծուն: Նա գրում է. «մեր աստվածը սիրո ու համերաշխության ոգով համախմբված ամբողջ մարդկային ռասան է»: Նման միասնության և համախմբման միակ ուղին սոցիալիստական հեղափոխությունն է, որի անունից նույն այդ սիրելի մարդկության տասնյակ միլիոնավոր անդամներ տանջամահ կարվեն ու կսպանվեն: Ի դեպ, Հեսսը չի էլ թաքցնում, որ կտրականապես դեմ է և չի կարող գլուխ խոնարհել ոչ երկնային և ոչ էլ երկրային իշխանությունների առջև, քանի որ սրանք բոլորն էլ ղեկավարվում են շահագործման ու ճնշման քաղաքականությամբ:

Կրոնի ոչ մի տեսակ իր մեջ բարություն չի ամփոփում, բացի սոցիալիստական հեղափոխությունից: «Բացարձակապես անօգուտ և անարդյունք է ոտքի հանել ժողովրդին հանուն իսկական ազատության և թույլ տալ նրան մասնակից դառնալ կյանքի բարիքներ բաշխելու գործին, եթե նա ազատագրված չէ հոգևոր ստրկությունից, այլ կերպ ասած՝ կրոնից»: Միաժամանակ նա ակնարկում է «երկնային բռնակալների անսահմանափակ իշխանության և երկրային բռնակալների միահեծանության» մասին:

Միայն խորապես հասկանալով ու ճանաչելով Հեսսին՝ մի մարդու, որը մեծ ազդեցություն ունեցավ Մարքսի, Էնգելսի, Բակունինի վրա, Առաջին Ինտերնացիոնալի երեք կարևորագույն հիմնասյուների վրա, մենք ի զորու կլինենք բացահայտել կոմունիզմի սատանայական արմատները: Հեսսի անձի մասին նման երկար շեղումը անհրաժեշտ է, քանզի, եթե նրան խորապես չճանաչենք, ուրեմն Մարքսն ընդհանրապես անհասկանալի կմնա, քանի որ նրա ջանքերով Մարքսը հանգեց սոցիալիստական գաղափարների: Նորից մեկ անգամ մեջբերենք Մարքսի խոսքերը. «Ես սովորեցնում եմ դիվային ուժով խճողված խառնաշփոթ բառեր: Ամեն մեկին տրված է հավատալու այն ճշմարտությանը, որն իր սրտին է հաճո»:

Իսկապես, այսպիսին է Մարքսի գրական ոճը: Ինչ վերաբերում է Հեսսի երկերին, սա ավելի անհասկանալի ու սատանայական շիլաշփոթ է, իսկական լաբիրինթոս, ուր դժվար է մտքի թելը չկորցնելը, բայց, որը պետք է անալիզի ենթարկել Մարքսի ո

սատանայության միջև հնարավոր կապը վեր հանելու համար:

Հեսսի առաջին գիրքը կոչվում է. «Մարդկության սրբազան պատմությունը»: Ինքը՝ Հեսսը, այն անվանել է «ճշմարտության սրբազան ոգուց ներշնչված աշխատություն»: Գիրքը լույս տեսնելու առաջին օրը Հեսսն այսպես է գրում իր օրագրում. «Աստծո Որդին ազատագրեց մարդուն սեփական ստրկացումից. Հեսսը, իր հերթին, ազատագրեց նրան քաղաքական ստրկացումից», հետո՝ «ես կանչված եմ վկայելու լույսի մասին, ինչպես Հովհաննես Մկրտիչը»:

Այս շրջանում Մարքսը սկզբունքորեն դեմ լինելով սոցիալիզմին՝ անձամբ դեռ չէր ճանաչում Հեսսին: Նա սկսում է Հեսսի մասին քննադատական գիրք գրել, բայց մեզ անծանոթ պատճառներով գիրքն այդպես էլ չի ավարտում: Հետո արդեն Մարքսը դառնում է Հեսսի հետևորդը:

Ինչպես տեսանք, Հեսսի իսկական նպատակը կրոնին ջախջախիչ հարված հասցնելն ու այն կործանելն էր:

«Ահեղ Դատաստան» գրքի նախաբանում Հեսսը չի կարողանում թաքցնել իր բավականությունն այն փաստից, որ գերմանացի փիլիսոփա Կանտն իբր թե «գլխատել է Հայր Եհովային ու ամբողջ Սուրբ Ընտանիքը»:

Հեսսն այստեղ ի չարս օգտագործելով մեծ փիլիսոփայի անունը՝ ներկայացնում է իր սեփական մտքերը: Բայց Կանտն ամենևին էլ նման դիտավորություններ չի ունեցել, ընդհակառակը, նա այսպես է գրել. «Ես պարտավոր եմ սահմանափակել ճանաչողության սահմանները, հավատիս ավելի մեծ տեղ հատկացնելու համար»:

Հեսսը հավաստիացնում է, որ հրեական, ինչպես և քրիստոնեական կրոնը մեռած է, որը, սակայն, չի խանգարում նրան «Հռոմ և Երուսաղեմ» գրքում հիշելու Սուրբ Գրքերի մասին և օգտագործելու այնպիսի կրոնական տերմիններ, ինչպես օրինակ «մեր հայրերի սրբազան լեզուն», «մեր պաշտամունքը», «աստվածային օրենք», «նախախնամության ուղիներ», «աստվածային կյանք» և այլն:

Պատճառն այն չէր, որ իր կյանքի տարբեր փուլերում Հեսսը փոխեց իր տեսակետը: Նույն ինքը՝ Հեսսը, գրելով իր կեղծսիոնիստական գիրքը, նշում է, որ ամենևին էլ չի հրաժարվում նախկին աթեիստական հայացքներից: Խոսքը գնում է կանխամտածված կերպով «սատանայական խառնաշփոթ» առաջացնելու մասին:

Հեսսը հրեա էր և սիոնիզմի նախակարապետը: Եվ հենց այն պատճառով, որ Հեսսը, Մարքսը և մյուսները հրեական ծագում ունեն, շատերը կարծում են, թե կոմունիզմի թակարդ էր լարված հրեաների ձեռքով: Նրանք ասես մոռացել են, որ Մարքսը լինելով իր ուսուցչի՝ Հեսսի ջանասեր աշակերտը, նույնպես հակահրեական գիրք է գրել: Այս «սիոնիստը», որ հուդայականությունը երկինք էր հասցնում «Դրամի էությունը» հոդվածում, այսպես է գրել. «Հրեաները, որ բնության պատմության մեջ և կենդանական աշխարհում եկել էին մարդուն զարգացնելու և նրան վայրի գազանի վերածելու առաքելությամբ, գերազանցապես հաջողացրին այդ դժվարին գործը: Հուդայականության և քրիստոնեության գաղտնիքն իր փայլուն արտահայտությունն է ստացել ժամանակակից հուդա-քրիստոնեության մեջ: Քրիստոսը սուրբ արյան, ինչպես և հրեա ազգի արյան վաղեմի պաշտամունքի առեղծվածն այսպիսով բացահայտված է՝ այն ընդամենը գիշատիչ գազանի գաղտնիքն է»:

Ոչինչ, իհարկե, եթե այս խոսքերի իմաստն անհասկանալի ձեզ, քանի որ դրանք խճողված են դիվային ուժով, սակայն խոսքերում պարփակված ատելությունն ակնառու է: Համապատասխանաբար, ըստ թեմայի, Հեսսը մեկընդմեջ հրեա է կամ հրեատյաց, նայած թե հոգին, որին Հեսսն անվանում է «սուրբ», ինչ կներշնչի ու կթելադրի նրան:

Հիտլերը շատ բան կարող էր սովորել Հեսսից, այն Հեսսից, որը հավատացնում էր Մարքսին, թե սոցիալական, դասակարգային պատկանելությունը որոշիչ գործոն է, բայց գրում էր նաև հակառակը. «Կյանքը՝ ռասայի գործունեության անմիջական արդյունքն է: Հասարակական, ինչպես և կրոնական հաստատությունները ու գաղափարները ռասայի եզակի ու առանձնահատուկ ստեղծագործություններն են: Ռասայական հարցն իր ցանցերը լայնորեն տարածել է ազատության և ազգային բոլոր հարցերի մեջ: Պատմությունը պայքար է դասակարգերի ու ռասաների միջև: Ռասայական պայքարն առաջնահերթ է, իսկ դասակարգայինը՝ երկրորդական» («Հռոմ և Երուսաղեմ»):

Հեսսի բազմաթիվ ու այդքան հակասական գաղափարները հաղթանակեցին: Ինչո՞ւ: «Ես սրախողխող կանեմ բոլոր այն քաղաքացիներին, ովքեր դիմադրությամբ կհակադրվեն պրոլետարիատի ջանքերին» (Lettre a Lassalle, Correspondance de Moses Hess La Haye, *1959, էջ 459*):

Մարքսը նույնն ասում է այլ խոսքերով. «Բռնությունը մանկաբարձուհի է, որն օգնում է նոր հասարակությանը ծնվել հնի արգանդից» («Կապիտալ»):

Մարքսի առաջին ուսուցիչը եղել է Հեգելը, որը ճանապարհ հարթել նաև Հեսսի համար: Մարքսը նույնպես օգտվել է Հեգելի հոգևոր չտեսարանից: Այս մեծագույն մտածողի համար քրիստոնեությունը ողորմելի բան էր «փառահեղ հելլենիզմի» համեմա

տությամբ:

«Դժբախտության պահին մխիթարվելու համար քրիստոնյաները այնքան շատ պատճառներ են կուտակել, որ վերջ ի վերջո մենք պիտի անչափ վշտանայինք շաբաթական մեկ անգամ հայր կամ մայր չկորցնելու համար: Մինչդեռ հույների համար դժբախտությունը դժբախտություն էր, և ցավն էլ՝ ցավ»:

Մինչև Հեգելը Գերմանիայում քրիստոնեությունը ծանակվել էր, բայց Հեգելն առաջինն էր, որ բացահայտորեն ծաղրի ենթարկեց Հիսուսին: Իհարկե, քրիստոնեության մասին նա գրել է նաև դրական գործեր, սակայն միշտ նույն «սատանայական խճողվածությամբ»:

Ինչով որ ապրում ու շնչում ենք, դրանով էլ կանք, գոյություն ունենք: Սատանայական մտքերով սնվող Մարքսն այլ բան չէր կարող ծնել, սատանայական ուսմունքից բացի:

«Դժոխք» կազմակերպությունը

Սովորաբար կոմունիստները հիմնում են գաղտնի կազմակերպություններ: Վերը շարադրված բոլոր փաստարկները խոսում են այն մասին, որ ամենայն հավանականությամբ կոմունիստական շարժումներն ինքնին վարագույր են, որոնց ետևում գաղտնախորհուրդ սատանայությունն է: Այսպես է թերևս բացատրվում այն, որ քաղաքական, տնտեսական, մշակութային և ռազմական զենքի բոլոր տեսակները՝ ուղղված կոմունիզմի մերկացմանը, առ այսօր անարդյունք են եղել: Սատանայությունը կարելի է կործանել ոչ թե նյութական, այլ հոգևոր միջոցներով: Այլապես ճգմելով, օրինակ, նացիզմի նման հզոր մի կազմակերպություն, միաժամանակ նպաստում ենք այդ նույն սատանայական ընտանիքի մեկ այլ կազմակերպության խոշոր հաղթանակին:

Նացիստական Գերմանիայի ներքին գործոց նախարար Հիմլերը կարծում էր, թե ինքը Հենրի I-ի վերամարմնավորումն է: Նա հնարավոր էր համարում նաև այն, որ ոգեհարցության զորեղ զենքը կարող է ծառայել նացիստական բանակի շահերին: Որոշ նացիստական առաջնորդներ տարված էին սև մոգությամբ:

Այն, ինչը այս բրոշյուրի առաջին հրատարակման ժամանակ, ընդամենը վարկած էր, հետագայում լրիվ հաստատվեց: Հենց իրենք՝ կոմունիստները, հաստատեցին այս վարկածը: Այս պատմությունն սկսվում է Նեչաևի դեպքից, դեպք, որը դրդեց Դոստոևսկուն գրելու իր «Դևեր» հայտնի վեպը:

Բակունինը, որը I ինտերնացիոնալը հիմնելիս Մարքսի օգնականն էր, բնորոշել է Նեչաևին իբրև «երիտասարդ, մոլեռանդ հեղափոխական»: Նեչաևը գրում է «Հեղափոխականի կատեխիզիսը», որը ուղեցույց էր լինելու «Ժողովրդական վրեժխնդրություն» կազմակերպության համար: Գիրքը լույս է տեսել 1870թ. Ահա թե ինչպես է ձևակերպում Նեչաևը այդ կազմակերպության նպատակը.

«Մեր գոյության իմաստը սոսկալի, կատարյալ, համընդհանուր, անողոք ավերն ու կործանումն է... Եկեք, ուրեմն, միանանք Ռուսաստանի իսկական և եզակի հեղափոխականների հանցագործ ու վայրի աշխարհին» (Catechisne du Revolutionnaire, էջ 194):

Նեչաևի խմբի առաջին զոհը դարձավ այդ խմբի հիմնադիր անդամներից մեկը՝ Իվանովը, որը համարձակվել էր քննադատել առաջնորդին: Քանզի քննադատության ոչ մի ձև հանդուրժել չէր: Նեչաևը ծրագրել էր մարդկությունը բաժանել երկու անհավասար մասի.

«Մարդկության 1/10 մասն իր անձնական ազատությունը և անսահմանափակ իրավունքները նվաճում է մնացած 9/10 մասի հաշվին: Այս վերջինները պարտավոր են մոռանալ իրենց անհատականությունը և նմանվել հոտի: Նրանք կներգրավվեն լրտեսական գործունեության մեջ: Հասարակության անդամներից ամեն մեկը պարտավորված կլինի հետևելու և մատնելու մյուսին: Ստրկության մեջ բոլորն էլ հավասարապես ստրուկներ են» (Նույնը, էջ 312):

Նեչաևը նշում է «Կատեխիզիս»-ում.

«Հեղափոխականը պետք է կարողանա թափանցել ամենուր, թե՛ վերնախավ, թե՛ ստորին խավեր... Եկեղեցի... դրականություն»:

Վերջինիս համախոհ Պյոտր Վերխովենսկին այսպես է մեկնաբանում. «Մենք անասելիորեն զորեղ ենք դարձել... Հանցագործություններն արդարացնող երդվյալներն ամբողջապես մեր կողմում են: Գերագույն դատախազները, վախենալով բավական նաչափ լիբերալ չերևալուց, նույնպես մեր կողմն են անցել: Ադ մինիստրատորներ, գրողներ... այս բանակը ստվար է, շատ ստվար... և ոչ մեկն էլ չգիտի, որ մասնակցում է մեր խաղին» (Նույնը, էջ 324):

Նման ծրագրերի հիմքի վրա կազմվում է մի կազմակերպություն, շատ տպավորիչ ու ազդեցիկ անունով՝ «Համաշխարհային Հեղափոխության Լիգա», որի կանոնադրության տակ ստորագրել են Նեչաևը և Բակունինը: Սկզբում լիգայի անդամներին կարելի էր մատների վրա հաշվել:

Հերցոգ Պյոտր Դոլգորուկովը 1862թ. հոկտեմբերի 31-ին գրում է. «Լոնդոնում ես հանդիպեցի Կելսիևին (վերոհիշյալ լիգայի անդամ): Անսահմանափակ մտքի տեր անձ է նա և շատ քաջարի: Նրա մեղմաբարո մարդու արտաքինի տակ թաքնված է իսկական մոլեռանդը: Բարեհամբույր աչքերով ինձ նայելով՝ նա քաղաքավարի ասաց. «Եթե պետք է սպանել ինչ-որ մեկին, ինչո՞ւ այդ չանել, մանավանդ, եթե դա օգուտ կբերի... Այն օրից ի վեր, ինչ Բակունինն Անգլիայում է, նա շարունակ այս կերպ է արտահայտվում»:

Մի քանի տարի անց, 1869թ. Ջենովայում Ալեքսանդր II ցարի դեմ կատարված մահափորձի կապակցությամբ արված հայտարարության մեջ Նեչաևն այսպես է արտահայտվում. «Այն, ինչ իրագործեց Կարակոզովը, պետք է դիտել իբրև նախերգանք: Այո, պարզապես նախերգանք: Բացենք մեր աչքերը՝ տեսնելու, որ շուտով դրամա է սկսվելու» (V. Burtsey, During 100 years, Londres, 1897թ., էջ 94):

Մեկ այլ թռուցիկի մեջ ասվում է.

«Մոտ, շատ մոտ է այն օրը, երբ ծածանելով ապագայի մեծ դրոշը, Կարմիր Դրոշը, հարձակում պիտի գործենք Կայսերական Պալատի վրա... Մեզ կառաջնորդի նույն մարտակոչը՝ «Ի զեն», և մենք առանց խղճահարության վերջ կտանք կայսերական համակարգին:

Անողոք եղեք... Սպանեք հասարակական վայրերում, եթե զազրելի խաբեբան համարձակվի երևալ այնտեղ: Սպանեք տներում և գյուղերում:

Լավ հիշեք, ով մեզ հետ չէ, մեր դեմ է: Ով դեմ է մեզ, մեր թշնամին է: Եվ մենք բոլոր միջոցները գործի դրած պետք է վերջ տանք մեր թշնամիներին» (Op. cit., Volodin, էջ 223):

1872թ. շատ պարզ ու սովորական «Կազմակերպություն» անունը կրող հեղափոխական մի խումբ հիմնադրվեց, որը խմբի կորիզը կազմող անդամների թաքուն որոշմամբ կրում էր նաև մի գաղտնի անուն, որից կարելի է ցնցվել՝ «Դժոխք»:

Չնայած այն բանին, որ այս կազմակերպությունը մեկ հարյուրամյակից ավելի հետևողական պայքար էր մղում իր նպատակների իրագործման համար, այնուամենայնիվ, նրա գոյությունը բացարձակապես անհայտ մնաց արտաքին աշխարհին:

Միայն 1965 թվականին, կազմավորումից 93 տարի անց, սովետական պատմաբանները լույս սփռեցին «Դժոխք»-ի՝ ռուսական կոմունիստական կուսակցության ավետաբերի արատավոր գործունեության վրա:

«Revolutionist Underground»-ում («Հեղափոխական ընդհատակ»-ում) Ե. Վիլենսկայան գրում է.

««Դժոխք»-ը գաղտնի կազմակերպության կենտրոնի իսկական անունն էր, որն ահաբեկչական գործողություններ էր կատարում ինքնակալական համակարգի դեմ, ինչպես նաև պատժիչ քաղաքականություն էր վարում հենց նույն կազմակերպության անդամների դեմ» (E. Vilenskaia, «Revolutionist Underground in Russia, Moscou, 1965 թ., 398):

Տեղեկանում ենք նաև, որ «Դժոխք»-ի անդամներից մեկը հանձն էր առել թունավորել հորը, որպեսզի ժառանգությունը հանձներ կուսակցությանը: Չեռնիշևսկին այս շարժման անդամներից էր: «Ես կկռվեմ հեղափոխության շարքերում, - հաստատում է նա, - ո՛չ տականքներից եմ վախենում, ո՛չ մահակներով զինված հարբեցողներից և ոչ էլ կոտորածներից: Մեզ համար միևնույն է, գուցե մենք երեք անգամ ավելի շատ արյուն թափենք, քան ֆրանսիացի հեղափոխականները: Ինչ արած, եթե պետք է, ուրեմն չարժե մտահոգվել մի քանի հարյուր հազար գյուղացիների կյանքի համար» (Tchernychevski, Complete Workes, Moscou, 1939 VOL.1, էջ 8):

Ահա այս դիվային կազմակերպության դրույթներից մի քանիսը .

«Խաբեբայությունը, մոլորեցնելը, լավագույն, եթե չասենք միակ եղանակն է մարդկանց հեղափոխության մղելու համար: Բավական է կոտորել մի քանի միլիոն մարդ, և սա կրակի վրա յուղ լցնելու ներգործություն է ունենում... հեղափոխության զսպանակների վրա: Մեր վերջնական նպատակը սոսկալի, կատարյալ, համընդհանուր և անողոք կործանումն է. մարդկությունը պետք է բաժանել 2 անհավասար մասի՝ 1/10-ն իր ազատությունն ու անսահմանափակ իրավունքները ձեռք է բերում մնացած 9/10-ի հաշվին: Վերջիններս, կորցնելով իրենց անհատականությունը, պետք է վերածվեն հոտի» (Русская мысль, 17 նոյեմբերի, 1983):

«Մենք չենք վախենա, եթե հարկ լինի հեղել երեք անգամ ավելի շատ արյուն, քան Յակոբինները 1790 թվին: Եթե մեր նպատակին հասնելու ճանապարհին խոչընդոտ լինեն հարյուր հազար սեփականատերեր, մենք նրանց կջարդենք մեծագույն սառնասրտությամբ» (op. cit., Volodin, էջ 155):

Իրականում զոհերի քանակը գերազանցեց այդ թիվը: «Հուշեր II Համաշխարհային պատերազմի օրերից» գրքում Ջերչիլը խոստովանում է, որ Ստալինի խոսքերով ՍՍՀՄ-ում գյուղատնտեսության կոլեկտիվացման տարիներին սպանվել է 10 մլն. մարդ:

Կարևորն այն է, որ կոմունիստները 100 տարի անց ընդունում են, որ իրենց շարժումը սկիզբ է առել «Դժոխք» անունը կրող կենտրոնական կորիզից: Հարց է առաջանում, ինչո՞ւ «Դժոխք» և

ոչ «Աղքատների բարօրության միություն» կամ «Մարդկություն»: Ինչո՞ւ շեշտը դնել հենց դժոխքի վրա:

Մեր օրերի կոմունիստներն ավելի չափավոր ու զուսպ են: Սակայն նախնական մկրտության անունն արդեն մերկացնում է մի նպատակ, որն այսպես կարելի է ձևակերպել՝ միավորել, հավաքագրել մարդկանց ու դամել նրանց հավիտենապես նզովված անարգանքի սյունին:

Օրգինֆորմ

Այսօր էլ դեռ գործում է սովետական ՊԱԿ-ի կողմից հիմնված հրեշավոր մի մարմին, որի նպատակն է կործանել եկեղեցիները համայն աշխարհում: Այն փորձում է նվազագույնի հասցնել եկեղեցու ատելությունն ընդդեմ կոմունիզմի և դաշնակիցներ ու համախոհներ է փնտրում հենց եկեղեցու ներսում:

Օգտագործելով կիրթ մարդկանց հեղինակավոր խոսքի ուժը՝ նրանք հավատացյալների մեծ ջոկատներ են ներգրավում Հեղափոխական բանակի շարքերում: Խոսքը նորից Օրգինֆորմի մասին է, որի գաղտնի բջիջները թափանցել են բոլոր երկրներն ու կրոնական հաստատությունները:

Վստահորեն կարելի է ասել, որ այս ընդարձակ կազմակերպության թիրախն են դարձել բոլոր հակակոմունիստական շարժումներն ու Երկաթե Վարագույրի հետևում գործող առաքելությունները: Պրոպագանդայի և պրովոկացիայի գործում մասնագիտացած գործակալությունները, սողոսկելով եկեղեցիները, նախապատրաստում են «նվիրյալների գաղափարական զինաթափումը»: Այս կազմակերպության առաջին տնօրեն Վասիլի Գորբելովը նախկինում ուղղափառ եկեղեցու քահանա էր: Հետագայում նա առաքյալից վերածվեց հուդայի:

Թեոդոսիայում է գտնվում Օրգինֆորմի դպրոցներից մեկը, ուր գործակալներ են պատրաստում լատինական երկրների եկեղեցիների համար: Երկրորդ դպրոցը Մոսկվայում զբաղվում է Հյուսիսային Ամերիկայի համար գործակալների պատրաստմամբ, Լատվիայում՝ Անգլիայի, Հոլանդիայի, Սկանդինավիայի համար են գործակալներ պատրաստում: Մուսուլմանական աշխարհ առաքվող անդամներին սովորեցնում են Ռումինիայի Կոնստանցա քաղաքում: Այս դպրոցները պատրաստում են սուտ պաստորներ, իմամներ, սուտ ռաբբիներ: Բոլորն էլ քաջատեղյակ են այդ երկրների կրոնների պատմությանը: Ոմանք էլ հաստատվում են եկեղեցիներում կամ միսիոներական կազմակերպություններում, որպես փախստականներ:

8
Լույսի հրեշտակները

Սատանայական պատարագ

Լոուրենս Պաստերը «Michelle Remembers» գրքում մեջ է բերում սատանայական հույժ գաղտնի պատարագների խոսքերը: Պատարագի ժամանակ հայտնվում է սատանան ու ասում.

Հրաշեկ բոցերից հայտնվելով խավարի թևին,
Երևում է մի մարդ, կես ողջ ու կես մեռած:
–Թափառում եմ ես երկրի վրա մութ գիշերներին միայն,
Իմ շնչից լույսն է մարում ու նվաղում ահա,
Ուղղվում եմ այնտեղ, ուր ահ ու սարսափ եմ տեսնում միայն
Եվ կգամ ու կգտնեմ բոլոր-բոլոր մոլորյալներին,
Իմն են բոլոր մութ ու սև ուժերը նենգ,
Ուրեմն հանգցրեմ լույսերը, թող իշխի խավարը մութ:

Ակներևորեն սատանայի անձը մարմնավորված է աղանդ[illegible] գլխավոր քրմի կերպարում: Իր ձեռքը վերցնելով «Սուրբ Գիրքը», նա այսպես է ասում.

Աչքն անզոր է տեսնել այս գրքի խորհուրդը մեծ,
Այնտեղ գրվածը մեռյալ գիր է սոսկ,
Որ աչքին հասու չէ, նույնիսկ ընկերոջ:
Գրքերն համայն աշխարհի ինձ են պատկանում,
Կարող եմ գրել գիշեր թե ցերեկ,
Բայց գրածը ձեր լույս չի պարգևի,
Կկլանեմ ամենը, կսևացնեմ ինչ որ կա,
Ու գրված բառերը ձեր սկզբից վերջ կայրվեն,
Կայրվի ամեն էջ ու նաև ամեն բառ,
Ու կթքեմ այս ամենի վրա, այն անհետ կկորչի,
Կրակը՝ լափելով կկլանի ամեն ինչ, ու աչքերը մարդկանց
այդ կտեսնեն հարկավ

Ոչ մի գիրք, ոչ մի բառ ի զորու չէ դիմադրել ինձ,
Բայց երբ ծերանան, կկարողանան ու կասեն այնժամ,

Որ այլ զորություն, բացի Դժոխքից, հայտնի չէ աշխարհին:

Մատթևոսը, Մարկոսն ու Հովհաննեսը,
Կայրվեն կրակի մեջ գեհենի, իսկ դուք, դուք ազատվել եք:
Խոսքերը նրանց կեղծիք են ու սուտ,
Կտեսնեն այդ զավակներն իմ,
Քանզի խոսքը նրանց կմարի կրակի լեզուների մեջ:
Միակ մնայունն ու հարատևը, որ այրում է ամեն ինչ,
Լույսն է, որով ողողված կհայտնվեմ ձեր առջև:

Կգամ ես նորից: Իսկ դուք սպասեք և նայեք:
Քանզի կգամ ես իշխելու աշխարհին,
Եվ մեռած ամեն բան իմ ձեռքով հարություն կառնի:
Ինձ դեն են նետել, բայց այրել դեռ կարող եմ:

Պտտվեք շրջան բռնած, իմ զավակներ, պտտվեք,
Եվ հպվեք այս աշխարհում ապրող ամեն էակի,
Գրկախառնվեցեք ում հետ որ կարող եք, ուզում եք,
Սակայն մի մոռացեք անասուն դարձնել նրանց, հիշեք:

Հետևում է հավատքի երգը՝

Ժամանակն է փոխել արևը կարմրի,
Ժամանակն է փոխել ողջը մեռածի:
Ո՛վ Խավարի Արքայազն...
Աջակցիր մեզ, նշելու հանդիսությունն այս,
Որ Գազանի գալուստն է խիստ երկար սպասված:

Կրկին հնչում է սատանայի խոսքը.

Ոչ շատ ուշ, քիչ էլ սպասիր, և կտեսնես դու,
Որ Սրբերի Սուրբ, Գերագույն ու Ամենակարող
Կդառնամ ես, միայն ու միայն ես:
Աշխարհին հայտնի երկրներում բոլոր:
Լարել եմ թակարդներն իմ, իմացի՛ր,
Սպասում եմ անհամբեր, որ խճճվի ամեն ինչ,
Հուզում է ինձ միայն ու միայն՝
Փող, քանակ ու ատելություն անսպառ,
Շատ են մարդիկ, անհամար, բայց առանձին վերցրած,
Փոքր է յուրաքանչյուրը նրանցից, գիտեմ,
Սակայն փողի ամենակարող զորությամբ,
Փոքրերն էլ, անկասկած, հզոր կդառնան:

Նիցշեն իր «Այսպես խոսեց Զրադաշտը» գրքի չորրորդ գլխում, տալիս է իր կողմից կազմված մեկ այլ տեքստ, որը պիտի հնչեր սև մոգության պատարագի ժամանակ: Այն համարյա չի տարբերվում վերևում շարադրվածից:

Ցավալի է, որ ներկայումս սև պատարագները ներթափանցել և մեծ դեր են խաղում շատ ամերիկացիների, հատկապես երիտասարդների կյանքում:

«Սաղայել, Սաղայել, նա է մեր Աստվածը միակ, նա է Աստվածը մեր»՝ այս սրբապիղծ խոսքերն են ծածկագրված շատ ռոք խմբերի երգերի տեքստերում: Այսպիսի ձայնասկավառակներ է ամեն օր լսում մեր երիտասարդությունը: Նրանցից շատերը չեն էլ գիտակցում, թե ինչ մութ ուժերի գերիշխանության տակ են գտնվում: Այս խոսքերն իրականում քողարկվում են «backward masking»*-ով («Հետադարձ քողարկում»): Ձայնասկավառակների որոշ հատվածներ հնչում են հակառակ շարադրանքով: Սակայն հիշենք, որ գիտակցականը մի բան է ընկալում, ենթագիտակցականը՝ մեկ այլ բան: Բազմաթիվ ռոք խմբեր յուրացրել են այս տեխնիկան: Լեթ Զեփփելին խմբի հայտնի* «Stairway to Heaven» *ձայնասկավառակը, որտեղ բառերի ընտրության հարցն առանձնապես չի մտահոգել խմբի անդամներին, պարունակում է հետևյալ «քողարկված ուղերձը».*

«Ես ուզում եմ երգել, քանի որ ապրում եմ սատանայի հետ»:

Մեր օրերում հազվադեպ կարելի է ականատես լինել հասարակական վայրերում տրվող սև մոգության պատարագների: Ֆուշեի կյանքի նկարագրության մեջ Ստեֆան Ցվայգը նկարագրում է մի այդպիսի արարողություն Լիոնում, Ֆրանսիական հեղափոխության տարիներին: Սպանել էին հեղափոխական Շալեին, և իբրև նրա պատարագ էր տրվում: Այդ օրը խորաններից պոկվեցին խաչերը, իսկ սրբազան զարդերը բռնագրավվեցին: Մարդկային անհամար ամբոխի մեջ երևում էր հեղափոխականի բարձր պահվող կիսանդրին: Ամբոխն իջնում էր դեպի շուկայի հրապարակը: Երեք կոնսուլներն իրենց ներկայությամբ հարգանքի տուրք էին մատուցում ակնառու հեղափոխականին՝ «Քրիստոս Տիրոջը, որը նահատակվել էր հանուն ժողովրդի»: Մասնակիցները կրում էին սկիհներ, սրբապատկերներ, սրբազան անոթներ: Ամբոխի ետևից, սմբակները դոփելով, շարժվում էր մի էշ, որի գլխին եպիսկոպոսի խույր էին դրել, իսկ պոչից կապել էին խաչ ու Սուրբ Գիրք: Պատարագի վերջում Ավետարանը աղոթագրքերի, սրբապատկերների ու խորհրդատետրերի հետ գցեցին կրակի մեջ: Աստվածանարգ ծառայության համար էշին ստիպեցին խմել սրբազան սկիհից, իսկ Շալեի կիսանդրին տեղավորեցին խորանում, Քրիստոսի ջարդուփշուր արված պատկերի

դիմաց: Ներկա գտնվող տերտերներից տասը նախկինում կաթոլիկներ էին եղել: Իրադարձությունն ավելի հանդիսավոր դարձնելու ու առհավետ հիշելու նպատակով սկսեցին հատուկ շքանշան թողարկել: Սև պատարագներն այս կերպ չեն ընթանում, բայց ոգին կատարելապես նույնն է:

«Յունի կոմունիստ» ռուսական թերթում մանրամասն նկարագրվում է այս կարգի մի պատարագ, որի ժամանակ հացն ու գինին՝ խառնված ողջ աքաղաղի աչքերից հավաքված արցունքի կաթիլների ու կղկղանքի հետ, այսպես ասած «գոյափոխվում են» Լյուցիֆերի մարմնի ու արյան: Պատարագը «մատուցվում» է հակառակ կարգով, ինչպես և սատանայական մյուս ծիսակատարությունները: Այնուհետև, Սադայելի ու նրան պաշտողների միջև դաշինք է կնքվում: Ահա դաշինքի պայմանները.

1. հրաժարվել քրիստոնեական դաստիարակությունից, անվանափոխվել.

2. նորից մկրտվել Սադայելի անունով, հրաժարվելով կնքահորից և կնքամորից, նրանց փոխարինել այլ խնամակալներով.

3. ընդունել սատանայի նվիրած հագուստը.

4. կախարդական շրջանի մեջ կանգնելով արտասանել հավատարմության երդումը.

5. նորընտրյալ անդամի անունը նշել «Հանգուցյալների գրքում», ի տարբերություն Քրիստոսի «Կյանքի Գրքի».

6. սեփական երեխաներին սատանային նվիրելու խոստում տալ, ինչպես նաև խոստանալ այնպիսի նվերներ ու արարքներ, որ նրա սրտին հաճո կլինեն.

7. հմայության ու կախարդանքի գաղտնիքները չբացելու ու չպատմելու երդում տալ.

8. ամեն ինչ անել քրիստոնեական կրոնը հեղինակազրկելու համար:

Ո՞րն էր կոմունիստների փութաջանության պատճառը, երբ սատանայագիտության հին ձեռագրերից կրթության և դաստիարակության հիմունքներ էին պեղում և ապա խորհուրդներ տալիս. «Ձեր մտքի ծարավը հագեցնող շատ նյութեր կան այստեղ»: Մի՞թե մարքսիզմը մարդկությանը միայն դա կարող էր առաջարկել:

Թերթը շարունակում է. «Սատանայական անդրաշխարհում, որ դրսից կատարելապես նման է մերին, մարդ արարածը պետք է չարությամբ պատասխանի այն ամենին, ինչը կյանքում հաջողություն է կոչվում»: Հետո մեծագույն անպատկառությամբ հաստատվում է հետևյալ սատանայական լոզունգը. «Սատանան մարդու թշնամին չէ, քանզի Նա Կյանքն է, Սերը և Լույսը»:

Հոդվածն ավարտվում է Ուսպենսկուց արված մեջբերումով, մի անձնավորություն, որի հետ մեծ հույսեր էին կապում կոմունիստները.

«Կան գաղափարներ, որոնք դիպչում են մեր կյանքի ամենաթաքուն ծալքերին: Եվ եթե դա պատահել է գեթ մեկ անգամ, ապա հետքերը թարմ կմնան... ու կթունավորեն ձեր ողջ կյանքը» («Юный коммунист», Москва, դեկտեմբեր, 1984):

Այս անպատկառ փաստաթղթերը ներկայացվում են շատ վայելուչ ձևով, ասես տեղեկություններ տալու պատրվակով, բայց իրական նպատակը՝ կործանարար, դիվային ներգործությունների մասին ընթերցողի մոտ անասելի հետաքրքրություն առաջացնելն է:

Սատանայի եկեղեցու ձեռնադրման երրորդ աստիճանի արարողության ժամանակ պետք է արտասանել հետևյալ երդումը. «Ամեն ինչում և ամեն ինչի համար կանեմ միայն այն, ինչ ինձ դուր է գալիս»: Սա նշանակում է հրաժարում Աստծո պատվիրանից. «Մի՛ հետևիր սրտիդ ու աչքերիդ ցանկությանը, նրանք քեզ մոլորության են տանում»:

Մարքսին հաջողվեց մարդու մեջ բորբոքել թաքուն ու ամենաստոր կրքերը՝ գրգռելով նախանձ՝ հարուստների և չարություն՝ ամբողջ աշխարհի հանդեպ:

«Զարն է շարժում պատմության անիվը», -գրում է Մարքսը: Եվ ինքն այս հարցում առաջնակարգ դեր խաղաց: Իսկապես, հեղափոխությունները սիրո հաղթանակ չի կարելի համարել, ընդհակառակը, այստեղ սպանելը սովորական երևույթ է: Արդեն բերեցինք օրինակներ, երբ ռուսական, չինական հեղափոխությունների ժամանակ կոմունիստները կոտորելով տասնյակ միլիոնավոր անմեղ մարդկանց, չեն կարողացել կանգ առնել, և ամեն ինչ ավարտվել է նրանով, որ սկսել են բիրտ ու անասնաբար սպանել մեկմեկու:

Մի՞թե ամեն ինչ թույլատրելի է

Սատանայապաշտությունը վաղեմի պատմություն ունի, ավելի հին, քան քրիստոնեությունը: Գուցե դա է ակնարկում Եսայի մարգարեն՝ ասելով. «Ամենքս ոչխարների պես մոլորվեցինք: Յուրաքանչյուրն իր ճանապարհին դարձավ» (Եսայի 53.6):

Իսկական հավատացյալի զգացումները բոլորովին այլ են: Որոշ ռաբբիներ երբեք չեն ասում «ես», քանի որ նրանց կարծիքով այդ դերանունը միայն Աստծուն է պատկանում, իսկ մարդու գործերն ու արարքները Նրա կամքի արտահայտությունն

են: Հակառակ դրան սատանայական կրոնում տղամարդը կամ կինը ձեռնադրման 7-րդ աստիճանում երդվում են, որ այսուհետև իրենք կառաջնորդվեն «Ամեն բան սուտ է, ամեն բան թույլատրելի է» սկզբունքով: Ես հանկարծ հիշեցի, որ Մարքսն իր աղջկա խնդրանքով հարցաթերթիկ լրացնելիս՝ «Ո՞րն է ձեր նախընտրելի սկզբունքը» հարցին պատասխանել է. «Կասկածի ենթարկել ամեն ինչ» (David Rjazanov, Karl Marx als Denker, Mensch und Revolutionar, Vienne, Verlag fur Literatur und Politik 1928 էջ 149,150)

Մի՞թե Մարքսը «Կոմունիստական Մանիֆեստ»-ում չի հայտարարում, որ իր վերջնական նպատակը ոչ միայն կրոնի բոլոր ձևերի, այլև բարոյականության փլուզումն է, որի դեպքում «թույլատրելի է ամեն ինչ»:

1968թ. իրադարձությունների ժամանակ ես ցնցվեցի՝ Փարիզի համալսարանում պատի վրա կարդալով մի հայտարարություն, որտեղ բացահայտվում էր յոթերորդ աստիճանի սատանայության գաղտնիքը: Այն պարզեցված էր հետևյալ սեղմ ձևակերպման աստիճան. «արգելվում է արգելելը»: Սա «ոչինչ ճշմարիտ չէ, ամեն ինչ թույլատրելի է» խոսքերի տրամաբանական արտահայտությունն է: Երիտասարդությանն, իհարկե, հասու չէր այս ձևակերպման ամբողջ անհեթեթությունը: Եվ, իսկապես, եթե «արգելվում է արգելելը», ուրեմն արգելվում է նաև «արգելվում է արգելելը»: Եվ եթե ամեն ինչ թույլատրելի է, ինչո՞ւ է ուրեմն, արգելվում արգելելը: Ուսանողների համար թույլատրելիի սահմաններից անցնելն ու ազատությունը նույն բանն են նշանակում: Սակայն մարքսիստներն ավելի հեռու են գնում: Նրանց համար «ամեն ինչ կարելի է» դրույթը համարժեք է ասելու, թե արգելվում է արգելել դաժան բռնակալական համակարգը, որի փայլուն օրինակն են Կարմիր Չինաստանը և ՍՍՀՄ-ը:

Դոստոևսկին արդեն ասել է. «Եթե Աստված չկա, ուրեմն սահման չկա նաև մեր բնազդներին»: Այս կարգի ազատության վերջին արտահայտությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ ատելությունը: Ով ազատ է այս կերպ, անպայմանորեն գթասրտությունը կհամարի մտքի թուլություն:

Էնգելսն իր հերթին ասում է. «Համամարդկային սերն անհեթեթություն է», իսկ անարխիստ մտածող Մաքս Սթեռները՝ Մարքսի մյուս ընկերը, «Միակը և իր յուրահատկությունը» գրքի հեղինակը, գրում է. «Առանց բացառության, ես լիազորված եմ անելու այն, ինչի ունակ եմ»: Կոմունիզմը սատանայական կոլեկտիվ մոլագարություն է: «Գուլագ արշիպելագ»-ում Սոլժենիցինը տալիս է մարդկանց կյանքի ու հոգու համար դրա աղետալի հետևանքների նկարագրությունը:

Առասպել Մարքսի մասին

Կրկնում եմ՝ իմ շարադրանքը հեռու է կատարյալ լինելուց: Սակայն բերված փաստերն էլ բավական են եզրակացնելու համար, որ կոմունիստների կողմից ստեղծված Մարքսի կերպարը առասպել է:

Նա ամենևին վհատված չէր պրոլետարիատի թշվառության փաստից, պրոլետարիատ, որի համար հեղափոխությունը իբր փրկության միակ ուղին կարող էր լինել, դեռ ավելին, նա չէր համակրում բանվորներին՝ տալով նրանց «հիմարներ», «ապուշներ», «էշեր», «սրիկաներ» և այլ գռեհիկ որակումներ:

Հատկապես նա չէր սիրում իր զինակից ընկերներին: Օրինակ, Ֆրեյլիգրատին նա «խոզ» էր անվանում, Լասալին՝ «նեգր հրեա», Բակունինին՝ «եռակի զրո»:

1848թ. հեղափոխական մարտիկներից մեկը՝ լեյտենանտ Զեխովը, որը գիշերներ էր լուսացնում Մարքսի հետ խմելով, խոստովանել է, որ Մարքսի անձնական փառասիրությունը կլանել էր նրա մեջ եղած բարու վերջին նշույլները:

Եվ, վերջապես, Մարքսն ատում էր մարդկությանը: Մազինին, որը շատ լավ էր ճանաչում Մարքսին, ասել է. «Նրան հատուկ է կործանման ոգին, և սիրտն էլ լցված է ավելի շուտ ատելությամբ, քան մարդկային սիրով» (Բոլոր մեջբերումները քաղված են Ֆրից Ռադացի «Karl Marx» գրքից, Allemagne, Maison Hoffman,1975):

Ասենք, որ ինքը՝ Մազինին կարբոնար էր: Այս կազմակերպությունը հիմնադրվել էր 1815թ. Մագելլայի կողմից, որը ֆրանկմասոն էր՝ ծնված Զենովայում: Նա համոզված էր, որ «իր վերջնական նպատակն այն է, ինչ որ Վոլտերն ու Ֆրանսիական հեղափոխությունը պիտի իրագործեին, այլ կերպ ասած՝ կաթոլիկության, ապա նաև քրիստոնեության կատարյալ ջախջախումը»: Կարբոնարների շարժումը ծնունդ առնելով Իտալիայում՝ տարածվեց նաև Եվրոպայում:

Մարքսին քննադատելով հանդերձ՝ Մազինին նրա մտերիմ ընկերն էր նաև: Հրեական հանրագիտարանի տվյալներով այս երկուսին էր հանձնարարված կազմել 1-ին Ինտերնացիոնալի սահմանադրությունն ու ներածականը: Այս փաստը վկայում է այն մասին, որ երկուսն էլ նույն սանրի կտավ էին, չնայած իրենց թույլ էին տալիս երբեմն միմյանց քննադատել:

Ինչքան ինձ հայտնի է, ժամանակակիցների վկայություններից և ոչ մեկը չի հակադրվում վերն ասվածին:

«Մարքսը՝ այն մարդը, որը սիրով էր լցված մարդկության հանդեպ» ձևակերպումը Մարքսի մահից հետո մշակված առաս-

պել է սոսկ:

Մարքսը սիրում էր կրկնել Վերթի խոսքերը. «Կյանքում ավելի հաճելի բան չկա, քան թշնամիներին խայթելը»: Եվ այս խոսքերից հետո, որ այնքան հարազատ էին նրա հոգուն, Մարքսը հաստատում է. «Մենք անողոք ենք և ցավակցություն չենք հանդուրժում: Կգա ժամանակը, և այնժամ մենք չենք խուսափի տեռորից»:

Նա ատում էր կրոնը ոչ նրա համար, որ այն խոչընդոտում էր մարդկային երջանկությանը, ընդհակառակը, նա տենչում էր ողորմելի վիճակի հասցնել մարդկությանը ոչ միայն ներկա պահին, այլև առհավետ: Այս էր նրա իղձը, իսկ իսկական նպատակը կրոնի ջախջախումն էր: Սոցիալիզմը, պրոլետարիատի շահերն ու մարդասիրությունը սոսկ պատրվակներ էին:

Դարվինի «Տեսակների ծագումը» կարդալուց հետո՝ գրիչը ձեռքն առնելով նա նամակ է գրում Լասալին, ուր չարախնդալով ասում է. «Բարեբախտաբար, գոնե բնական գիտությունները կործանարար հարված հասցրին Աստծուն» (Marx-Engels, Gesamt Ausgafe, Berlin, 1972, հ.30, էջ 578): Իրականում ի՞նչն էր ամենից շատ մտահոգում Մարքսին. թշվառության մեջ խարխափող պրոլետարիատի շահե՞րը: Եվ այս հարցում Դարվինի ուսմունքն ի՞նչ լավ կամ վատ դեր կարող էր խաղալ: Գերագույն նպատակը կրոնի ջախջախումը չէ՞ր արդյոք:

Իսկ աշխատավորների բարօրության մասին մտահոգությունը սոսկ շիրմա էր:

Ամենուր, որտեղ պրոլետարները չեն պայքարում իրենց սոցիալիստական գաղափարների իրագործման համար, մարքսիստները նենգորեն օգտագործում են ռասայական տարբերություններն ու սերունդների միջև եղած հակամարտությունը: Քանզի կարևոր է միայն մեկ բան՝ կրոնի կործանումը: Մարքսը հավատում էր դժոխքի գոյությանը, ուստի և նա ծրագրել էր մարդկությունն այնտեղ գլորել առհավետ:

Ռոբին Գոդֆելլո

Մարքսի ու սատանայապաշտական աղանդի միջև հնարավոր կապի մասին վկայող փաստաթղթերի քանակը գնալով ավելանում է: Օրինակ, ահա թե ինչ է գրում հենց ինքը՝ Մարքսը. «Միջին խավերին, արիստոկրատիային ու սակավաթիվ մարգարեներին մոլորեցնող նշանների մեջ պարզորոշ նշմարվում է մեր քաջարի ընկեր Ռոբին Գոդֆելլոյի ձեռագիրը՝ այն ծեր խլուրդի, որը մեծ արագությամբ ու փութաջանորեն հողը փորելով, կարող է հեղափոխություն ծնել» (Selected Works de Marx, հ. 2 էջ 248):

Այս հատվածը կարդալիս ընթերցողն ամենայն հավանականությամբ չի փորձի պարզել, թե ո՞վ է այդ Ռոբին Գոդֆելլոն՝ Մարքսի «քաջարի ընկերն» ու հեղափոխության պիոները:

Սակայն 16-րդ դարի ավետարանիչ Վիլյամ Թինդալը Ռոբին Գոդֆելլո է անվանում սատանային, իսկ «Ամառային գիշերվա երազ»-ում, Շեքսպիրը սատանային անվանում է «խարդախ, նենգ ոգի, որը գիշերով մոլորեցնում է թափառականներին և ծիծաղում նրանց դժբախտության վրա»:

Այսպիսով, հենց իր՝ Մարքսի, «կոմունիզմի հոր» խոստովանությամբ, սատանան իր մտերիմ ընկերն է և կոմունիստական հեղափոխության իսկական հեղինակը:

Լենինի շիրիմը

Հիսուսը «Հայտնություն» գրքում հանելուկային խոսքեր է հղում Փոքր Ասիայի Պերգամոն քաղաքի եկեղեցուն. «Գիտեմ քո գործերը, և թե որտեղ ես բնակվում, ուր որ սատանայի աթոռն է» (Հայտ 2.13): Իսկապես, Հին աշխարհում Պերգամոնը սատանայապաշտության կենտրոն էր համարվում:

Արդ, զբոսաշրջիկներին քաջ հայտնի ուղեցույցի՝ «Boedeker»-ի՝ Բեռլինին նվիրված հատորում հաղորդվում է, որ մինչև 1944 թվականը «Կղզու թանգարանում» էր գտնվում Պերգամոնից բերված զոհասեղանը, որը հայտնաբերել էին գերմանացի հնագետները: Եվ, իսկապես, այս զոհասեղանը Հիտլերի սատանայական իշխանության օրերին գտնվում էր նացիստական Բեռլինի սրտում (Արևելյան Բեռլին, Պերգամոնի թանգարան): Սակայն սատանայի աթոռի պատմությունն այսքանով չի ավարտվում: 1948թ. հունվարի 27-ի շվեդական «Svenska Dagbladet» թերթը տեղեկացնում է.

1. Բեռլինը գրավելուց հետո սովետական բանակը Գերմանիայից Մոսկվա տեղափոխեց սատանայի գահը: Այս պատկառազդու շինվածքն ունի 38մ երկարություն, 36մ լայնություն և 12մ բարձրություն: Զարմանալի է այն, որ այս գահը ոչ մի սովետական թանգարանում չի ցուցադրվում: Ուրեմն, ի՞նչ նպատակով էր այն բերվել Մոսկվա: Արդեն խոսվեց այն մասին, որ Սովետների հիերարխիական սիստեմի բարձրագույն աստիճաններ զբաղեցնող անձիք տարված էին սատանայապաշտությամբ և մասնակցում էին այդ ծեսերին: Գուցե նրանք յուրացրել էին զոհասեղանն անձնական գործածությա՞ն համար: Այս հարցերն անպատասխան են մնում: Սովորաբար արժեքավոր հնագիտա-

կան նյութերն անհետ չեն կորչում, այլ ընդհակառակը, դառնում են այս կամ այն թանգարանի պարծանքը:

2. Նշենք, որ ճարտարապետ Շչուսևը Լենինի դամբարանը նախագծելիս որպես մոդել ընտրել է Պերգամոնի զոհասեղանը: Դա 1924 թվականին էր: Հայտնի է, որ Շչուսևն այն ժամանակ ողջ անհրաժեշտ ինֆորմացիան ստացել է Ֆրեդերիկ Պոուլսենից, որը ճանաչված հեղինակություն էր հնագիտության ասպարեզում:

Հազարավոր ռուս քաղաքացիներ ամեն օր հերթ են կանգնում սատանայի սրբարան թափանցելու համար, ուր հանգչում է Լենինի զմռսած մարմինը: Աշխարհի տարբեր երկրներից ժամանած կառավարությունների անդամներ և հոգևորականներ, գալիս են Հարգանքի տուրք մատուցելու «Սովետների երկրի Սուրբ Առաջնորդին»: Չկա մի օր, որ ծաղկեպսակներ չդրվեն առաջնորդի շիրիմին, մինչդեռ նույն կարմիր հրապարակում գտնվող քրիստոնեական եկեղեցիները, վաղուց ի վեր անգործության մատնվելով՝ վերածվել են թանգարանների:

Սատանան ամենաուղղակի կերպով իշխում է ՍՍՀՄ-ում: Սադայելի տաճարը Պերգամոնում, բազմաթիվ նման զոհասեղաններից մեկն էր միայն: Այդ դեպքում ինչո՞ւ է Հիսուսը հենց այս մեկի մասին խոսում: Հավանաբար, ոչ միայն ժամանակին դրա ունեցած նշանակության համար: Այս խոսքերը մարգարեական իմաստ են ամփոփում իրենց մեջ՝ կանխատեսելով նացիզմն ու կոմունիզմն այն երկրներում, ուր ավելի ուշ դրանք ծնունդ էին առնելու և պաշտամունքի վերածվելու:

Ճակատագրի հեգնանքով Լենինի հոր շիրիմին վեր է խոյանում մի խաչ, որի վրա կարելի է կարդալ. «Քրիստոսի լույսը լուսավորում է ամեն ինչ», ինչպես նաև տողեր՝ քաղված Աստվածաշնչից:

9

Ո՞ւմ ենք ուզում ծառայել

Ի գործ

Պետք է խոստովանեմ, որ հայտնագործություններս գրի առնելիս ապավինել եմ բախտի քմահաճույքին: Քրիստոնյա մտավորականը, ի դեպ, ինչպես և ամեն մարդկային էակ, հաճախ կուլ է գնում փորձության որոգայթներին, ցանկանալով «mordicus» (ամեն գնով) ապացուցել որևէ կանխակալ միտք: Այդ դեպքում նա չի բավարարվում իր իմացած ճշմարտությունը ներկայացնելով, այլ միտում է ունենում և ջանում է չափազանցնել փաստերը՝ հօգուտ իր առաջարկած դրույթի:

Ինչ վերաբերում է ինձ, չեմ կարծում, որ անհերքելի ապացույցներ եմ բերել Մարքսի՝ սատանայապաշտների աղանդին պատկանելու մասին, բայց կարծում եմ, որ կան բավականաչափ փաստեր նման ենթադրություն անելու կամ, առնվազն, Մարքսի կյանքի և ուսմունքի վրա սատանայի որոշակի ազդեցությունը ցույց տալու համար, համենայն դեպս ենթադրելով, որ շղթան ամբողջական դարձնելուն պակասում են դեռ որոշ օղակներ, որոնք վարկածը կդարձնեին իրողություն:

Առաջինը ես եմ կրակը բացել, այժմ հերթը մյուսներինն է: Եվ այս առումով խնդրում և կոչ եմ անում շարունակել այս հետաքննությունը, նպատակ ունենալով մերկացնել մարքսիզմի և սատանայության կապը:

Եկեղեցուն կհաջողվի՞ արդյոք դիմակայել մարքսիզմին: Աշխարհիկ հակակոմունիստն իր տնօրինության տակ ունի տնտեսական սանկցիաների հզոր զենքը, քաղաքական ճնշման մեթոդները, ռազմական սպառնալիքները և պրոպագանդան՝ լայն ճակատով:

Եկեղեցին պարտավոր է քաջալերել այն բոլոր գործողությունները, որոնք բանականության զգաստ թելադրանքով կձեռնարկվեն Աստծո թշնամիների դեմ մղվող պայքարում: Սակայն եկեղեցին ունի իրեն հատուկ մի զենք ևս: Ուկրաինական կաթոլիկական եկեղեցու (որը գործում է բյուզանդական ծիսակարգով) մագիստրոս Անդրեյ Շեպտիցկին պահանջում է, որ Հռոմը թույլ տա կոմունիստների գործունեությունը խոչընդոտելու համար

օգտագործել նզովքի, անեծքի ու աղոթքների ուժը, այն կոմունիստների, «որոնց տիրապետությունը կարելի է բացատրել միայն զանգվածների վրա սատանայի ուժեղ ներգործությամբ»:

Հիսուսն իր հետևորդներին չի պատվիրել դժգոհել դևերից, այլ՝ քշել նրանց (Մատթ 10.8): Կարծում եմ, որ դա կարելի է հաջողությամբ անել, սակայն այս բնույթի աղոթքների ուսումնասիրությունը այլ խոսակցության նյութ է:

Արձագանքում են ընթերցողները

Գրքի առաջին հրատարակություններից հետո շատ հետաքրքիր արձագանքներ ստացանք: Շատերը գնահատեցին այս ուսումնասիրությունը՝ համարելով, որ Մարքսին ճանաչելու ճանապարհին մարդկությունը կատարել է ևս մեկ առաջընթաց քայլ: Ոմանք էլ մատնանշում էին հետազոտություններս խորացնելու և նոր փաստաթղթեր հայթայթելու շատ արժեքավոր ուղիներ:

Հոլանդական աստվածաբանական մի ամսագրի էջերում որոշ հեղինակներ փորձեցին նվազագույնի հասցնել այս հետազոտության կարևորությունը:

«Լավ, -գրում է հեղինակը, -շատ հնարավոր է, որ Մարքսը տարված է եղել սև մոգությամբ, վերջ ի վերջո, ի՞նչ փույթ: Իրականում, բոլոր մարդիկ էլ սխալական են և կարող են չար մտքեր ունենալ: Ուրեմն, եկեք մանրունքներից չկառչենք»:

Այո, իհարկե, բոլորն էլ սխալական են, բայց ոմանք հանցագործներ են, իսկ մյուսներն՝ արդարությունը պաշտպանող դատավորներ, որոնք առաջիններին կանգնեցնում են դատարանի առջև: Կոմունիզմի հանցագործություններն աննախադեպ ու անհամեմատելի են: Եղե՞լ է արդյոք որևէ այլ քաղաքական սիստեմ, որը պարծենար կեսդարյա ժամանակաշրջանում 60 մլն. անմեղ նահատակների սպանության փաստով: Ոչ: Սա միայն Սովետների երկրին է հատուկ (Սոլժենիցին, «Գուլագ արշիպելագ»): 60 մլն. մարդ սպանվել է այդ սիստեմի մեկ այլ երկրում՝ Կարմիր Չինաստանում: Գոյություն ունեն մեղքի և հանցագործության տարբեր աստիճաններ: Ժամանակակից կոմունիզմի հիմնադրի մեղքի խորությունը պայմանավորված է նրա վրա սատանայական ազդեցության խորությամբ:: Մարքսիզմի, ինչպես նաև նացիզմի հանցագործություններն անցնում են ընդունելի սահմաններից, քանզի այս չարագործությունները դիվային բնույթ ունեն:

Ստացել եմ նաև նամակներ սատանայի ջատագովներից, որոնք փորձում էին արդարացնել իրենց դավանանքը. «Իր դիրքերը պաշտպանելու համար սատանայապաշտությունը կարող է բավարարվել միայն Աստվածաշնչով, որպես ամենաակնառու փաստ: Հապա հիշեք Աստծո պատկերով ստեղծված հազարավոր մարդկանց կործանումը, մարդիկ, որոնք խորովվեցին կրակի ու ծծմբի մեջ (Սոդոմ և Գոմոր) և մեռան սոսկալի վերքերից: Ամբողջը պսակելու համար, հիշեք ջրհեղեղի ժամանակ երկրի բնակչության ջրախեղդ լինելու փաստը, երբ փրկվեց միայն Նոյի ընտանիքը: Այս ավերն ու կործանումն ուղարկված չե՞ն արդյոք Ձեր «դթասիրտ» Աստծո՝ Եհովայի կողմից: Այսքանն արդյոք բավակա՞ն չէ ասելու, որ Ձեր Աստվածն անխիղճ ու անողոք է:

Փորձեք այժմ հիշել, թե Աստվածաշնչում որևէ տեղ կարդացե՞լ եք արդյոք ինչ-որ մեկի մահվան մասին, որին պատճառ եղած լինի Սատանան: Ուրեմն՝ կեցցե՛ Նեռը»:

Այս մոլեռանդը, հավանաբար, լավ չի ուսումնասիրել Սուրբ Գիրքը: Իրականում մահն աշխարհ եկավ սատանայի խարդախության պատճառով, երբ նա Եվային նենգորեն մղեց մեղքի մոլորությանը: Եվ այս մոլագարը շատ շուտ է եզրակացություններ անում, քանի որ Աստված արարված աշխարհին դեռ իր վերջին խոսքը չի ասել:

Որևէ պատկեր սաղմնային վիճակում իրենից ներկայացնում է կետերի, գծերի ու գույների մի ահավոր և խառնիճաղանջ քաոս՝ զերծ որևէ կապակցությունից: Լեոնարդո դա Վինչիին պահանջվեց 20 տարի, որպեսզի ծնվեր «Ջոկոնդայի» պես գլուխգործոցը:

Աստծուն ևս ժամանակ է հարկավոր արարելու համար: Ցանկացած պահին նա կարող է ձև տալ ու արարել, ապա քանդել՝ մեկ այլ ձև ու կերպարանք ծնելու համար: Գեղեցկություն ու հոտ չունեցող սերմը պիտի նախ մեռնի, որպեսզի ծնունդ առնի հիասքանչ ու անուշահոտ ծաղիկը:

Բոժոժի մեջ սաղմնավորված հարսնյակն իր բույնը քանդելով՝ կվերափոխվի երփներանգ գույներով թիթեռի: Այդպես էլ Աստծո կամքով մարդը պիտի անցնի տառապանքի ու մահվան մաքրագործող բոցերի միջով: Երբ կբացվի մի նոր երկինք ու կլինի նոր երկիր, այնժամ էլ կհաղթանակի արդարությունը, և սա էլ հենց կլինի արարման գագաթնակետը: Այնժամ բոլոր նրանք, ովքեր հետևել էին սատանային, հավերժ կտառապեն զղջումից ու ափսոսանքից: Սատանային ընտրելն ամենածանր մեղքն է:

Հիսուսն անցավ խարազանման ու խաչվելու ծանր փորձության միջով: Ով իսկապես ուզում է Աստծուն ճանաչել, պիտի իր հայացքը Հիսուսի շիրիմից այն կողմ ուղղի՝ փորձելով թափանցել Փրկչի Հարության և Համբարձման խորհրդի մեջ: Եվ նրանք՝

Հիսուսի թշնամիները, դավելով Փրկչին ու նրան խաչի հանելով, իրենց տաճարին ու ժողովրդին միայն ավեր բերեցին և առհավետ զրկվեցին հոգու փրկության հույսից:

Հակառակորդը փորձում է ըմբռնել Աստծուն զուտ բանականությամբ: Բայց դա չի կարող անել ոչ մի կենդանի արարած: Պետք չէ Աստծուն հասկանալ, այլ պետք է ընդունել Նրան հավատով և սիրով:

Յամայկա կղզու մի բնակիչ ինձ հարց տվեց. «Ամերիկացիները, որոնք շահագործում են իմ երկիրը, արդյոք սատանայի ջատագովնե՞րը չեն, ինչպես և Մարքսը»: Ոչ, իհարկե: Ամերիկացիները մեղսական են, ինչպես և բոլոր մահկանացուները: Սա ճիշտ է: Բայց «սատանայի համախոհ» անունը տրվում է միայն նրանց, ովքեր կանխամտածված, գիտակցաբար պաշտում են սատանային: Արդ, եթե Ամերիկայում սատանայի սակավաթիվ համախոհներ կան, դեռ չի նշանակում, թե ազգն ամբողջությամբ սատանային Աստված է դարձրել:

Մոսկովյան գլխավոր աթեիստական ամսագրում՝ «Նաուկա ի ռելեգիա»-ում, տպագրվել է մի երկար հոդված, որի հեղինակներն են փիլիսոփաներ Բելովը և Շիլկինը: Ահա մի հատված. «Վուրմբրանդի խանդավառությունն ու եռանդը լավագույն ֆուտբոլիստների նախանձը կարող են շարժել: Մարքսիզմի նրա քննադատությունը նման է վայրի, չկապակցված ռռնոցի, որն ուղղակիորեն խաչակրաց արշավանքի կոչ է ընդդեմ սոցիալիզմի, որն իր խոսքերով «սատանայի սերունդ» է: Կրոնական գրականություն տարածելու համար նա նստել է Ռումինիայի բանտում՝ կառավարության դեմ խռովություն հրահրելու մեղադրանքով» (Նաուկա ի ռելեգիա, Մոսկվա, 1976 դեկտեմբեր):

Փորձենք մեկնաբանել այս հոդվածը: Նախ, «Կարլ Մարքս» գրքիս համար ինձ անվանել են «դիվական պաստոր», չնայած հեղինակները չեն բերում Մարքսի և սատանիզմի միջև կապի մասին իմ հիմնավորումները հերքող ոչ մի փաստ: Եվ երկրորդ, հեղինակները ողջունում են բոլոր քրիստոնյա գործիչներին՝ թեկուզ հակակոմունիստ, ովքեր թշնամական դիրք են բռնել իմ հանդեպ: Չնայած նրանք կոմունիզմի հակառակորդներ են, բայց տվյալ պահին, քանի որ դեմ են Վուրմբրանդին, որը կոմունիզմի համար մեկ թշնամին է, ուստի Մոսկվան արդարացնում է այդ անձանց:

Բացի դրանից, ես նամակներ եմ ստացել նաև մարքսիստներից: Դրանցից ամենաուշագրավը Նիգերիայից ստացված նամակն է, որի հեղինակը 20 տարի շարունակ արհմիության ղեկավար լինելուց հետո, կարդալով իմ գիրքը հասկացել է, որ սատանան մոլորեցրել է իրեն: Նա դարձել է քրիստոնյա:

10
Մա՞րքսը, թե՞ Քրիստոսը

Բոլոր մարքսիստներին

Այժմ ինձ թույլ եմ տալիս դիմել շարքային մարքսիստներին՝ նրանց դատին հանձնելով իմ նկատառումներն ու դիտողությունները:

Այսօր մարքսիստներից շատերն անմիջականորեն չեն գտնվում այն ոգու ազդեցության տակ, որն իշխում էր Հեսսին, Մարքսին ու Էնգելսին: Այս մարքսիստներն իսկապես սիրում են մարդկությունը և թյուրիմացաբար կարծում են, թե գտնվում են մարդկության բարօրության ու երջանիկ ապագայի համար պայքարող բանակի շարքերում: Նրանք ոչ մի ցանկություն ու մտադրություն չունեն խաղալիք դառնալ սատանայի աղանդավորների ձեռքին:

Դժբախտաբար, ինչ վերաբերվում է սատանայական մարքսիզմին, ապա նրան հատուկ է մատերիալիստական փիլիսոփայությունը, որն իր հետևորդներին կուրացնելով, չի թողնում հաղորդակցվել ու տեսնել հոգևոր իրականության աշխարհը: Մինչդեռ մատերիան չէ ամեն ինչ որոշողը: Գոյություն ունի բանականության, ճշմարտության, գեղեցկության ու արդարության վեհ գաղափարների մի այլ աշխարհ... կա նաև չար ոգու աշխարհ, որի գլուխ կանգնած է սատանան: Իր ամբարտավանության համար նա վտարվեց երկնքից, սակայն իր հետ տարավ նաև շատ հրեշտակների, հետո նաև՝ առաջին մարդկային զույգին: Վտարվելուց հետո սատանան շարունակում է մեղսագործությունների անվերջանալի շարանը՝ դիմելով ամեն տեսակ խորամանկության: Այսպիսով, մենք տեսնում ենք, թե Աստծո փառահեղ արարչագործությունն ինչպես է տրորվում ու կործանվում համաշխարհային պատերազմներից, հեղափոխություններից, արյունահեղ հակահեղափոխությունից, բռնակալությունից, մարդու շահագործումից, ռասայական հակասություններից, կեղծ կրոններից, ագնոստիցիզմից, աթեիզմից, հանցագործություններից ու խարդախություններից, անհավատարիմ ընկերությունից ու սիրո դավաճանությունից, ամուսնալուծություններից, անառակ որդիներից: Մարդկությունը մերժեց Աստծուն: Իսկ ինչո՞վ փոխարի-

նեց Նրան: Արդյո՞ք ինչ-որ կատարյալ բանով:

Մարդը ձգտում է և պետք է հավատա ինչ-որ բանի: Եթե նա չի հավատում Հիսուսին, ուրեմն պիտի պաշտի սատանային և պիտի հալածի բոլոր նրանց, ովքեր չեն պաշտում իր «աստծուն»:

Կուսակցության շատ քիչ թվով ղեկավարներ ու առաջնորդներ են գիտակցաբար հարել սատանայի կրոնին: Բայց կա նաև մյուս ձևը՝ տարերայինը: Կարելի է խաղալիք դառնալ Սադայելի ձեռքին և չիմանալ այդ պաշտամունքի գոյության մասին: Այսպիսով, նա, ով ատում է Քրիստոսին և ժխտում է Աստծո մասին միտքն անգամ, ով ապրում է մատերիայի, այսինքն՝ անկենդան իրերի կյանքով՝ արհամարհելով բարոյական ու կրոնական սկզբունքները, նա տարերայնորեն դառնում է հակաքրիստոնյա, ինչպես նաև նրանք, ովքեր զբաղվում են անդրաշխարհային, գաղտնախորհուրդ գիտելիքներով:

Արևմտյան Գերմանիայի Ֆրանկֆուրտ քաղաքում կիրակի օրերին մարդիկ հաճախում են ոգեկոչության սեանսների, ուր, իրենց ասելով, փորձում են կանչել մեռյալների հոգիներին: Նրանք այս սեանսները գերադասում են ժամասացությունից: Դյուսելդորֆում և Մյունխենում, ինչպես նաև Ֆրանսիայում, Անգլիայում, Միացյալ Նահանգներում և այլ երկրներում գոյություն ունեն սատանայապաշտների համայնքներ: Մեծ Բրիտանիայի 35 հազար բնակիչներ զբաղվում են կախարդությամբ: Ամերիկայի համալսարաններում և նույնիսկ միջնակարգ դպրոցներում առաջարկվում են աստղագուշակության, սև մոգության դասընթացներ: Ֆրանսիայում, ամեն տարի տրվում է սև մոգության 40 հազար պատարագ:

Մարդ արարածը կարողացավ դավաճանել Աստծուն, բայց Աստված երբեք չի լքի Իր ստեղծած մարդուն: Նա մեզ ուղարկեց Իր Միածին Որդուն՝ Հիսուսին: Սիրո և կարեկցանքի մարմնացյալ կերպար էր Հիսուսը, Որն ապրեց հրեա աղքատ ու խեղճ երեխայի, համեստ հյուսնի և վերջապես բարեպաշտ ու սրբակյաց ուսուցչի կյանքով: Հայտնի է, որ ոտնակոխ արված մեկը չի կարող միայնակ ոտքի կանգնել, առավել ևս առանց օգնության չի կարող փրկվել խեղդվողը: Ահա թե ինչու Հիսուսը, Որին հասկանալի էր մեր էության հակասություններն ու ներքին բախումները, Իր վրա վերցրեց ու կրեց բոլորի մեղքերը. նաև Մարքսի ու նրա հետևորդների մեղքերը՝ տառապելով ու պատժվելով մեր մեղքերի համար: Նա քավեց մեր մեղքերը, կրեց ամենածանր ստորացումներն ու հանվեց Գողգոթայի խաչին: Նա խոստացավ. «Ով կհավատա Ինձ, թողություն կստանա և կգնա երկնային արքայություն»:

Նույնիսկ ամենամոլի մարքսիստները կարող են հոգու փրկության հույսն ունենալ: Հետաքրքիր է հիշատակել այն հանգամանքը, որ ՍՍՀՄ-ից Նոբելյան մրցանակի երկու դափնեկիրներ՝ Պաստեռնակը և Սոլժենիցինը, որոնք մերկացրել են մարքսիզմի ծնած հրեշավոր ոճիրները, եղել են քրիստոնեական հավատքի պանծալի նվիրյալներ:

Սվետլանա Ալիլուևան՝ Ստալինի՝ միլիոնավոր մարդկանց խոշտանգած հրեշի աղջիկը, նույնպես դարձավ քրիստոնյա:

Զմոռանանք, որ Մարքսի վաղուց փայփայած իղձն ու նպատակն էր անձնապես իջնել գեհենի անդունդն, ու իր հետ տանել նաև մարդկությանը: Ի զորու կլինե՞նք չեղվել կործանման տանող ուղուց և հետևել Քրիստոսին, որը մեզ կառաջնորդի դեպի լույսի, իմաստության ու սիրո թագավորություն, դեպի երկինք ու անսահման փառքի անծայր եզերքներ:

Անանցանելի անդունդ

Հիրավի, անմտություն է համեմատել Հիսուսին Մարքսի հետ: Հիսուսը հիմնավորապես մի այլ ոլորտի է պատկանում: Մարքսը մահկանացու էր և, ամենայն հավանականությամբ, Զարի կողմնակից: Հիսուսն Աստված էր, Որն ընդառաջ գնաց Իր մահվանը, և դարձավ մարդ՝ հանուն մարդկության փրկության:

Մարքսը երկրային դրախտ էր խոստանում, բայց երբ սովետների երկիրը փորձեց ի կատար ածել Մարքսի ուսմունքը, ստացվեց ամենաիսկական դժոխք:

Հիսուսի թագավորությունը երկրային չէ: Այն սիրո, արդարության և ճշմարտության արքայությունն է: «Եկեք ինձ մոտ, բոլոր հոգնածներդ ու բեռնավորվածներդ, և ես ձեզ կհանգստացնեմ» (Մատթ 11.28):

Հավատանք Նրան և այնժամ կունենանք հավիտենական կյանք՝ դրախտում:

Հետևաբար, մարքսիզմի և քրիստոնեության, ինչպես նաև Աստծո և սատանայի միջև փոխզիջման մասին խոսք անգամ չի կարող լինել: Հիսուսը եկավ, որպեսզի քանդի չարի գործերը (Ա Հովհ 3.8): Քրիստոնյաները Նրան հետևելով, պիտի ջանան կործանել մարքսիզմը, սակայն անհատապես ամեն մի մարքսիստի հանդեպ տածելով եղբայրական սիրո զգացումներ և փորձելով նրան բերել քրիստոնեական հավատի:

Ոմանք կարծում են, թե հնարավոր է լինել քրիստոնյա-մարքսիստ: Նրանք կամ սխալվում են, կամ նպատակ ունեն դիտավորյալ մոլորության մեջ գցել մարդկանց:

Սա անհնարին է, ինչպես և այն, որ քրիստոնյան միաժամանակ կարող է և սատանայապաշտ լինել: Ժամանակի հետ չարի կողմնակիցների գործունեության եղանակները չեն փոխվել: Փիլիսոփա Էռնս Բլոխն իր «Աթեիզմը քրիստոնեության մեջ» գրքում գրում է.

«Օձը, գայթակղեցնելով առաջին մարդկային զույգին, մարդկության փրկության համար ուղի հարթեց: Աստծո դեմ ըմբոստանալով մարդն սկսում է իրեն համարել աստված: Տերտերներն՝ իրենց մեքենայություններով, ու բարիքներին տնօրինողները հալածել են այս ճշմարտությունը: Ադամի ու Եվայի առաջին՝ նախագո մեղքն այն էր, որ չցանկացան նմանվել Աստծուն: Մարդը պետք է իշխի: Հեղափոխության աստվածաբանությունը պարտադրում է մարդուն այդ իշխանությունը խլել Աստծո ձեռքից: Աշխարհը պիտի վերափոխվի մարդու նմանությամբ: Դրախտ ամենևին էլ չկա ու չի լինի: Հավատալ ու պաշտել իր եսին, նշանակում է ընկնել մեղքի գիրկը, և այս անկումն է, որ շտկվելու կարիք ունի»:

Քրիստոնեության և կոմունիզմի միջև ընկած է խոր անդունդ: Կամուրջ կարելի է գցել միայն այն պայմանով, որ մարքսիստները լքեն սատանայի ազդեցությամբ գործող իրենց ուսուցիչներին, զոլյան գործած մեղքերի համար և գնան Հիսուսի հետևից:

Մարքսիստները փորձում են լուծել սոցիալական և քաղաքական հարցեր, որոնց լուծումը նրանք պիտի փնտրեն մարքսիստական սկզբունքներից անդին: Ի դեպ, հենց Մարքսի համար սոցիալիզմը սոսկ պատրվակ էր, իսկ իսկական նպատակը՝ մարդկությանն առհավետ ու վերջնականապես կործանելու սատանայական պլանի իրագործումը: Այնինչ Քրիստոսը կոչ է մարդկանց հավիտենական երջանկությանը:

Այս երկու ճակատների միջև ծավալված պայքարում «մեր պատերազմը մարմնի և արյան դեմ չէ, այլ իշխանությունների դեմ, պետությունների դեմ՝ այս աշխարհի խավար աշխարհակալների դեմ. ենթաերկնային չար ոգիների դեմ» (Եփես 6.12):

Մեզնից ամեն մեկը պարտավոր է ընտրություն կատարել ոչ թե առհասարակ Բարու և Չարի միջև, այլ շատ կոնկրետ՝ Աստծուն և սատանայի միջև: Մարքսը հավատում էր Աստծուն և միաժամանակ ատում Նրան: Ավելի շուտ հավատում և պաշտում էր սատանային, նույնիսկ հասուն տարիքում...

Զուսպ և համեստ մարքսիստը կամ մարքսիստական գաղափարներին հավանություն տվող մեկը պետք է զգուշանա Մարքսի ուսմունքով տարվելուց, քանի որ այն տանում է հոգու մոլորության: Հեռու կենանք բուրժուա, խավարի մունետիկ Մարքսից

և նրա գաղափարակից, շահագործող ու գործարանատեր Էնգելսից: Ավելի լավ է ընտրել Լույսի Թագավորությունը: Եկեք ուրեմն, մեր հավատն ուղղենք Մարդկության Ամենամեծ Բարերար Հիսուսին՝ Հիսուս Աշխատավորին, Հյուսնին, Փրկչին և արարված աշխարհի ու մեր Տիրոջը:

«Պրոլետարներ բոլոր երկրների, ներեցե՛ք»

Իրողություն է, որ դիվային մարքսիզմը սոսկալի ավերածություններ է գործել աշխարհում, իսկ այն, որ թափանցել է հոգևոր ոլորտներ և փորձության մեջ գցել Եկեղեցու պաշտոնական շրջանների բարձրաստիճան շատ անձանց, անհնարին է թվում, մինչդեռ սա ևս իրողություն է:

1949 թ. սովետական մի գեներալ իր զարմանքն արտահայտելով Հայր Վերենֆրիեդին, որ կաթոլիկական եկեղեցու սպասավոր էր, այսպես է ասել. «Մենք սատանայի ընտրախավի ներկայացուցիչներն ենք, իսկ դուք արդյո՞ք Աստծո ընտրյալների դասին եք պատկանում»:

Այս մասին մենք լռել չենք կարող: Գրքում շարադրվածից պարզ դարձավ, թե մինչև ուր կարող են հասնել սատանայապաշտները: Այդ դեպքում չարի սպասավոր ձեռնադրվողների փաստը թող օգնի ու առաջնորդի մեզ՝ լրացնելու Աստծո ընտրյալների շարքերը:

1982թ. Լեհաստանում խռովության անհանգիստ օրերին պատերին կարելի էր տեսնել կծու հեգնանքով գրված հետևյալ բառերը. «Պրոլետարներ բոլոր երկրների, ներեցե՛ք ինձ,–ասել է Մարքսը», հանրահայտ «Պրոլետարնե՛ր բոլոր երկրների, միացե՛ք» լոզունգի փոխարեն: Խորապես ցնցվեցի կարդալով այս խոսքերը: Ասում են, թե Էնգելսը մահից առաջ զղջացել է: Նույնը ասվե՞լ է արդյոք Մարքսի մասին: 1983թ. շատերը հարգանքով նշեցին Մարքսի մահվան 100-ամյակը: Իսկ ինքը՝ Մարքսը, գուցե նույն պահին նշում էր իր տարեդարձը դժոխքում: Գիրքը գրելիս, խոստովանում եմ, շատ անքուն գիշերներ եմ լուսացրել՝ խորհելով այն մասին, թե ինչ հոգեկան ապրումների մեջ կարող էր լինել Մարքսը՝ տեսնելով իր սխալի պատճառով հեղված արյունն ու արցունքները:

Հիսուսն իր առակներից մեկում պատմում է մի հարուստ մարդու մասին, որ գեհենի մշտնջենական կրակի բոցերում տանջահար լինելով՝ մի անասելի ցանկություն էր ունեցել. հեռու պահել իր մերձավորներին փորձությունից, որպեսզի երբևէ նրանք էլ միանալով իրեն, չկրեին այդ սոսկալի տառապանքները:

Մարքսն արդյոք ցանկություն չի՞ ունեցել զգուշացնելու ու հեռու պահելու իր հետնորդներին այն ուղուց, որը նրանց անվերապահորեն կործանման էր տանելու:

Ճի՞շտ է արդյոք այն, ինչ գրված էր լեհական քաղաքի պատերին. «Պրոլետարնե՛ր բոլոր երկրների , ներեցե՛ք ինձ»: Գուցե Մարքսը գեհենի կրակի բոցերից տանջահար գոչում է. «Խնդրում եմ, ուղարկիր այնտեղ որևէ մեկին, քանզի շատ ընկերներ ունեմ: Թող պատմի իր տեսածն այստեղ՝ դժոխքում, ու թող երկնչեն նրանք ու սարսափեն՝ խուսափելու համար տանջանքի այս աշխարհն ընկնելուց»:

Ռուս կոմունիստներն ընդունեցին իրենց սխալը՝ վարկաբեկելով ժողովրդի կուռք Ստալինին: Հարց է ծագում. ո՞րն էր այսօրինակ հեղաշրջման պատճառը, քանի որ կոմունիստներին որևէ օգուտ չէր կարող բերել Ստալինի դիակը դամբարանից հանելը: Չինաստանի կոմունիստները նույնպես, վարկաբեկելով Մաոին և ձերբակալելով նրա կնոջը՝ խարխլեցին վերջինիս ուսմունքի հիմքերը:

Անկասկած, այս երկրների կոմունիստական առաջնորդներն իրենց հոգու խորքում հասկացել էին, թե որն էր իրենց նախկին կուռքերի իսկական նպատակը: Եվ դժբախտաբար, շատ ուշ զղջացին իրենց արարքների ու ավանդածի համար:

Ինչ վերաբերում է ինձ, սիրում եմ բոլոր մարդկանց անխտիր, բոլորին՝ ներառյալ Մարքսի ու սատանայի հետնորդներին: Եթե Մարքսը, Էնգելսը, Լենինն այսօր կենդանի լիներին, իմ ամենակրքոտ ցանկությունը կլիներ նրանց բերել Քրիստոսի հավատքին, քանզի Նա է Ամենակարողն ու Միակը, որ կարող է բուժել մարդկային ցավերն ու թողություն տալ նրա գործած մեղքերին: Նույնպիսի ցանկությամբ էլ դիմում եմ քեզ, հարգելի՛ ընթերցող, որ ինձ հետ քայլեցիր այս գրքի սարսափազդու էջերի քարքարոտ ճամփաներով: Խնդրում եմ հիմա մտածիր քո հավատքի ընտրության մասին, քանի դեռ շատ ուշ չէ: Հեռու վանիր քեզնից սատանային ու իր հրոսակներին: Արդեն պատմության դասերից գիտենք, որ սատանան երբեք հավատարիմ չի եղել իր խոստումների մեջ: Ուրեմն ընտրեցեք կյանքի, սիրո, հույսի լուսաշող երկինքը:

«Պրոլետարներ և մարքսիստներ բոլոր երկրների, միացե՛ք և համախմբվեցե՛ք Հիսուսի շուրջը»:

ՀԱՎԵԼՎԱԾ

Կարո՞ղ է լինել քրիստոնեական կոմունիզմ

«Քրիստոնեական» մարքսիստական աստվածաբանությունը

Կաթոլիկ եկեղեցու քահանա Էռնեստո Կարդենալը կոմունիստական գաղափարների կողմնակից է և Նիկարագուայի կոմունիստական կառավարության անդամ: Միաժամանակ «Ազատագրման աստվածաբանության» ամենաեռանդուն կողմնակիցներից մեկն է, մի ուղղություն, որը մեծ համակրանք է վայելում կաթոլիկների և բողոքականների շրջանում և փորձում է քրիստոնեությունը մերձեցնել կոմունիզմին: Ներկայացնում ենք հատվածներ նրա «N-ժամին» գրքից.

«Կոմունիստական գաղափարների լիակատար հաղթանակ աշխարհում՝ ահա թե որն է Աստծո Արքայությունը: Կարծում եմ, որ կոմունիզմը և Արքայությունը նույն բանն են: Ավետարանի օգնությամբ ես հեղաշրջվեցի... ոչ թե Մարքսի, այլ Հիսուսի օգնությամբ: Ավետարանը կարդալուց հետո ես դարձա մարքսիստ... Ես կոչված եմ լինելու պոետ և մարգարե...»:

«Ֆիդել Կաստրոն արդեն ապացուցեց, որ լինել լավ հեղափոխական, նշանակում է լինել պարկեշտ հոգևորական: Զմոռանանք, որ իսկական քրիստոնյաներն առաջին քրիստոնյաներն էին: Բայց չէ՞ որ նրանք կործանման կողմնակից հեղափոխականներ էին...»:

«Մարքսիզմը քրիստոնեության ծնունդ է, և առանց քրիստոնեության մարքսիզմ չէր լինի: Մարքսը ուտոպիստ կհամարվեր առանց Հին Կտակարանի մարգարեների: Արտադրության սիստեմը փոխելով՝ մենք ծնունդ կտանք ավետարանական նոր տիպի մարդուն...»:

«Մարքսը և Աստվածաշունչը» գրքի հեղինակ, մեքսիկացի ճիզվիտ Խոսե Միրանդան հայտարարում է, որ 10 պատվիրանները մարքսիստական են, նույնիսկ հենց առաջինը՝ «Սիրի՛ր Աստծուն»: Նրա կարծիքով սիրել Եհովային, ամենից առաջ նշանակում է սիրել արդարությունը... «Եվ եթե եկեղեցին երբևէ այլ բան է քարոզել, ուրեմն սարսափելի է...»:

«Կարծում եմ, որ կոմունիստները ևս Աստծո ծառաներն են: Գտնում եմ, որ իսկական Եկեղեցին ընդգրկում է շատ մարդկանց,

որոնք չեն համարվում քրիստոնյաներ կամ էլ նույնիսկ իրենց աթեիստներ են համարում: Նրանցից շատերն ավելի պինդ համոզմունքի ու հավատքի տեր են, քան, օրինակ, Ռումինիայի Կուրիայի ընտրախավ համարվող շատ անձինք»:

«Կոնստանտինոս կայսրից հետո Եկեղեցին միշտ համերաշխ է գործել Պետության հետ: Եթե մարքսիստների և քրիստոնյաների մտքով անցներ փոխադարձաբար կարդալ հոգևոր և մարքսիստական գրականություն, ապա այս երկու հակամարտ բանակների միջև կոնֆլիկտներ այլևս չէին լինի: Կարծում եմ, որ հոգևորական-բանվորների և հեղափոխականների այն մասը, որոնք Եկեղեցու ամենաառաջադիմական ներկայացուցիչներն են, Սուրբ Հոգու անմիջական ներգործությամբ են ապրում ու գործում»:

«Ես գտնում եմ, որ աստվածաշնչյան Աստվածը միաժամանակ մարքսիզմ-լենինիզմի Աստվածն է: Հովհաննես Առաքյալն ասում է. «Աստված՝ Նրան ոչ ոք չի տեսել»: Արդ, այն, ինչ ասում են մարքսիստները, շատ նման է Հովհաննես Առաքյալի խոսքերին. «Ոչ ոք չի տեսել Աստծուն»:

Մեկ ուրիշը մեջ է բերում Կարդենալին այս կերպ. «Նախ և առաջ ես հեղափոխական եմ և որպես այդպիսին, պայքարում եմ սոցիալիստական երկրի կառուցման համար՝ հանձինս պրոլետարիատի դիկտատուրայի, ուր ամենայն հավանականությամբ չեն լինի թույլեր ու անզորներ հայրենի երկրի թշնամիների դեմ մղվող պայքարում, եթե նույնիսկ այդ նպատակի ճանապարհին հարկ լինի սպանել» (Bulletin de Aide a f Eglise en Detresse, avril-ijun *1980):*

Ինքնըստինքյան հասկանալի է, որ նման գաղափարների տեր մարդը չի վարանի ազատության տիպար համարել Կուբայի ռեժիմը:

«Ազատագրման աստվածաբանությունն» անջատ երևույթ չէ: Այն մարքսիզմն ու քրիստոնեությունը միավորելու ձգտման արգասիքն է: Այս ձգտումն ավելի խայտառակ գունավորումներով ի հայտ է գալիս նաև քաղաքականության, արվեստի, տնտեսության և այլնի մեջ:

1971թ. Վաշինգտոնի Գեղեցիկ արվեստների «Քենեդի» կենտրոնի բացման համար երկու հրեաներ՝ Բեռնշտայնը և Շվարցը գրել էին հանդիսավոր «Պատարագի» երաժշտությունը: «Տեր ողորմեա», «Փառք» և «Հավատամք» հնչելու պահին, մի խումբ երգիչներ ու պարողներ իրենց կասկածն արտահայտում էին այս կերպ.

Աստծո զորությամբ մենք տեր ու տնօրեն դարձանք,
Աստված մեզ խաչ շնորհեց,
Մենք այն թրի վերածեցինք՝
Տիրոջ խոսքերը տարածելու համար.
Եվ սուրբ պատվիրաններով զինված
Կանենք մենք այն, ինչ հաճո է մեզ, այո:
Հանգիստ թողեք մեզ, այլապես ջարդուփշուր կանենք ամեն
ինչ
Տվեք մեր ուզածը, թե չէ, մենք բռնությամբ այն կխլենք,
Երկնային լռությանը ձեր արհամարհանքով կպատասխանենք,
Եվ կգործենք միայն ու միայն բռնությամբ կատաղի:

Համերգին ներկա գտնվող «քրիստոնյա» միլիոնատերերը ծափահարում էին: Ծափահարում էին նաև խոր կտրվածքով շրջազգեստներ հագած լանջաբաց տիկնայք: Բացման արարողությունից հետո այս երաժշտությունը մտցվեց պարտադիր երգացանկ:

Թերևս կարող եմ հասկանալ Կարդենալի պես անձանց: Ճշմարտության նշույլներ կան համախմբվելու այն ցանկության մեջ, որ նա տեսնում է կոմունիստների գործունեությունում: Վերջիններս աղքատների շահերի պաշտպաններ են թվում Կարդենալին, շահեր, որոնց պաշտպանության գործը հարազատ է ամեն քրիստոնյայի:

Աստվածաշնչում Հոբն անվանվում է արդար մարդ: Իր «ընկերներին» նա այսպես է ներկայացնում կյանքի բարելավման ծրագիրը. «Որովհետև ես ազատում էի աղաղակող տնանկին, նաև որբին և անօգնականին: Եվ հայր էի աղքատներին, և ինձ անծանոթի դատը քննում էի: Եվ փշրում էի անիրավի ժանիքը և նրա ատամներից որսը խլում էի» (Հոբ 29.12, 16,17):

Այսպես կարտահայտվեր յուրաքանչյուր հեղափոխական: Հոբը շարունակում է. «Մի՞թե ես չեմ լացել օրը դժվարությամբ անցկացնողի համար, հոգիս չի՞ նեղացել աղքատի համար» (Հոբ 30.25):

«Եթե ես արհամարհել եմ իմ ծառայի կամ աղախնի իրավունքը՝ նրա հետ վիճելիս, այն ժամանակ ես ի՞նչ կանեմ, երբ ոտքի Աստված վեր կենա և երբ որ քննի, ես ի՞նչ պատասխան կտամ» (Հոբ 31.13,14):

Իսկական հավատացյալներն արդեն իսկ խոնարհաբար հետևում են Հոբի խորհուրդներին:

Կարդենալի այն հավաստիացումը, թե եկեղեցին ու պետությունը միշտ հաշտ ու համերաշխ են գործել, սուտ է: Օրինակ՝ տերիտորիալ բաժանման համար պատերազմն Ամերիկայում, որը հանգեցրեց ստրկության վերացմանը, որոշիչ ազդեցություն

ունեցել ճշմարիտ քրիստոնյա, կին գրող Հարիետ Բեքեր Սթոուի վրա «Ծեր Թոմի խրճիթը» վեպը գրելիս, որի մասին ինքը՝ գրողն ասել է. «Տերն է գրել այն իմ ձեռքով»:

Եկեղեցում, ծիսական արարողության ժամանակ այս կնոջ աչքին երևացել է սպիտակամորթ, անասնացած մի սրիկայի կողմից զառամյալ ստրուկին մահու չափ մտրակելու դաժան տեսիլքը, որից հետո էլ հենց գրվել է «Ծեր Թոմի խրճիթը»: Այս գիրքը հօդս ցնդեցրեց ստրկության կուռ ու հաստատուն հիմքերը:

Շարլ Սպրուժոնը, որն անցյալ դարի ամենանշանավոր բապտիստ քարոզիչն էր, նույնպես ստրկության կատաղի հակառակորդներից էր. «եթե ստրկությունն անարդարություն չի համարվում, ուրեմն ոչինչ այս աշխարհում անարդարացի չէ», - ասել է նա:

Կապիտալիստ և քրիստոնյա Վերբելֆոսն Ամերիկայի քաղաքացիական պատերազմից դեռ շատ առաջ, հաջողության էր հասել Բրիտանական կայսրությունում ստրկության վերացման ասպարեզում:

Քրիստոնյա Լինկոլնն իր «Ազատություն» հռչակագրով Ամերիկայի ստրուկներին ազատագրեց շահագործումից:

Լուության մատնելով այս փաստերը՝ «Ազատագրման աստվածաբանությունը» լայնորեն պրոպագանդվում և տարածվում է աշխարհի 1/3-ում: Եվ այս շարժման տեսաբաններն իրենց քրիստոնյա են համարում՝ ելնելով այն չփոթ ու խառնակ վիճակից, որ այժմ տիրում է եկեղեցու շարքերում:

Շատ հեղափոխական աստվածաբաններ միայն անվանապես են հարում կաթոլիկ եկեղեցուն, այնուամենայնիվ, մեծ ազդեցություն ունեն նվիրյալ հավատացյալների վրա: Նույն ձևով էլ ուղղափառ եկեղեցին միտում ունի հանուն կոմունիզմի օգտագործել այն հոգևոր ուժերը, որ եկեղեցու օգնությամբ են արթնացել ու համախմբվել:

Ազատագրության աստվածաբանները քարոզում են երկրային դրախտ, որի տակ պետք է հասկանալ կոմունիզմը, իսկ կապիտալիզմը նրա երդվյալ թշնամին է: Այդ իսկ պատճառով եկեղեցին չպետք է այլևս սպասի «երկնքից» իջնող Հիսուսին: Քանզի կոմունիզմի հաղթանակն ինքնըստինքյան հավասարազոր է Նրա Գալստյանը: Միայն այս կերպ կարելի է բացատրել այն հանգամանքը, որ Ռումինիայի, Չեխոսլովակիայի պես կոմունիստական երկրների կառավարություններն ատելով հանդերձ Աստծուն՝ հոգևորական դասին զգալի դրամական օգնություն են հատկացնում:

Ճիշտ է նաև այն, որ կաթոլիկ, ինչպես և ուղղափառ եկեղեցու շատ եպիսկոպոսներ, երկնչելով երկրային հալածանքներից,

նախընտրում են պատսպարվել հոգևոր կյանքի «խրամատներում» և նրանցից բոլորը չէ, որ Բաաղին են երկրպագում:

Ինչ վերաբերում է բողոքականներին, ապա Ամերիկայի «Գործողությունների կոմիտե»-ի 1966թ. փետրվարի 26-ի ժողովում Ռիխարդ Արենս անունով մեկն այսպես է հայտարարել. «Առ այսօր Եկեղեցիների Ազգային Խորհրդի դիրեկցիայի շարքերում մեզ հաջողվեց հայտնաբերել կոմունիստական ճակատին կամ առնվազն կոմունիստական հայացքներին հարող ավելի քան հարյուր անձանց, որոնք առաջնորդ դառնալու բոլոր հիմքերն ունեն: Ընդհանուր առմամբ հազարների միջից կարելի է ընտրել լիդերներ»: Եվ Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդը որոշեց դրամական միջոցներ հայթայթել հանուն Աֆրիկայի կոմունիստ մարտիկների:

Կաթոլիկ Գուստավո Գուտիերեսը գտնում է, որ «Եկեղեցին առանց վարանելու պետք է իր տեղը դրավի հեղափոխության շարքերում»: Իսկ «Քրիստոնյաները՝ հանուն սոցիալիզմի» միության հիմնադիր Դորոթեա Սոլլը կարծում է, որ «Քրիստոնեության պատմության մեջ մենք նոր էջ ենք բացում, և այդ էջը չի սկսվի առանց Մարքսի անվան հիշատակության»:

Այսպիսին է եկեղեցում տիրող վիճակը: Չպետք է մոռանալ Տիրոջ զգուշացումը ոչխարի հանդերձով հափշտակող գայլերի մասին: Խաբվելով նրանց կեցվածքից՝ մարդկության բարօրության հարցերով մտահոգված, մենք ակամա ընկնում ենք լարած թակարդը, մոռանալով, որ ամենաստոր մարդիկ էլ կարող են խոսել ճարտար ու պերճաշուք լեզվով:

«1907թ. գերմանացի սոցիալիստներն իրենց կոնգրեսը սկսեցին՝ թնդացնելով Լյութերի «Հզոր Պատվար» հիմնը, Աստված բառը փոխարինելով «սոցիալիստական Լիգա»-ով: Հեղափոխական խմբակներից մեկի անդամներն առաջարկեցին Հաղորդության մի նոր ձև, որի ժամանակ պաստորն ասելու էր. «Այս է իմ մարմինը հացով սարքած, որի համար հարուստը պարտական է աղքատին»: Մյուսները խոսում էին «Կոմունիստական Սուրբ Եկեղեցու» մասին, «Հավասարար Եկեղեցու մասին, որից դուրս փրկություն չկա»: Նրանց «Հայր Մեր»-ն այսպես է սում. «Պետք է վերացնել փող և սեփականություն բառերը», «Չպետք է լինեն ո՛չ տերեր, ո՛չ ծառաներ. Ամեն»:

Սատանան ծլույսի հրեշտակի կերպարանք է հագնում: Երբ կոմունիստներն իշխանության գլուխ անցան, աներևակայելի կոտորած եղավ, որը գերազանցում է անգամ Հիտլերի հրեշավոր սպանդը:

Եկեղեցու շատ անդամներ, որոնք իրենց կյանքի ինչ-որ շրջանում առնչվել էին կոմունիստների հետ, վերջիններիս զո-

հերը դարձան: Եթե կոմունիստներին հաջողվեր նվաճել աշխարհի 1/3-ը, ազատության աստվածաբանները նրանց գաղափարական հակառակորդների հետ մեկտեղ բանտ կնետվեին:

Կարդենալը խոստովանում է, որ «իր համար կոմունիզմը և Աստծո թագավորությունը նույն իմաստն ունեն»: Բայց կոմունիզմ բառն ինքնին շատ աղոտ ու տարտամ է և գործածելի է միայն այն ժամանակ, երբ խոսվում է տնտեսական մի այնպիսի համակարգի մասին, ուր գործում է «Յուրաքանչյուրին ըստ աշխատանքի, յուրաքանչյուրից ըստ ընդունակությունների» սկզբունքը: Չի լինի ո՛չ պետություն, ո՛չ աշխարհի մասնատում, ո՛չ դասակարգեր, իսկ արտադրության միջոցները կպատկանեն համայն մարդկությանը: Եթե այս ամենն իրագործելի է, այդ դեպքում ո՞ւր մնաց Աստծո գաղափարը, և ինչո՞ւ նման հասարակարգը համեմատել Աստծո Արքայության հետ: Սուրբ Գիրքը զգուշացնում է, որ. «Երկրի բոլոր ծայրերը կհիշեն և Տիրոջ մոտ կդառնան, հեթանոսների բոլոր ազգերը Նրա առաջ երկրպագություն կանեն» (Սաղ 22.27):

Աստծո Արքայությունում նույնպես կան թագավորություններ և իշխանություններ.

«Եվ թագավորությունն ու իշխանությունը և երկնքի տակ եղող բոլոր թագավորությունների մեծությունը պիտի տրվի Բարձրյալի սուրբերի ժողովրդին» (Դան 7.27):

Սա այն իշխանությունը չէ, որի գլուխ կանգնած կլինի որևէ քաղաքական կուսակցություն, այլ թագավորություն է՝ տրված Հիսուսի՝ մարդու Որդու կողմից (Մատթ 16.28): Իսկապես, այնտեղ այլևս չեն լինի այն չարիքները, որոնցից այսօր տառապում է մարդկությունը. պատերազմ, սով, ժանտախտ, օդի աղտոտություն, անարդարություն, շահագործում, ռասիզմ և այլն: Աստծո Արքայությունում կտիրի սերը, խաղաղությունը, ուրախությունը. ամեն մեկը կունենա իր տունը և իր պարտեզը (Հովհ 14.2):

Հայր Կարդենալը, որ իրեն մարգարե է կարծում, պետք է հիշեր Միքիայի մարգարեությունը. «Եվ վերջին օրերը պիտի լինի... ամեն մարդ իր որթի տակ պիտի բնակվի և իր թզենու տակ, և վախեցնող պիտի չլինի» (Միք 4.1,4):

Եսայի մարգարեն շարունակում է այս միտքը. «Եվ նրանք չեն շինի, որ ուրիշը բնակվի, նրանք չեն տնկի, որ ուրիշն ուտի» (Եսայի 65.22):

Իր գոյության ընդամենը 70 տարում կոմունիզմը միայն տանջանք, տեռոր, մահ ու ավեր է բերել հարյուր միլիոնավոր մարդկանց: Հնարավո՞ր է արդյոք, որ սիրո, բարության և արդարության հասարակությունը գործնականում արտահայտվի

կոմունիստական հասարակության ձևով: «Քրիստոնեական» կոմունիզմը անիրականանալի ուտոպիա է, շահագործման կատարյալ մղձավանջ: Հեղափոխության աստվածաբանությունն ակներևորեն անհեթեթություն է, հակասություն՝ անգամ տերմինաբանական առումով:

«Անհավատներին լծակից մի եղեք, որովհետև ի՞նչ կապ ունի արդարությունը անօրինության հետ, և կամ ի՞նչ ընդհանրություն լույսը՝ խավարի հետ, և կամ ի՞նչ միաբանություն Քրիստոսը՝ Բելիարի հետ. կամ ի՞նչ կապ ունի հավատացյալը անհավատի հետ» (Բ Կոր 6. 14-16):

Հիսուսն ասել է. «Քանզի չեք կարող միաժամանակ ծառայել Աստծուն և մամոնային»:

Այսօր դուք ընտրության առջև եք կանգնած: Եվ հավատքով լի ձեր սիրտը, կարծում եմ, ճիշտ ընտրություն կկատարի:

Գրքի հեղինակը հաճույքով կկարդա ձեր նամակները:
Ուղարկեք հետևյալ հասցեով.